



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ  
ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2010թ.

<b>Ներածություն.....</b>	<b>3</b>
<b>1. ՀՀ օրենսդրությունը խոսքի ազատության ոլորտում.....</b>	<b>5</b>
1.1. ՀՀ Սահմանադրություն.....	5
1.2. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք.....	9
1.3. ՀՀ հանրային հեռուստաընկերության գործունեության օրենսդրական կանոնակարգումը.....	15
1.4. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք.....	16
1.5. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք.....	19
1.6. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք.....	22
1.7. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք.....	23
1.8. Լրագրողների հավատարմագրմանը վերաբերող իրավական ակտեր.....	24
1.9. Խոսքի ազատության ոլորտում շրջանառության մեջ եղած օրինագծերը.....	27
<b>2. Խոսքի ազատության միջազգային չափանիշները.....</b>	<b>29</b>
2.1. Խոսքի ազատության բովանդակությունը.....	30
<b>3. Հայաստանի Հանրապետությունում լրագրողների իրավունքների խախտումների ընդհանուր վերլուծություն.....</b>	<b>38</b>
3.1. Լրագրողների նկատմամբ բռնությունները.....	38
3.2. Սպառնալիքները լրագրողների նկատմամբ.....	42
3.3. Լրագրողների իրավունքների այլ խախտումներ.....	43
3.4. Եզրակացություններ լրագրողների իրավունքների խախտումների բնույթի, շարժառիթների և պատճառների վերաբերյալ.....	45
<b>4. Մամուլում խոսքի ազատության սահմանափակման դեպքերի վերլուծությունը.....</b>	<b>46</b>
<b>5. Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում խոսքի ազատության ընդհանուր վիճակը.....</b>	<b>48</b>
5.1. Հեռուստատեսության և ռադիոյի ներկա վիճակը.....	49
5.2. Խոսքի ազատության սահմանափակման դեպքերը՝ կապված «Ա1+» հեռուստաընկերության հետ.....	50
5.3. «Ազատություն» ռադիոկայանի գործունեության խոչընդոտների վերլուծությունը.....	53
5.4. Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում խոսքի ազատության հետ կապված արժանահիշատակ մի շարք այլ դեպքերի վերլուծությունը.....	54
5.5. Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում իրավիճակի ամփոփում.....	56
<b>Եզրակացություն.....</b>	<b>58</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը յուրաքանչյուր հասարակության գերխնդիրն է, ցանկացած պետության գործունեության առաջնային ուղղությունը: Մարդու իրավունքները բազմաթիվ են ու բազմազան, և դրանց շարքում կարևորվում են սեփական կարծիքն ունենալու, ազատ արտահայտվելու, տեղեկություններ որոնելու և ստանալու իրավունքները (Խոսքի ազատության իրավունքը): Շատ հաճախ հենց հասարակությունում խոսքի ազատության մակարդակով են պայմանավորվում մարդու մյուս հիմնարար իրավունքների պաշտպանվածությունը և կենսագործման աստիճանը, ուստի աներկբա է խոսքի ազատության բացառիկ դերը և նշանակությունը երկրում ժողովրդավարական ինստիտուտներ կառուցելու, հասարակական և քաղաքական զարգացում ապահովելու գործում: Խոսքի ազատության դերը կրկնակի կարևոր է Հայաստանի Հանրապետության համար, քանի որ հասարակությունը, երկար տարիներ գտնվելով խիստ սահմանափակ խոսքի ազատություն ունեցող խորհրդային ռեժիմի պայմաններում, դեռ ամբողջովին չի պատկերացնում խոսքի ազատության հզոր ներուժը և դրա սահմանափակման քայքայիչ հետևանքները:

Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատության ուսումնասիրությունը շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն բուն խոսքի ազատության ոլորտում տիրող իրավիճակի բացահայտման համար, այլև ընդհանրապես երկրում ժողովրդավարական զարգացումների ընդհանուր շարժը պատկերացնելու, դրանից անհրաժեշտ եզրակացություններ կատարելու առումով: Խոսքի ազատության իրավունքի յուրահատկությունը կայանում է նրանում, որ դրա խախտումները շատ ակնհայտ են երևում հասարակական և միջազգային լայն շրջանակներին, իսկ Հայաստանի Հանրապետությունում միջազգային առաքելություն իրականացնող կազմակերպությունների զեկույցներում պարբերաբար խոսքի ազատության ցածր մակարդակի արձանագրումը ստվեր է գցում Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության վրա՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ:

Խոսքի ազատության ուսումնասիրության անհրաժեշտությունը ներկա փուլում ավելի հրատապ է դարձել, քանի որ առկա են խոսքի ազատության ոլորտում մեծ աղմուկ բարձրացրած դեպքեր, որոնց վերլուծությունը պարտադիր է՝ հասարակությանը իրավիճակը հստակ մեկնաբանելու և ստեղծված վիճակից դուրս գալու ճանապարհները մատնանշելու առումով: Խոսքը վերաբերում է հատկապես անաչառ լրատվություն մատուցող հեռուստաընկերություններին եթերից զրկելու փորձերին, որոնք մի քանի դեպքերում հաջողվել են:

Սույն զեկույցում իրականացվել է խոսքի ազատության համալիր ուսումնասիրություն: Հետազոտվել են խոսքի ազատության հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը՝ ուշադրություն հրավիրելով օրենսդրության մեջ տեղ գտած հակասություններին ու թերություններին, ինչպես նաև խոսքի ազատության վիճակը վատթարացնող դրույթներին: Չեկույցում անդրադարձ է կատարվել նաև լրագրողների իրավունքներին, կոնկրետ օրինակներով վերլուծվել են նրանց իրավունքների խախտումների բնույթը, բովանդակությունը, վեր են հանվել այդ խախտումների պատճառները: Չեկույցում առանձնակի հետազոտության են ենթարկվել Հայաստանի Հանրապետությունում գործող զանգվածային լրատվության միջոցները՝ հատկապես ուշադրություն դարձնելով հեռուստատեսության, ռադիոյի և մամուլի ոլորտում առկա խնդիրներին, խոսքի ազատության խախտման դեպքերին, դրանց լուծման ուղիներին և այլն: Չեկույցն անմասն չի մնացել խոսքի ազատության վերաբերյալ առկա միջազգային իրավական ակտերի, համապատասխան դատական նախադեպերի վերլուծությունից՝ փորձելով դրանք համադրել Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատության տիրող իրավիճակի հետ:

Ձեկույցում կատարված վերլուծությունից ելնելով՝ հիմնավորվել են մի շարք առաջարկներ, որոնց հետևողական իրականացումը մեծապես կարող է նպաստել խոսքի ազատության ընդհանուր վիճակի բարելավմանը:

# 1. ՀՀ օրենսդրությունը խոսքի ազատության ոլորտում

Խոսքի ազատության և դրան հարակից իրավունքների իրականացումն ապահովող իրավական ակտերը ՀՀ օրենսդրության մեջ պատկառելի տեղ են զբաղեցնում: Այս ոլորտի օրենսդրության պատմությունն, ըստ էության, սկսվում է անկախության առաջին տարիներից: Ինչպես խոսքի ազատության իրավունքը ինքնին, այնպես էլ այս ոլորտի օրենսդրությունը ՀՀ անկախության տարիների ծնունդ են:

Այսօր Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ խոսքի ազատության ոլորտի հարակից իրավունքները և դրանց առնչվող հարաբերությունները հիմնականում կարգավորված են հետևյալ իրավական ակտերում.

-Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն /հոդվածներ 27, 43, 83.2/.

-«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք /ընդունված է 2000 թվականի հոկտեմբերի 9-ին/.

-«Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք, /ընդունված է 2001 թվականի դեկտեմբերի 28-ին/.

- «Չանգվածային լրատվության մասին» օրենք /ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 13-ին/.

-«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք /ընդունված է 2003 թվականի սեպտեմբերի 23-ին/.

-Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք /ընդունված է 05.12.85 թ.-ին/

-ՀՀ քաղաքացիական օրենսգիրք /ընդունված է 1998 թվականի մայիսի 5-ին/.

-Քրեական օրենսգիրք /ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին/.

-Հայաստանի Հանրապետության ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգ /ընդունված է 2009 թվականի օգոստոսի 21-ին/.

-Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգ /ընդունված է 2004 թվականի մարտի 4-ին/:

## 1.1. ՀՀ Սահմանադրություն

Անշուշտ, վերը թվարկած իրավական ակտերի շարքում ամենագլխավորը Սահմանադրությունն է, քանզի վերջինիս նորմերը գործում են ուղղակիորեն, ունեն բարձրագույն իրավաբանական ուժ և ելակետային են այս ոլորտի ողջ օրենսդրության համար: Սահմանադրության համապատասխան նորմերն ըստ էության կանխորոշում, ուրվագծում են խոսքի ազատության իրավունքի սահմանները, բովանդակությունը, սահմանափակման հիմքերը, երաշխիքները և այլն:

Խոսքի ազատության սահմանադրական ընդհանուր երաշխիքների թվին կարելի է դասել իրավական, ժողովրդավարական պետության, իշխանությունների բաժանման, դատական իշխանության անկախության և մի շարք այլ սահմանադրական սկզբունքներ:

Սահմանադրությամբ հռչակված՝ կարծիքի և խոսքի ազատությունը երաշխավորվում է զանգվածային տեղեկատվության ազատությամբ և գրաքննության արգելքով:

Գրաքննության արգելքի ուղղակի ամրագրում, չնայած ոլորտի հասարակական կազմակերպությունների բազմաթիվ հորդորներին, տեղ չգտավ նաև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների տեքստում: Թեպետ շատ երկրների սահմանադրություններում ուղղակիորեն սահմանվում է՝ գրաքննությունը արգելվում է:

Սահմանադրական կարգավորումները 2005 թ-ի խմբագրությամբ Սահմանադրության մեջ ենթարկվեցին որոշակի փոփոխությունների: Մինչև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները խոսքի ազատության հետ կապված հարաբերությունները կարգավորված էին 24-րդ հոդվածում, 2005 թվականի խմբագրության մեջ դրանք զետեղված են 27-րդ

հողվածում, որի առաջին և երկրորդ մասերը ենթարկվել են զուտ խմբագրական փոփոխությունների, սակայն ավելացվել են նոր՝ 3-4-րդ մասեր, որոնք վերաբերում են լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատության, ինչպես նաև պետության կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայության և գործունեության երաշխավորմանը: Սահմանադրական այս նորամուծությունները պետք է դրական, առաջընթաց քայլ համարել:

Սահմանադրությամբ ամրագրված՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը /խոսքի ազատության իրավունքը/ հիմնարար նշանակություն ունի ինչպես ժողովրդավարության, այնպես էլ հասարակության և տնտեսության տարբեր ոլորտների և ընդհանրապես ողջ պետության բնականոն, կանխատեսելի զարգացման համար:

Սահմանադրության 27-րդ հոդվածում սահմանված են միմյանց հետ փոխկապվածության և համակարգային միասնության մեջ գտնվող իրավունքներ և ազատություններ, որոնք ուղղված են յուրաքանչյուր մարդու հավասար հնարավորությունների զարգացմանը՝ գաղափարների ու կարծիքների մրցակցության հիման վրա ինքնաարտահայտման և հաղորդակցման համար: Հոդվածում թվարկված բոլոր *ազատությունները՝ խոսքի, քարոզչության, իրազեկման, կարծիքի, համոզմունքի, տեղեկատվության, զանգվածային տեղեկատվության*, հավասարապես ունեն մեծ նշանակություն և չեն կարող կիրառվել՝ առանց հաշվի առնելու դրանց միջև համակարգային կապը:

27-րդ հոդվածով երաշխավորվում է խոսքի և կարծիքի ազատությունը, ինչը Սահմանադրությունը դիտում է որպես միասնական ազատություն, խոսքով իր մտքերն ազատորեն արտահայտելու միասնական և անքակտելի իրավունք:

Սահմանադրության այս հոդվածի հիմնական նպատակը նախևառաջ հասարակական-քաղաքական կարծիքի, խոսքի, տեղեկատվության և գաղափարների պաշտպանությունն է, թեև այս հոդվածում նշված ազատություններն անուղակիորեն պաշտպանում են նաև կրոնական, գիտական, գեղարվեստական միտքը, առևտրային տեղեկատվությունը, այդ թվում՝ գովազդը և մտավոր սեփականության իրավունքը:

Հոդվածը հատուկ սահմանում է «տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

2005 թվականի սահմանադրական փոփոխություններից խնդրո առարկային վերաբերող հարաբերությունները կարգավորող նորմերից պետք է առանձնացնել 83.2 հոդվածը, համաձայն որի. «Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»:

Սահմանադրական փոփոխությունների քննարկման փուլում հատկապես լրագրողական հանրության կողմից հնչեցվեցին առաջարկություններ, որպեսզի Սահմանադրությունը ձևավորման նմանատիպ կարգ սահմանի նաև Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի համար: Սակայն այդ առաջարկներն էլ տեղ չգտան Սահմանադրության նախագծի տեքստում: Այս համատեքստում հնչեցվող առաջարկությունների մյուս խումբը ենթադրում էր էլ ավելի արմատական փոփոխություններ, մասնավորապես՝ լրագրողական հանրության երաշխավորված ներկայացվածությունն այս հանձնաժողովներում, որը ևս վերջնական արդյունքում չընդունվեց:

Վերը նշված սահմանադրական փոփոխությունները տեղավորվում են անձնակենտրոն համակարգից դեպի հավասարակշռված քաղաքական համակարգի անցում կատարելու տրամաբանության մեջ, որը, սակայն, ավարտուն տեսք չստացավ /այդ մասին տես ստորև/: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» գործող օրենքը նախատեսում է երկու մարմիններ՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ (ՀՀՌԽ) և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (ՀՌԱՀ): Երկու մարմինների անդամներն էլ մինչև սահմանադրական փոփոխությունները նշանակվում էին Հանրապետության Նախագահի կողմից, հետևաբար մեծ էր այս մարմինների վրա իշխանությունների ազդեցությունը:

Քննարկվող հոդվածում զետեղված ձևակերպումները թերևս անհրաժեշտ, սակայն բավարար չեն ոլորտում առկա խնդիրների լուծման համար: Փոփոխությունների դրական ազդեցությունը կարող է և զրոյանալ այն պարագայում, երբ Հանրապետության Նախագահը և Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող ուժը կներկայացնեն նույն քաղաքական ուժը: Այդ դեպքում հարցի էության մեջ բովանդակային փոփոխություն չի կատարվում:

Սահմանադրության մակարդակում այս իրավունքների ամրագրման ծավալն ու բովանդակությունը համահունչ են ոլորտում միջազգային զարգացումներին, ՀՀ միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին, միջազգային փաստաթղթերում այս իրավունքի ամրագրման բովանդակությանը, սակայն առկա են որոշակի խնդիրներ՝ պայմանավորված այս իրավունքի սահմանափակման սահմանադրական հիմքերով:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության մեջ ամրագրված լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատության և բազմազանության սահմանումը ժողովրդավարության նախապայմաններ են, քանի որ տեղեկատվության միջոցները կենսական նշանակություն ունեն պետության՝ ժողովրդավարական մշակույթ ստեղծելու և զարգացնելու գործում: Ազատ և անկախ տեղեկատվության միջոցները հասարակության ժողովրդավարական հասունացման ցուցանիշ են:

Եթե այս իրավունքի սահմանադրական ամրագրման ծավալը, ձևը, բովանդակությունը խնդիրներ չեն առաջացնում, ապա նույնը չի կարելի ասել դրա սահմանափակման սահմանադրական հիմքերի մասին:

Սահմանադրության 43-րդ հոդվածը, այլ իրավունքների հետ միասին, հիմքեր է սահմանում նաև խոսքի ազատության, տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումների համար: Այս իրավունքը ևս կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Անսահման ազատությունը կարող է հանգեցնել ինչպես հանրության շահերի, այնպես էլ այլ անձանց իրավունքների հետ բախման: Նման հնարավոր բախումները կանխելու և տարբեր շահերն ու իրավունքները միմյանց հետ համաձայնեցնելու համար պետությունն իրավունք ունի սահմանափակել որոշ հիմնական իրավունքներ: Պետությունը նման միջամտությունն իրականացնում է հիմնական իրավունքների սահմանափակումների միջոցով: Հիմնական իրավունքների սահմանափակումները, սակայն, չեն կարող լինել առանց սահմանափակումների, քանի որ նման պարագայում հիմնական իրավունքը պարզապես կդադարի փաստացի գոյություն ունենալուց: Հենց այդ է պատճառը, որ ժամանակակից սահմանադրական իրավունքը հիմնական իրավունքների սահմանափակումների առջև դնում է խիստ պահանջներ.

ա) սահմանափակման են ենթակա ոչ թե բոլոր իրավունքները, այլ որոշակի խումբ իրավունքներ.

բ) այդ իրավունքները ենթակա են սահմանափակման միայն օրենքով.

գ) սահմանափակման ենթակա հիմնական իրավունքները կարող են սահմանափակվել միայն որոշակի, Սահմանադրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում.

դ) Սահմանադրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում ևս հիմնական իրավունքները չեն կարող սահմանափակվել ցանկացած ծավալով: Սահմանափակող օրենքի նկատմամբ սովորաբար Սահմանադրությունը դնում է որոշակի ընդհանուր պահանջներ, որոնք հաճախ կոչվում են սահմանափակումների սահմանափակումներ: Սահմանադրությունը դրանցով սահմանափակում է օրենսդիր կողմից հիմնական իրավունքների սահմանափակումները: Խոսքը հիմնականում համաչափության և իրավունքների էության անխախտելիության սկզբունքների մասին է:

Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ շատ հաճախ 43 հոդվածում թվարկված որոշ հիմքեր պարզապես կիրառելի չեն մարդուն իր կարծիքից հրաժարվելու կամ այն փոխելու արգելքի վրա: 43-րդ հոդվածի տառացի մեկնաբանության պարագայում կարող է սահմանադրական հիմք առաջանալ՝ մարդուն իր կարծիքը փոխելուն հարկադրելու համար, ասենք՝ հասարակական կարգի պահպանման, հանրության առողջությանն ու բարքերի, կամ այլոց պատվի և բարի համբավի պահպանման համար, այն պարագայում, երբ դա անելը գործնականում անհնար է: Չնայած այն հանգամանքին, որ 43 հոդվածում ընդունված տեխնիկան, այն է՝ սահմանափակման ենթակա բոլոր հիմնական իրավունքների համար սահմանել միասնական սահմանափակման հիմքեր, ընդունված է որոշ երկրների սահմանադրություններում (Լեհաստան, ԱՊՀ երկրների մեծամասնություն և այլն), այնուամենայնիվ, ավելի ճիշտ կլիներ սահմանափակման ենթակա յուրաքանչյուր հիմնական իրավունքի համար սահմանել միայն այդ իրավունքին ներհատուկ սահմանափակման հիմքեր: Այսպես են վարվել, մասնավորապես, Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Էստոնիայի և մի շարք այլ երկրների սահմանադրությունները: Յուրաքանչյուր իրավունքի սահմանափակման հիմքի նախատեսումը նույն հոդվածում հնարավորություն կտար սահմանափակել օրենսդիրի հայեցողությունը և հնարավոր կամայականությունները: Զանի որ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակման հիմնախնդիրը սահմանադրական կարգավորման ամենաէական հարցերից մեկն է, ապա այն պետք է հնարավորինս հստակ սահմանվի:

Սահմանադրությունը սահմանել է համաչափության սկզբունքի բաղադրատարրերից միայն մեկը՝ անհրաժեշտությունը, մինչդեռ այս սկզբունքի մյուս տարրերը, մասնավորապես՝ չափավորությունը, ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն:

Սահմանադրությունը չի անդրադարձել մարդու իրավունքների սահմանափակումներին ներկայացվող մեկ այլ կարևոր պահանջի՝ իրավունքի էության անխախտելիության սկզբունքին: Բոլոր հիմնական իրավունքների էությունն այն է, որ դրանք կարող են հակադրվել պետության այն գործողություններին, որոնք միջամտում են անհատի իրավական ոլորտին: Կախված հիմնական իրավունքով պաշտպանվող բարիքից և դրանց սահմանափակումների թույլատրելիությունից՝ հիմնական իրավունքի պաշտպանությունը երաշխավորված է տարբեր չափանիշներով: Այս սկզբունքի տարբերությունը համաչափության (կամ ծայրահեղության արգելքի) սկզբունքից այն է, որ վերջինս վերաբերում է միայն առանձին օրենսդրական միջոցառմանը, քանի որ պիտանիությունը, անհրաժեշտությունը և չափավորությունը կարող են ստուգվել միայն կոնկրետ օրենսդրական նպատակի դեպքում: Մակայն, եթե իրավական բարիքի նկատմամբ տարբեր օրենսդրական միջամտություններ են կատարվում, ապա հնարավոր է, որ թեև յուրաքանչյուր առանձին վերցրած միջոցառում ծայրահեղ չէ, սակայն դրանց հանրագումարը կարող է հիմնական իրավունքը՝ որպես մարդուն պաշտպանող իրավունք, անօգտագործելի դարձնել: Իրավունքի էության անխախտելիության սկզբունքը



միջոց է այն բանի դեմ, որ մեծաթիվ, առանձին-առանձին վերցրած դեպքերում համաչափ օրենսդրական միջամտությունների հետևանքով հիմնական իրավունքը չկորցնի իր փաստացի ուժը և չդառնա դատարկ իրավունք:

## **1.2. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք**

Հունիսի 10-ին ԱԺ-ն արտահերթ նիստով ընդունեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը՝ նոր խմբագրությամբ, որն ուժի մեջ է մտել 28.06.2010թ.-ին:

Օրենքը սահմանում է հեռուստառադիոընկերությունների (հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների) կարգավիճակը, կանոնակարգում է դրանց հիմնադրման, լիցենզավորման և դեկավարման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, հեռուստառադիոընկերությունների ստեղծման ու գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները: Մինչև Օրենքով ներմուծվող հիմնական փոփոխությունների վերլուծությանն անցնելը հարկ ենք համարում կանգ առնել նախկին խմբագրությամբ օրենքի որոշ դրույթների կապակցությամբ առկա խնդիրների վրա, որոնք, ըստ էության, պահպանվել են նաև նոր իրավակարգավորման պայմաններում, խոսքը հատկապես համապատասխան կարգավորումներում տեղ գտած անորոշությունների, անհստակությունների կամ մեխանիզմների անկատարության մասին է:

Մասնավորապես, նախկին խմբագրությամբ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի (09.10.2000թ. ՀՕ- 97) 17-րդ հոդվածով սահմանված էր.

«Մասնավոր հեռուստառադիոընկերությունների հիմնադիրներ չեն կարող լինել՝

- ա) պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները.
- բ) Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամները.
- գ) Ազգային հանձնաժողովի անդամները.
- դ) կուսակցությունները.
- ե) (17-րդ հոդվածի ե կետն ուժը կորցրել է 03.12.03 ՀՕ-69-Ն օրենք).
- զ) դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող անձինք.
- է) 18 տարին չլրացած քաղաքացիները»:

Թեև վերոգրյալ արգելքը պահպանվել է նաև նոր խմբագրությամբ ընդունված Օրենքում, սակայն գործնականում եզակի չեն այն դեպքերը, երբ այս կամ այն հեռուստաընկերությունն ասոցացվում է կոնկրետ կուսակցության հետ: Իրավաբանական առումով միզուցե այդ երկու կառույցները որևէ առնչություն չունեն, սակայն փաստացի և հասարակական ընկալման մեջ այս կամ այն հեռուստաընկերությունը նույնացվում է այս կամ այն կուսակցության տրիբունի հետ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ գործող օրենքի 18-րդ հոդվածով սահմանվում են հակամենաշնորհային երաշխիքների սպառնալիցան ուղղված դրույթներ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես նախկին, այնպես էլ նոր օրենքով ՀՌԱՀ-ն իրավական լիազորություն չունի՝ ուսումնասիրելու լիցենզավորվող հայտատուների սեփականատիրական կառուցվածքը, այս նորմի պահպանման նկատմամբ փաստացի հսկողության հնարավորությունը բացակայում է:

Օրենքի ամենախոցելի և ոլորտի կարգավորումներում խնդիրներ առաջացնող դրույթներն առնչվում են հեռուստաընկերությունների լիցենզավորման ընթացակարգին, պայմաններին, պահանջներին, որոնք առկա են եղել նաև նախկին իրավակարգավորման պայմաններում: Թեպետ Օրենքը կարգավորել է այս հարաբերությունները, սակայն գործնականում դրանք սուբյեկտիվիզմի, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք են տալիս:

Նման դրույթների, հասկացությունների թվին կարելի է դասել Օրենքի 49-51 հոդվածներում ամրագրված հետևյալ դրույթները.

- հեռուստաընկերության և (կամ) ռադիոընկերության բիզնես ծրագիրը և դրա հիմնավորվածությունը.

- դիմողի՝ բազմակարծությունը խթանելու կարողությունը.

- ֆինանսական հնարավորությունները.

- դիմումում նշված տվյալները չեն համապատասխանում իրականությանը.

-բացակայում են հեռուստառադիոհաղորդումների կազմակերպման տեխնիկական հնարավորությունները կամ հայտարարված տեխնիկական հնարավորությունները բավարար չեն.

- ֆինանսավորման աղբյուրները փաստաթղթային առումով հիմնավորված չեն:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում անհրաժեշտ են այնպիսի փոփոխություններ, որոնք.

1. կհստակեցնեն լիցենզավորման համար անցկացվող մրցույթների ընթացակարգերը.

2. ընտրության չափանիշները պետք է ներառեն բազմակարծության շահերը, լիցենզավորման գործընթացը կդարձնեն ավելի թափանցիկ՝ կիրառելով ավելի շատ քանակական, հետևաբար՝ գնահատման սուբյեկտիվիզմը բացառող կամ նվազագույնի հասցնող, հանրության կողմից վերահսկելի հենանիշեր.

3. կսահմանեն հստակ դրույթներ շուկայաբաժնի վերաբերյալ.

4. ՀՌԱՀ-ին պետք է լիազորություն վերապահվի ստուգել կազմակերպությունները՝ բացառելու հեռարձակման շուկայի մենաշնորհացումը.

5. ՀՌԱՀ-ին լիազորություն կվերապահվի ստուգել հեռուստատեսության և կուսակցության փոխհարաբերությունները՝ փաստացի կուսակցության հեռուստաընկերություն ունենալու դեպքերը բացառելու նկատառումով:

2005 թվականին խմբագրված Սահմանադրությամբ մասնավոր և հանրային լրատվամիջոցները կարգավորող մարմինների անդամների ընտրության մեխանիզմի փոփոխություններ կատարվեցին: Հոդված 83.2-ը ենթադրում էր «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի փոփոխություն, համաձայն որի՝ անդամների կեսը պետք է ընտրվեն Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը պետք է նշանակվեն Հանրապետության Նախագահի կողմից:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում Սահմանադրության 83.2 հոդվածից բխող համապատասխան փոփոխություններ կատարվեցին միայն 2007 թվականի փետրվարի 26-ին: Այս փոփոխություններով Օրենքում ներմուծվեց դրույթ հետևյալ խմբագրությամբ. «Ազգային հանձնաժողովը անկախ կարգավորող պետական մարմին է, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով, բացառությամբ առաջին կազմի»: 2008 թվականի ապրիլի 24-ին վերը նշված դրույթը կրկին փոփոխությունների ենթարկվեց, որի արդյունքում այն շարադրվեց հետևյալ բովանդակությամբ.

«Ազգային հանձնաժողովը անկախ կարգավորող պետական մարմին է, որի անդամների կեսը մրցույթային կարգով վեց տարի ժամկետով ընտրվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը վեց տարի ժամկետով նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից, բացառությամբ առաջին կազմի: Առաջին կազմի նշանակման ժամկետները սահմանված են սույն օրենքի անցումային դրույթներով:

Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում թափուր տեղում նշանակումը կամ ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.2-րդ հոդվածին համապատասխան՝ ապահովելով

Ազգային հանձնաժողովի անդամների կեսի ընտրությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, իսկ մյուս կեսի նշանակումը Հանրապետության Նախագահի կողմից»:

Նոր խմբագրությամբ ընդունված օրենքում պահպանվել են Ազգային հանձնաժողովի կազմավորման կարգին վերաբերող դրույթները: Այս փոփոխություններն ըստ էության չլուծեցին առկա խնդիրը: Նախորդ տարվա դեկտեմբերի 9-ին Ազգային ժողովում կազմակերպվեց Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների ընտրություն: Հանձնաժողովի 4 տեղերի համար դիմել էին 8 անձինք: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հանձնաժողովի անդամ դառնալու համար չէին դիմել հեռուստատեսության ոլորտում հայտնի դեմքեր ու մասնագետներ: Պասիվ կեցվածք էին ընդունել նաև ոլորտում գործող հասարակական կազմակերպությունները: Այս հանգամանքը կարելի է բացատրել հասարակության մեջ առկա անվստահությամբ՝ ՀՌԱՀ-ում անկախ մասնագիտական գործունեություն ծավալելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքով, որ նույն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից շատերը դեմ էին ՀՌԱՀ-ի անդամների՝ ԱԺ կողմից ընտրության այն կարգին, որով քաղաքական մեծամասնությունը հնարավորություն է ստանում ընտրելու իր ցանկացած թեկնածուին: Այսինքն՝ հասարակության ազդեցությունն ընտրության վրա չնչին էր (կարգում ամրագրված է միայն ոլորտում գործող ՀԿ-ների երաշխավորության դրույթը): Դա երևաց նաև դեկտեմբերին անցկացված ընտրության ժամանակ: Քաղաքական մեծամասնությունը մրցույթային հանձնաժողովի երաշխավորած 7 թեկնածուից ընտրեց հենց այն 4-ին, որոնց մասին մամուլը վաղօրոք գրել էր, ընդ որում՝ հենց չընտրված 3-ն էին, որ լրագրության ոլորտից էին, իսկ «ընտրվածներից» մեկն էլ ԱԺ-ում իր ելույթում բացահայտ խոստովանել էր, թե ինքը ոլորտից բան չի հասկանում, սակայն ընտրվելուց հետո կուսումնասիրի այն:

Հարկ է նշել, որ սահմանադրական համապատասխան փոփոխություններն անհրաժեշտ, սակայն բավարար չեղան առկա խնդիրների լուծման համար: Անհրաժեշտ են, եթե ոչ սահմանադրական, ապա օրենսդրական համապատասխան փոփոխություններ, որոնք պետք է նպատակ ունենան կազմավորելու այնպիսի հանձնաժողով, որը կարտացույցի երկրի քաղաքական-հասարակական բազմազանությունը և կապահովի ՀՌԱՀ-ում ՀԿ-ների և մասնագիտական ընկերակցությունների ներկայացուցիչների մասնակցությունը:

Հունիսի 10-ին ԱԺ-ի կողմից նոր խմբագրությամբ ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի նախագիծը երկար ժամանակ գտնվում էր ոչ միայն հայաստանյան քաղաքական ու հասարակական քննարկումների կիզակետում, այլ նաև՝ միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում:

ՀՀ-ում Եվրամիության պատվիրակությունը Հայաստանում ԵՄ անդամ երկրների դիվանագիտական առաքելությունների ղեկավարների անունից հունիսի 10-ին ողջունեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում տեղ գտած որոշ դրական փոփոխությունները՝ պնդելով, թե դրանք համահունչ են քաղաքացիական հասարակության և ԵԱՀԿ Մամուլի ազատության հարցերով ներկայացուցչի առաջարկներին: Մինչդեռ լրագրողական կազմակերպությունները քննադատել էին այդ փոփոխությունները, ինչն հետո արեցին նաև ԵԱՀԿ Մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը, Human Rights Watch-ն ու ԵԱՀԿ-ում ԱՄՆ դեսպանը:

Նյու Յորքում տեղակայված Human Rights Watch հեղինակավոր իրավապաշտպան կազմակերպությունն հունիսի 15-ին հայտարարել է, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրինագիծը բացասական ազդեցություն կունենա Հայաստանում լրատվամիջոցների բազմակարծության և տեղեկատվության ազատության վրա: Human Rights Watch-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժանմունքի ղեկավար Հոլի Քարթները մասնավորապես նշել է, որ առաջնային մտահոգությունն այն է, թե այս փոփոխություններով Հայաստանում հեռուստատեսության թիվը 22-ից կրճատվելու է 18-ի, և կարող են տուժել հատկապես նոր հեռուստարկերությունները, քանի որ, օրինագծի համաձայն, արտոնագրման մրցույթի ժամանակ առավելությունը տրվելու է արդեն գործող կամ առնվազն 3 տարի հեռարձակման փորձ ունեցող ընկերություններին: ԵԱՀԿ Մամուլի ազատության

հարցերով ներկայացուցիչ Դունյա Միյաթովիչը հանդես է եկել հայտարարությամբ, որում նշված է, թե արված փոփոխությունները չեն նպաստել հեռարձակման բազմակարծությանը և հաշվի չեն առնվել այն առաջարկները, որոնք ունեն կարևոր նշանակություն՝ թվային հեռարձակման հարթ անցման համար: Միյաթովիչը թվարկել է օրենքի թերությունները՝ հեռարձակող ալիքների սահմանափակություն, հստակ կանոնների բացակայություն արբանյակային, բջջային և օնլայն հեռարձակման արտոնագրման համար, հեռարձակման բոլոր ձևերի արտոնագրումը ՀՌ-ԱՀ-ին վերապահելը, իշխանություններին հնարավորություն ընձեռելը՝ դատարանի միջոցով դադարեցնել հեռարձակումը օրենքի այնպիսի դրույթների հիման վրա, որոնք պարունակում են ՋԼՄ-ների ազատության անպատեհ սահմանափակումներ և այլն: ԵԱՀԿ Մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը նաև նշել է. «Նոր տեխնոլոգիաները, այդ թվում՝ թվային հեռարձակումը, պետք է կառավարությունների կողմից օգտագործվեն՝ ամրապնդելու լրատվամիջոցների բազմակարծությունը»:

ԵԱՀԿ փորձագետ Անդրեյ Ռիխտերի դիտողություններում մասնավորապես ասվում էր. «Մենք տեղյակ չենք ժամանակակից ժողովրդավարական աշխարհում որևէ այլ երկրի մասին, որտեղ գրպարտությունը կարող է հանգեցնել վարչական մարմնի որոշմամբ հեռարձակողի գործունեության դադարեցմանը: Նույնը վերաբերում է այլ անձանց այնպիսի իրավունքների խախտմանը, ինչպիսիք են ոտնձգությունները նրանց անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ կամ հեղինակային իրավունքի խախտումները: Սրանք թույլ հիմքեր են հեռարձակման լիցենզիայի գործողության ժամկետի դադարեցման համար: Դրույթը, որը թույլատրում է լիցենզիայի ժամկետի դադարեցում՝ «քրեորեն պատժելի արարքների կամ օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը», չափազանց լայն է և հեռարձակողների համար մահապատիժ նախատեսող հանցագործության հավասար է դարձնում այնպիսի իրավախախտումների կոչերը, ինչպիսին մեքենան անթույլատրելի տեղում կանգնեցնելն է: Անդրադառնալով օրենքի նոր ձևակերպմանը՝ «Ազգային հանձնաժողովի որոշումը պետք է լինի պատշաճ հիմնավորված ու պատճառաբանված», ԵԱՀԿ փորձագետը նշում է. «Կարծում ենք, որ սա նշանակում է, որ Ազգային հանձնաժողովը պետք է պատշաճորեն հիմնավորի և պատճառաբանի լիցենզիայի տրամադրման և լիցենզիայի մերժման մասին իր որոշումները: Եթե դա այդպես է, սա շատ ողջունելի փոփոխություն է և համապատասխանում է լիցենզավորմանը վերաբերող ընդդեմ Հայաստանի հայտնի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմանը»: Սակայն դա այդպես չէ մերժման մասին որոշումները չեն հիմնավորվելու:

ԵԱՀԿ փորձագետը նշել է, թե իրենց մի շարք հիմնական առաջարկներ հաշվի չեն առնվել, ընդհանրապես անտեսվել են ու կապվել «սպազա օրենքի» կամ «սպազա փոփոխությունների հետ»: Դրանցից են. «Հստակ տարբերակում մտցնել արբանյակային, բջջային, ինտերնետային հեռարձակման և ոչ գծային տեսաձայնային ծառայությունների կարգավորման մասով: Դնել թվային հեռարձակման ոչ պետական օպերատորների ստեղծման իրավական հիմքերը: Նախատեսել կոնկրետ դրույթներ հանրապետական ու մայրաքաղաքային մուլտիպլեքսերի ռադիոժրագրերի թվի և թեմատիկ ուղղությունների վերաբերյալ: Փոխել Հանրային հեռուստատեսության և ռադիոյի ու ՀՌ-ԱՀ-ի՝ պետբյուջեից ֆինանսավորման համակարգը՝ ապահովելու պետությունից նրանց անկախության ավտոմատ երաշխիքը: Բարեփոխել Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի անդամների ընտրության ու նշանակման կարգը՝ ապահովելու բազմակարծիք հանրային հեռարձակում»:

Անդրեյ Ռիխտերը նաև ընդգծել է, թե իր առաջարկները համակարգային են, և դրանցից որոշներն առանձնացնելն իմաստ չունի. «Օրինակ՝ իմաստ չունի հանրային հեռարձակողին դնել Խորհրդի բացառիկ իրավագործության ներքո (մեր առաջարկությանը համապատասխան), եթե Խորհուրդն ինքը չբարեփոխվի ժողովրդավարական եղանակով: Հետևաբար, մենք հորդորում ենք իշխանություններին քննության առնել այս բոլոր հարցերը միասին»: Եվ արվել է առաջարկ. «Ընդունել քաղաքականության փաստաթուղթ, որը կնախատեսի հստակ ու մոտ ապագայում «Հեռարձակման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու ժամանակացույց: Հրավիրել աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկված կլինեն

լրագրողական հասարակական կազմակերպություններ, խորհրդարանականներ և այլ շահագրգիռ կողմեր ու աշխատել օրինագծի հիմնավոր լրամշակման վրա»:

Օրենքի նախագծի վերաբերյալ իրենց համատեղ մեկնաբանություններն են նեկայացրել նաև Երևանի մամուլի ակումբ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, Լրատվամիջոցների աջակցության «Ինտերնյուս» ՀԿ, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, «Բաց հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունները:

Այս կազմակերպությունները մասնավորապես նշում են.

- Նախագծում պարզ չեն սահմանվում և տարանջատվում թվային հեռարձակում իրականացնող կամ հեռարձակում ապահովող սուբյեկտների կարգավիճակը, նրանց գործունեության կարգավորումը, ինչպես նաև՝ այդ սուբյեկտների միջև ծագող հարաբերությունների կարգավորման մեխանիզմները: Մասնավորապես, հայտնի է, որ թվայնացումն իր հետ բերում է նոր դերակատարներ, օրինակ՝ ցանցի օպերատոր, մուլտիպլեքս օպերատոր և բովանդակություն ապահովող հեռուստառադիոընկերություն, ընդ որում, առաջին երկուսի գործառույթները կարող են իրականացվել միաժամանակ մեկ անձի կողմից:

Բացի այդ, նախագծի հեղինակները խուսափել են սահմանել պետությունից բացի հեռարձակում ապահովող «ցանցային օպերատոր» հասկացությունը: Նշված չէ նաև, թե հետագայում, որ մարմինն է լիազորված լինելու կարգավորելու այդ օպերատորների գործունեությունը:

- Համաձայն նախագծի 7-րդ հոդվածի առաջին կետի. «Հայաստանի Հանրապետությունում հեռուստառադիոձրագրերի հեռարձակումն իրականացվում է լիցենզիայի հիման վրա»: Այս առումով անհասկանալի է, թե այս նորմը վերոհիշյալ թվային հեռարձակումն ապահովող սուբյեկտներից, որի վրա է տարածվում (այս հարցն առավել արդիական է դառնալու ամբողջապես թվային հեռարձակման անցնելուց հետո): Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն. «Հեռուստառադիոհեռարձակումը՝ էլեկտրամագնիսական ալիքների միջոցով պատկերների և (կամ) հնչյունների կամ դրանց պայմանանշանների այնպիսի տարածում հաղորդագծով (ներառյալ՝ կաբելային (մալուխային) կապով) կամ առանց հաղորդագծի...»: Թվային հեռարձակման պայմաններում ենթադրվում է, որ վերոհիշյալ գործառույթը պետք է իրականացվի ոչ թե հեռուստառադիոընկերության, այսինքն՝ բովանդակությունն ապահովող սուբյեկտի, այլ՝ հենց մուլտիպլեքսի կողմից:

Այս առումով նախագծում, ինչպես նաև Ռ-ադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգում հստակեցված և տարանջատված չեն թվային հեռարձակման հիմնական մասնակիցների գործառույթները, ավելին՝ դրանք շփոթության տեղիք են տալիս: Բացի այդ, նախագծում կոնկրետ սահմանված չեն մուլտիպլեքսների, ցանցային օպերատորների և հեռուստառադիոընկերությունների լիցենզավորման սկզբունքները:

- Նախագծի 47-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում թվային ցանցի միջոցով հեռարձակում են իրականացնելու 18 հեռուստաընկերություններ: Պարզ չէ, թե ինչով է պայմանավորված և ինչպես է հիմնավորվում հեռուստառադիոընկերությունների թվի կրճատումը:

Նման թվի սահմանումը կարող է հիմնավորված լինել միայն հեռարձակման հաճախականությունների աուդիտի արդյունքներով: Օբյեկտիվ և թափանցիկ աուդիտի անցկացման անհրաժեշտության մասին նշել են նաև մի շարք միջազգային փորձագետներ: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների՝ ՀՀ-ում անցկացվել է նման աուդիտ: Սակայն մինչ այժմ վերոնշյալ աուդիտի արդյունքները հրապարակված չեն, և հասկանալի չէ դրանց չհրապարակելու պատճառը:

Հատկանշական է ԵԽ նախարարների կոմիտեի (2003)9 Հանձնարարականը, որում նշված է, որ թվային հեռարձակման համակարգին անցումը չպետք է կիրառվի բազմազանության աստիճանը նվազեցնելու հաշվին:

- Չնայած Ռ-ադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգում նկարագրվում են թվային հեռարձակման ազդանշանի մի քանի ստանդարտներ, այնուամենայնիվ, դրանում չի նշվում, թե կոնկրետ որ ստանդարտն(ներ) է(են)

կիրառվելու ՀՀ-ում: Ուստի, այդ ստանդարտի(ների) ընտրությունը պետք է հստակեցվի, ինչպես նաև պատշաճ կերպով հիմնավորվի:

- Նախագծով պարզ սահմանված չէ այն անձանց շրջանակը, ովքեր կարող են իրականացնել արբանյակային հեռարձակում: Այնուամենայնիվ, եթե վերլուծության ենթարկենք նախագիծը, կստանանք հետևյալ պատկերը. ըստ նախագծի 3-րդ հոդվածի. «Հեռուստառադիոընկերություն կարող է համարվել այն իրավաբանական անձը, որը հեռարձակում կամ վերահեռարձակում է հեռուստառադիոծրագրեր և պատասխանատվություն է կրում օրենքի և իրավական այլ ակտերի կատարման համար»: Նույն նախագծի, ինչպես նաև գործող օրենսդրության համաձայն հեռարձակում կամ վերահեռարձակում կարող է իրականացվել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում: Փաստորեն, նախագծի 23-րդ հոդվածից բխում է, որ արբանյակային հեռարձակումը կարող են իրականացնել միայն լիցենզավորված հեռուստառադիոընկերությունները, ինչն իրականում խոսքի ազատության սահմանափակում է: Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ արբանյակային հեռարձակում կարող է իրականացնել ցանկացած մասնավոր ընկերություն, և դրա համար անհրաժեշտ է սահմանել հեռարձակման իրավունքի տրամադրման պարզ ընթացակարգ:

- Նախագծով հանվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ գործող օրենքի 48-րդ հոդվածով ՀՌԱՀ-ին ներկայացվող պահանջը, որի համաձայն ՀՌԱՀ-ը. «Ըստ անհրաժեշտության, բայց տարին առնվազն մեկ անգամ, հրապարակում է հաճախությունների ամբողջական ցանկը»: Այս նորմը պետք է պահպանվի, քանզի դրա բացակայությամբ հեռարձակողների լիցենզավորման պայմանները, մուլտիպլեքսների թիվը, հեռարձակման ցանցի իրական հնարավորությունները մնում են չբացահայտված, և դրա հրապարակայնացումը կախված է ՀՌԱՀ-ի կամ այլ պետական մարմինների հայեցողությունից:

- Համաձայն նախագծի անցումային դրույթների. «2015 թվականի հունվարի 1-ից իրավաբանական անձանց կողմից թվային հեռարձակման մասնավոր ցանց ստեղծելու համար օրենքով կարող են սահմանվել մուլտիպլեքսորի լիցենզավորման կարգն ու պայմանները, որն իրականացվում է Ազգային հանձնաժողովի կողմից»: Նման ձևակերպումն արդարացված չէ, քանզի մրցույթների հայտարարումը ոչ թե պետք է թողնվի ՀՌԱՀ-ի հայեցողությանը, այլ սահմանվի իբրև նրա ուղղակի պարտականություն: Ուստի, առաջարկում ենք նախագծով նախատեսել, որ հեռարձակման հայտերի առկայության դեպքում ազատ հաճախականությունների համար անցկացվեն մրցույթներ:

- Նախագծում կամ Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգում նշված չեն նույն հայեցակարգով նախատեսված սոցիալական փաթեթի ձևավորման սկզբունքները: Մասնավորապես, հասկանալի չէ, թե արդյոք թվային հեռարձակման ցանցում ներգրավված 18 հեռուստառադիոընկերությունները հանդիսանում են սոցիալական փաթեթի մաս, կամ՝ արդյո՞ք դրանք մնալու են այդ փաթեթում նաև 2015 թվականից հետո: Եթե ոչ, ապա ինչպե՞ս է ձևավորվելու այդ փաթեթը 2015 թվականից հետո: Մեր պատկերացմամբ, հաշվի առնելով, որ 2015 թ-ից հետո շուկա կարող են մուտք գործել նոր մասնավոր և հանրային հեռուստառադիոընկեր, ապա անհրաժեշտ կլինի ձևավորել նոր սոցիալական փաթեթ, որի ձևավորման կարգը պետք է նկարագրվի նախագծում կամ այլ պաշտոնական փաստաթղթերում (օրինակ՝ Կառավարության որոշում, Հայեցակարգ և այլն):

- Անհասկանալի է, թե ինչպես են համադրվում Էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված «Տեխնոլոգիական զարգացում» ՓԲԸ-ի ուսումնասիրության արդյունքները և օրինագծով սահմանվող հեռուստառադիոընկերությունների թեմատիկ ուղղվածությունները: Ընդհանուր առմամբ, նման թեմատիկ ուղղվածությունների սահմանումը պահանջում է շատ ավելի խորը հետազոտություններ, որոնք օրինագծի հեղինակների կողմից ներկայացված չեն: Հետևաբար, օրինագծի համապատասխան դրույթները հիմնավորված չեն կարող համարվել:

- Օրինագծից հստակ չի երևում՝ այն կարգավորում է միայն թվայնացման հետ կապված գործընթացները, թե՞ նպատակ ունի բարելավել հեռարձակումը կարգավորող օրենսդրությունն ընդհանրապես: Եթե առաջինն է, ապա պարզ չէ, օրինակ, թե հեռարձակման թվայնացման ինչ առնչություն ունի հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակվող գովազդին ներկայացվող սահմանափակումների վերանայումը: Իսկ եթե երկրորդն է, ապա

անհասկանալի է, թե ինչու օրինագիծը չի անդրադառնում առավել կարևոր խնդիրների, ինչպիսիք են, օրինակ, ՀՌ-ԱՀ-ի և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անկախության բարձրացումը:

- Թվայնացման գործընթացն իր մեջ պարունակում է բազմազանության համար որոշ վտանգներ: Ենթադրվում է, որ դրան զուգահեռ պետք է բարձրանա հեռարձակումը կարգավորող մարմնի դերը և համապատասխանաբար՝ ամրապնդվեն դրա անկախության երաշխիքները: Նախագծում չեն սահմանվում լրացուցիչ մեխանիզմներ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անկախությունն ապահովելու համար: ՀՌ-ԱՀ-ի անդամների նշանակման ներկայիս կարգի համաձայն նրանց կեսը նշանակվում է ՀՀ Նախագահի, իսկ մյուս կեսն ընտրվում է խորհրդարանական մեծամասնության կողմից, ինչը չի կարող ապահովել ՀՌ-ԱՀ-ի կազմի հասարակական բազմազանությունը: Վերջինիս անհրաժեշտության մասին նշվել է Հայաստանին վերաբերող մի շարք միջազգային փաստաթղթերում, այդ թվում ԵԽԽՎ 1532(2007), 1609 (2008), 1620 (2008), 1643 (2008), 1677 (2009) բանաձևերում:

- Ենթադրվում է, որ ՀՀ իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 2008 թվականի հունիսի 17-ի որոշմամբ հաստատված «Ա1+» հեռուստաընկերության հիմնադրի՝ «Մելտեքս» ՍՊԸ-ի՝ տեղեկատվություն և գաղափարներ տարածելու իրավունքի խախտումը վերականգնելու համար: Սակայն մինչ այսօր այդպիսի քայլեր չեն ձեռնարկվել, տվյալ նախագծում նման դրույթները կրկին բացակայում են: Հակառակը, նախատեսելով հեռարձակման լիցենզիաների որոշակի քանակ՝ նախագիծն ավելի է սահմանափակում «Ա1+» հեռուստաընկերության կողմից հեռարձակման լիցենզիա ստանալու հավանականությունը:

### **1.3. ՀՀ հանրային հեռուստաընկերության գործունեության օրենսդրական կանոնակարգումը**

2001թ.-ին Հայաստանի ազգային հեռուստատեսությունը և ազգային ռադիոն վերակազմավորվեց Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության: Այն առաջին հանրային հեռարձակողն էր ԱՊՀ տարածաշրջանում, որը ֆինանսավորվում էր պետական հատկացումներից և գովազդից ստացված եկամուտներով: Վերակազմավորումից հետո Հ1-ը մնում է հեռարձակման ամենամեծ տիրույթ ունեցող հեռուստաալիքը: Նկատի ունենալով հանրային կարծիքի վրա ունեցած նրա մեծ ազդեցությունը՝ խնդրահարույց է այն, որ նրա խորհրդի 5 անդամներն էլ նշանակվում են Հանրապետության Նախագահի կողմից:

Խորհրդի ձևավորման կարգը փորձ էր արվում փոփոխել 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների ժամանակ: Ինչպես արդեն նշվեց, առաջարկվում էր փոխել խորհրդի ձևավորման կարգը՝ բացառելով Հանրապետության Նախագահի՝ այդ հարցում ունեցած մենաշնորհը: Նման առաջարկություններ էր ներկայացվում ոլորտի հասարակական կազմակերպությունների կողմից: Փոփոխությունների բովանդակությունը հանգում էր Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կազմի ձևավորմանը և հավասարակշռված խորհուրդ ունենալու նպատակ էր հետապնդում:

2008 թվականի նախագահական ընտրություններից հետո Հանրային հեռուստաընկերության եթերում նկատվող դրական տեղաշարժերով հանդերձ, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի՝ բացառապես Հանրապետության Նախագահի կողմից կազմավորվելը, շարունակում է մնալ հանրային հեռարձակողի լրատվության մեջ անաչառության և բազմազանության բացակայության հիմնական պատճառներից մեկը, հանգամանք, որը հաստատվում է քաղաքացիական հասարակության կողմից վերջերս իրականացված մոնիթորինգային նախաձեռնությամբ:

ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է Հանրային հեռուստառադիոընկերության կողմից պարբերական ինքնադիտարկում անցկացնելու պահանջը, որը մասնավորապես կարող է վերաբերել, օրինակ, տարբեր քաղաքական կուսակցությունների համար եթերի

մատչելիությանը և նրանց գործունեության լուսաբանման, կամ գովազդի սահմանափակումներին:

Այնուամենայնիվ, Խորհուրդը պետք է խորհրդանշի և ապահովի անկախություն՝ քաղաքական ուժերից: Նախագահի կողմից նշանակված Խորհուրդը կարող է բերել դրա աշխատանքներում իշխանությունների միջամտության:

Անկախ ՀՀՌԽ-ի նոր գործառույթից բխում է, որ Խորհրդի անդամները չպետք է ընտրվեն մեկ քաղաքական ուժի կամ միայն քաղաքական ուժերի կողմից:

Հանրային հեռարձակողի խորհրդի ընտրության չափանիշները պետք է ապահովեն ինչպես թափանցիկություն և արհեստավարժության բարձր մակարդակ, այնպես էլ՝ հայացքների բազմազանություն:

Հանրային հեռարձակողի բուն խնդիրներն իրագործելու համար Խորհուրդը պետք է անցկացնի տարբեր կուսակցությունների համար եթերի մատչելիության և դրանց գործունեության լուսաբանման շարունակական դիտարկում, որի արդյունքները պետք է հրապարակվեն: Խորհրդի ձևավորման կարգում, կարծում ենք, սահմանադրական արգելքներ չկան՝ ոլորտի հասարակական կազմակերպություններին ու ստեղծագործական միավորումներին մասնակից դարձնելու առումով: Մասնավորապես վերջնական նշանակումը թողնելով Հանրապետության Նախագահին՝ կարելի է սահմանել, որ Նախագահը թեկնածուներին նշանակում է հասարակական կազմակերպությունների և ստեղծագործական միավորումների կողմից առաջադրված թեկնածուների կազմից:

2009 թվականի ապրիլի 28-ի Օրենքով որոշակի փոփոխություններ կատարվեցին ՀՀՌԽ-ի ձևավորման կարգում, որի համաձայն Հանրապետության Նախագահը մրցույթով է նշանակում Խորհրդի անդամներին: Ամրագրված է անդամներից առնվազն մեկի կին լինելու պահանջը, սակայն իրական բազմակարծություն ապահովելու նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ էր հասարակական մասնակցության բազմազանությունն ապահովող ցենզ սահմանել:

ՀՀՌԽ գործունեության նկատմամբ ձևավորված անվստահության մթնոլորտի մասին է խոսում նաև դեռևս 2005 թվականի փետրվարի 3-ի մի քանի հասարակական կազմակերպությունների հայտարարությունը, որոնք իրենց դժգոհությունն էին հայտնել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, մասնավորապես այն առումով, որ հանձնաժողովի ձևավորման կարգը հնարավորություն չի տալիս ունենալ իրական հանրային, անկախ հանձնաժողով, իսկ մրցույթային հիմունքներով հանձնաժողով ձևավորվելն անվանվել էր իմիտացիա /այդ մասին առավել մանրամասն տես ստորև/:

#### **1.4. «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

«Ձանգվածային լրատվության մասին» օրենքը հանդիսանում է ոլորտը կարգավորող հիմնարար իրավական ակտերից մեկը: Օրենքն ընդունվել է 13.12.2003 թվականին: Այն կարգավորում է զանգվածային լրատվության իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանում է լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները, լրագրողի հավատարմագրման, տարածված տեղեկատվության հերքման և պատասխանի իրավունքի իրացման հիմնադրույթներն ու այն հիմքերը, որոնց առկայության դեպքում լրատվական գործունեություն իրականացնողները պատասխանատվության ենթակա չեն:

Ձանգվածային լրատվության վերաբերյալ իրավական կարգավորումները կարելի է բաժանել երեք խմբի՝ զանգվածային լրատվության միջոցների հասկացության սահմանումը, զանգվածային լրատվության միջոցների ազատության երաշխիքները և զանգվածային լրատվության միջոցների գործունեության սահմանափակումները:



#### **1.4.1. Չանգվածային լրատվության միջոցների հասկացության սահմանումը**

Օրենքը սահմանել է «Չանգվածային լրատվություն», «Չանգվածային լրատվության միջոց», «Չանգվածային լրատվություն իրականացնող» հասկացությունները: Չանգվածային լրատվությունը սահմանմանվում է որպես անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածում, որի հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ պետական սահմաններից՝ փնտրելու, ստանալու և տարածելու տեղեկություններ ու գաղափարներ: Լրատվությունն իրականացվում է Չանգվածային լրատվության միջոցի տարածմամբ:

Վերը ներկայացված հասկացությունների սահմանումները վերլուծելիս անհրաժեշտ է առաջին հերթին որոշել դրանք սահմանելու նպատակը: Նախկին օրենքում թերևս Չանգվածային լրատվության միջոցի գրանցման ինստիտուտի առկայությունն արդարացնում էր նման սահմանումների անհրաժեշտությունը: Այս օրենքում սահմանումների նպատակը և դրանց անհրաժեշտությունը խիստ վիճելի է: Թերևս կարելի է ենթադրել, որ այդ սահմանումներն ունեն տեսական նշանակություն: Իսկապես, գիտական և ուսումնական նպատակներով կարևոր է սահմանել Չանգվածային լրատվություն կամ դրա միջոցի հասկացությունը: Ժամանակակից տեխնոլոգիական զարգացման մակարդակը մարդկությանը հայտնի է դարձրել Չանգվածային լրատվության միջոցների երկու խումբ՝ տպագիր և էլեկտրոնային: Էլեկտրոնային լրատվամիջոցներն իրենց հերթին բաժանվում են հեռուստառադիոհեռարձակման և ցանցային (ինտերնետային) լրատվամիջոցների: Միջազգային իրավական որոշ փաստաթղթեր սահմանում են, որ այդ երեք տեսակների լրատվամիջոցները պետք է կարգավորվեն տարբեր եղանակներով և սկզբունքներով: Ցանցային (ինտերնետային) լրատվամիջոցների կարգավորումը ներկայումս ընդհանրապես չի խրախուսվում միջազգային փաստաթղթերում:

#### **1.4.2. Չանգվածային լրատվության միջոցների ազատության օրենսդրական երաշխիքները**

Միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված խոսքի ազատության երաշխիքները վերաբերում են ոչ միայն Չանգվածային լրատվության միջոցներին և լրագրողներին, այլ՝ յուրաքանչյուրին: Գործող օրենքն ամրագրում է Չանգվածային լրատվության միջոցների ազատությունը և դրանց գործունեության սկզբունքները:

ՀՀ օրենսդրությունը Չանգվածային լրատվության միջոցից այլևս չի պահանջում պետական որևէ գրանցում: Առկա չէ նաև որևէ ծանուցման կամ հայտարարագրման ընթացակարգ: Միևնույն ժամանակ, Օրենքի 13 հոդվածը նշում է լրատվության միջոցների վարչական ռեգիստրի վարման մասին, որն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ըստ Չանգվածային լրատվության միջոցի յուրաքանչյուր թողարկման՝ նախարարություն պարտադիր ուղարկվող երկուական օրինակների: Դրական կարելի է գնահատել գրաքննության արգելքի ամրագրումը և ավելին՝ գրաքննության հասկացության որոշակի մեկնաբանումը, որով հատկապես նշվում է լրատվությունը պետական մարմինների հետ նախնական համաձայնության ենթարկելու պահանջի անթույլատրելիությունը (4 հոդվածի 3-րդ մաս): Այս երաշխիքը պետք է տարածվի ոչ միայն օրենքով «լրատվություն» ճանաչված «հրատապ տեղեկատվության», այլև ցանկացած տեղեկատվության վրա: Բացի այդ, գրաքննությունը պետք է արգելվի ոչ միայն Չանգվածային լրատվության միջոցների, այլև խոսքի ազատության դրսևորման ցանկացած դեպքում: Օրինակ, գրաքննության չպետք է ենթարկվեն արվեստի ստեղծագործությունները, բուհական դասախոսությունները և այլն: Հետևաբար, գրաքննության արգելքը պետք է սահմանվի ոչ թե «Չանգվածային լրատվության մասին» օրենքով, այլ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող, ավելի ընդհանուր կարգավորման ոլորտ ունեցող իրավական ակտով, օրինակ՝ Սահմանադրությամբ:

Վիճելի է նաև լրատվության միջոցների տարածման սահմանափակումների հնարավորությունը որպես երաշխիք ներկայացնելու փորձը (4 հոդվածի 5-րդ մաս): Հասկանալի է, որ սահմանափակումների սպառիչ և հստակ ամրագրումը հանդիսանում է յուրովի երաշխիք՝ որևէ իրավունքի պաշտպանության համար: Վիճահարույցը, թերևս, այն է, որ սահմանելով գրաքննության ամենավտանգավոր ձևի՝ նախնական համաձայնեցման արգելքը, այդուհանդերձ, սահմանվում է լրատվության միջոցի տարածման արգելման հնարավորությունը: Անհասկանալի է այն մեխանիզմը, որով կարելի է ստուգել լրատվության միջոցի բովանդակությունը՝ մինչև դրա տարածումը: Այդ պատճառով կարելի է օրենքով նախատեսել պատասխանատվություն՝ որոշակի դեպքերում որոշակի տեղեկատվության տարածման համար, սակայն չի կարելի արգելել լրատվության միջոցի որևէ թողարկման տարածումը: Այս հանգամանքն օրենքի համապատասխան դրույթն ընդհանրապես հաշվի չի առնում, իր ձևակերպումների մեջ այն հստակ ու որոշակի չէ և կարող է որևէ մարմնի, այդ թվում և դատարանին, գրաքննություն իրականացնելու հնարավորություն ընձեռել: Վերջապես, խոսքի ազատության երաշխիք կարելի է դիտարկել լրատվություն իրականացնողների կողմից լրատվության աղբյուրները չբացահայտելու իրավունքը, որը նախատեսում է, որ նույնիսկ քրեական գործի առիթով լրագրողին չեն կարող պարտադրել բացահայտելու իր տեղեկությունների աղբյուրը, եթե դա է պահանջում հասարակության շահերի պաշտպանությունը և եթե սպառված չեն այդ շահերի պաշտպանության այլընտրանքային միջոցները (5 հոդվածի 2-րդ մաս): Այլ կերպ ասած՝ լրագրողը քրեական գործի առիթով կարող է հրաժարվել ցուցմունք տալ և բացահայտել իր տեղեկությունների աղբյուրը, եթե «հասարակական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը» չգերակշռի «տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակական շահագրգռվածությանը», և գտնվի այդ շահերի պաշտպանության այլընտրանքային միջոց, օրինակ՝ հնարավոր լինի աղբյուրը պարզել այլ միջոցով: Լրատվություն իրականացնողի և նրա գաղտնի աղբյուրի պաշտպանության ամրագրումը խիստ դրական է, սակայն՝ անիրական, քանի որ այդ դրույթը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86 հոդվածի 2-րդ մասին, որով տրվում է այն անձանց սպառիչ ցանկը, ովքեր որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել: Չանգվածային լրատվություն իրականացնողն այդ ցանկում որևէ կերպ նշված չէ, և եթե օրենսդիրը նպատակ ունի իսկապես ամրագրել խոսքի ազատության նշված երաշխիքը, ապա դա պետք է արվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածում փոփոխություն կատարելով:

#### **1.4.3. Խոսքի ազատության օրենսդրական սահմանափակումները**

Խոսելով խոսքի ազատության սահմանափակումների մասին՝ պետք է ևս մեկ անգամ ընդգծել, որ որևէ իրավունք անսահմանափակ չէ, և այդ հարաբերությունները կարգավորող միջազգային փաստաթղթերը ևս ընդունելի են համարում խոսքի ազատության որոշ սահմանափակումները: Այդ կապակցությամբ օրենքը խոսքի ազատության իրականացման ընթացքում սահմանում է որոշակի պարտականություններ զանգվածային լրատվություն իրականացնողների համար և նախատեսում պատասխանատվություն՝ այդ իրավունքի չարաշահման դեպքում:

Մի շարք պարտականություններ, որոնք տեղ են գտել Օրենքում, վերաբերում են ոչ միայն զանգվածային լրատվության միջոցներին, այլև յուրաքանչյուր մարդու: Հետևաբար, ողջունելի է, որ Օրենքում տեղ գտած խոսքի ազատության չարաշահման անթույլատրելիության դեպքերը (7-րդ հոդված) մասնավորեցված չեն միայն զանգվածային լրատվություն իրականացնողների համար: Օրինակ՝ զանգվածային լրատվություն իրականացնողներն օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող տեղեկատվություն չտարածելու առանձնահատուկ

պարտավորություն չպետք է կրեն: Տվյալ դեպքում հանրահավաքում բռնություն քարոզողը և լրատվամիջոցը պետք է հավասարեցվեն այնպես, ինչպես պետական գաղտնիք տարածող ցանկացած քաղաքացին և լրագրողը:

Ձանգվածային լրատվության համար սահմանված պարտականությունների թվին է դասվում հերքման և պատասխանի հրապարակումը: Օրենքի 8 հոդվածը սահմանում է հերքման և պատասխանի մինչդատական ընթացակարգ, որով կարգավորվում են հերքման և պատասխանի ծավալները, հրապարակման միջոցը, ժամկետները, խորագիրը, արժեքը և այլն: Միևնույն ժամանակ դրանք հնարավորություն են տալիս զանգվածային լրատվություն իրականացնողին մերժել հերքման պահանջը: Հերքման կամ պատասխանի տարածումը զանգվածային լրատվություն իրականացնողի կողմից մերժելու դեպքում այդ մասին որոշումը գրավոր տրվում է նման պահանջ ներկայացնողին հերքման կամ պատասխանի պահանջը ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Այնուհետև, անձն իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող, իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների տարածման դեպքում այդ տեղեկությունները հերքելու պահանջով կարող է դիմել դատարան: Դատարանում հերքման և պատասխանի տարածման հետ կապված վեճերի քննության ընթացակարգը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 հոդվածով: Այսպիսով, օրենքի համապատասխան կարգավորումները մինչդատական փուլում հիմնականում կամավոր բնույթ են կրում և չեն սահմանում զանգվածային լրատվություն իրականացնողի կողմից հերքման կամ պատասխանի տարածման պարտադիր դեպքերը և դրանց մերժման հիմքերը: Հետևաբար, այս խնդրի արտադատական լուծումը կարող է դուրս բերվել օրենսդրական կարգավորման ոլորտից: Ինչ վերաբերում է հերքման կամ պատասխանի մերժման մասին որոշումը նման պահանջ ներկայացնողին մեկշաբաթյա ժամկետում պարտադիր տրամադրելուն, ապա այս դրույթը որևէ իրավական նշանակություն չունի, քանզի անձը դատարան դիմելու համար կարիք չունի անցնել մինչդատական որևէ ընթացակարգ:

Օրենքը ձեռնպահ է մնում պատասխանատվության հիմքերը սահմանելուց և նախատեսում է պատասխանատվություն՝ ընդհանրապես օրենսդրության խախտման համար. «Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից այդ գործունեության իրականացումն օրենքի պահանջների խախտմամբ առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն» /10 հոդվածի 1-ին մաս/:

Օրենքով սահմանված են պատասխանատվությունից ազատվելու դեպքերը (9 հոդվածի 2-րդ մաս):

### **1.5. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք**

2005 թ.-ի նոյեմբերին ՀՀ սահմանադրական փոփոխություններով տեղեկություններ ստանալու իրավունքը հռչակվել է որպես սահմանադրական իրավունք: Տեղեկություններ ստանալու իրավունքը ճանաչվել է որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2003 թ.-ի սեպտեմբերի 23-ին, ուժի մեջ է մտել 2003 թ.-ի նոյեմբերի 15-ին: Օրենքի գործողությունը տարածվում է ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաև հանրությանը որոշ ոլորտներում ծառայություններ մատուցող կամ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող մասնավոր կազմակերպությունների վրա:

Այս օրենքն իրավունք է տալիս պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև հանրային նշանակություն ունեցող մասնավոր կազմակերպություններից (ներառյալ՝ հանրային ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև որևէ ապրանքի կամ ծառայության մատակարարման ոլորտում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող մասնավոր

կազմակերպությունները) ստանալ նրանց տիրապետության տակ առկա ամբողջ տեղեկատվությունը: Օրենքը նշված կազմակերպություններին պարտադրում է նաև հրապարակել մի ամբողջ շարք տեղեկատվություն՝ անկախ տեղեկատվություն ստանալու հարցումներ ստանալուց: Օրենքը նաև պարունակում է դրույթներ, որոնք պատասխանատվություն են նախատեսում տեղեկատվությունն ապօրինաբար չտրամադրելու դեպքում:

Տեղեկատվության մատչելիության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է, որը ճանաչվում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված բազմաթիվ միջազգային համաձայնագրերով (տես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածները, ընդունված Հռոմում՝ 1950թ. նոյեմբերի 4-ին, վավերացված Հայաստանի Հանրապետության կողմից՝ 2002թ. ապրիլի 26-ին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը, ընդունված 1966թ. դեկտեմբերի 16-ին՝ Նյու-Յորքում, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993թ. հունիսի 23-ին: Շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ տես նաև՝ «Բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիան, ընդունված 1998թ. հունիսի 25-ին՝ Օրհուսում, Դանիա, վավերացված Հայաստանի Հանրապետության կողմից՝ 2001թ.-ի օգոստոսի 1-ին): Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, որի անդամ է նաև Հայաստանի Հանրապետությունը, հայտարարել է.

**«Հավասարության հիման վրա և հստակ կանոններին համապատասխան պաշտոնական փաստաթղթերի լայն մատչելիության» սկզբունքը, որը**

- հանրությանը հնարավորություն է տալիս համապատասխան տեսակետ ունենալ և քննադատական կարծիք կազմել իրենց հասարակության վիճակի և իշխանությունների վերաբերյալ՝ խթանելով ընդհանուր կարևորություն ունեցող խնդիրներին հասարակության տեղեկացված մասնակցությունը,
- նպաստում է իշխանությունների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և օգնում ապահովել նրանց ազնվությունը՝ խուսափելով կոռուպցիոն ռիսկերից,
- նպաստում է իշխանությունների՝ որպես հասարակական ծառայություններ տրամադրողի օրինականության հավաստմանը և նրանց նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը»:

Միջազգային փորձագետների կողմից այս օրենքը գնահատվել է որպես ԱՊՀ երկրներում «Տեղեկատվության ազատության մասին» ամենաառաջադիմական օրենքներից մեկը: «Արտիկլ 19»-ը մի շարք այլ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ողջունել է օրենքի ընդունումը:

Օրենքի ընդունումն էական դրական փոփոխություններ է առաջացրել: Հանրային իշխանությունները, թեպետ երբեմն բարդություններ ստեղծելով, այնուամենայնիվ, համակերպվում են թափանցիկ, հրապարակային աշխատելու գաղափարին: Առկա են նաև մի շարք դեպքեր, երբ ֆիզիկական ու իրավաբանական անձինք տեղեկատվություն ստացել են միայն դատարանի վճռով:

Առկա են որոշակի խնդիրներ՝ կապված օրենքի կիրառման հետ: Չնայած օրենքն արդեն երկար ժամանակ է, ինչ գործում է, սակայն Կառավարությունը դեռևս չի ընդունել օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերը, որոնք պետք է հեշտացնեն օրենքի կիրառումը:

Խոսքն Օրենքում նշված երկու կարգերի մասին է. հոդված 5-ում՝ «Տեղեկատվության գրանցում, դասակարգում ու պահպանում» և 10-ում՝ «Տեղեկատվության տրամադրման պայմաններ»: Լրատվական հանրությունը նման դանդաղկոտությունը բացատրում է

Կառավարության կողմից այս դրույթները փոխելու նախաձեռնությամբ հանդես գալու, այդ դրույթները վերացնելու ցանկությամբ:

Մյուս կողմից, սույն դրույթներն օրենքի ամենաառաջադիմական մասն են, որոնց անհապաղ կիրարկումն արդարացված է:

Հոդված 5-ը և 10-ը տեղեկատվության ազատության կարևոր երաշխիքներ են և դրանք չպետք է ենթակա լինեն փոփոխությունների կամ լրացումների:

Լրատվական հանրության ներկայացուցիչների կողմից մշակվել են համապատասխան կարգեր և դրանք ներկայացվել են Կառավարությանը:

Մասնավորապես դա վերաբերում է.

1. «Պետական կառավարման մարմիններում տեղեկությունների շրջանառության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին, որն անհրաժեշտ է օրենքի 5-րդ հոդվածի պահանջները կատարելու համար,

2. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին, որն անհրաժեշտ է օրենքի 10-րդ հոդվածի պահանջները կատարելու համար:

Դեռևս 2006 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ կառավարություն է հասցեագրել թիվ 2-0240 գրությունը՝ ուշադրության արժանացնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման ոլորտում առաջացած և հրատապ լուծում պահանջող որոշ խնդիրների, որոնք լուրջ խոչընդոտներ են ստեղծում քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքների իրականացման գործընթացում:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետին, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով: Մինչդեռ, 2003թ.-ի նոյեմբերի 15-ից, այսինքն՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց մինչև օրս, Կառավարության որոշմամբ նման կարգ չի սահմանվել: Արդյունքում որոշ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ հրաժարվում են ըստ պահանջի տեղեկատվություն տրամադրել՝ պատճառաբանելով նշված կարգի բացակայությունը: Բացի այդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն տեղեկատվության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան, սակայն մինչ օրս ՀՀ կառավարության կողմից սահմանված չէ այդ մարմինը:

Մարդու իրավունքների պաշտպանը նշված հարցերի կապակցությամբ պաշտոնական նամակով 2007թ.-ի սեպտեմբերին կրկին դիմել է ՀՀ կառավարություն:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքում նաև հստակ նշված են տեղեկատվության մերժման հիմքերը և կարգը, որը պահանջում է, որ բոլոր մերժումները հիմնավորվեն՝ ըստ օրենքով սահմանված հիմքերի: Այդ դրույթները նպատակ ունեն կանխելու պաշտոնյաների կամայականությունները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի առավելություններից է նաև այն, որ օրենքն իրավական պաշտպանություն է նախատեսում տարատեսակ խախտումների կամ ապօրինությունների մասին ահազանգողների համար: Հոդված 8-ում սահմանված են տեղեկությունների երեք խմբեր, որոնք չեն կարող գաղտնագրվել և պետք է անհապաղ հրապարակվեն: Դրանք, օրինակ, այն տեղեկություններն են, որոնք վերաբերում են քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին,

ինչպես նաև՝ աղետներին և դրանց հետևանքներին: Այդ կարգի տեղեկությունների տրամադրումը (նույնիսկ եթե դրանք գաղտնի են համարվում) որևէ պաշտոնյայի կողմից չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն (հոդված 14):

### **1.6. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի որոշ դրույթներ ևս ուղղակիորեն կարգավորում են խոսքի ազատության հետ կապված հարաբերություններ: Մասնավորապես դա վերաբերում է 19-րդ հոդվածին՝ վերնագրված «Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը»:

Վերջիններս անձնական ոչ գույքային իրավունքներ են, որոնք պրակտիկայում ստացել են առավել համապարփակ պաշտպանություն: Մարդու պատվի ու բարի համբավի պաշտպանությունը ՀՀ Սահմանադրությունը դիտարկում է որպես սահմանադրական մի շարք իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք /ՀՀ Սահմանադրություն, հոդված 43/: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն արժանապատվությունը պատիվը և գործարար համբավը համարվում են քաղաքացու անձնական ոչ գույքային իրավունքը: Տեսական գրականության մեջ «պատիվ» հասկացությունը մեկնաբանվում է որպես անձի բարոյական, քաղաքական, աշխատանքային, և այլ հատկանիշների՝ հանրության կողմից տրվող օբյեկտիվ սոցիալական գնահատական, իսկ արժանապատվությունն անձի կողմից իրեն տրվող սոցիալական գնահատականի գիտակցումն է՝ սեփական արժանիքների ինքնագիտակցումը:

Գործարար համբավը հանրորեն արժեքավորվող որակների գնահատման հիման վրա անձի մասին ձևավորվող օբյեկտիվ կարծիքի մասնավոր դրսևորում է և իրենից ներկայացնում է իրավաբանական կամ ֆիզիկական անձի գործարար շրջանառության, այդ թվում՝ գործարարության ոլորտում դրսևորված որակների (արժեքների և թերությունների) մասին ձևավորված կարծիքը: Հենց այս արժեքների պաշտպանությանն է ուղղված Քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածը: Այս հասկացությունները ոչ միայն իրավունքի կողմից արժեքավորվող ոչ նյութական բարիքներ են, այլև բազմաբնույթ բովանդակություն ունեցող հասարակական հարաբերություններ: Այդ իսկ պատճառով Քաղաքացիական օրենսգիրքը կարգավորման բեռը դնում է ոչ այնքան այս հասկացությունների բովանդակության վերհանման վրա, որքան դրանց կապակցությամբ առաջացող հարաբերությունների վրա: Քննարկվող հոդվածը ոչ միայն արգելում է ցանկացած ոտնձգություն այս արժեքների վրա, այլ նաև ապահովում է այդ բարիքների կապակցությամբ առաջացող սուբյեկտիվ իրավունքներից օգտվելու լայն հնարավորություններ:

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ պատիվն ու արժանապատվությունը նաև քրեաիրավական պաշտպանության ոլորտ է: Քաղաքացիաիրավական պաշտպանությունը սկսում է գործել այն դեպքում, երբ անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները տարածվել են ոչ դիտավորությամբ:

Քննարկվող հոդվածը սահմանում է քաղաքացու իրավունքը՝ դատարանով պահանջել հերքելու իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները:

Եթե քաղաքացու պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, ապա դրանք պետք է հերքվեն զանգվածային լրատվության նույն միջոցներով:

Եթե նշված տեղեկությունները պարունակվում են կազմակերպությունից ելնող փաստաթղթում, ապա նման փաստաթուղթը պետք է փոխարինվի կամ հետ կանչվի:

Քաղաքացին, ում մասին զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվել են նրա իրավունքները կամ օրենքով պաշտպանվող շահերը ոտնահարող տեղեկություններ, իրավունք ունի իր պատասխանը հրապարակել զանգվածային լրատվության նույն միջոցներում:

Քաղաքացին, ում մասին տարածվել են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկություններ, իրավունք ունի այդ տեղեկությունները հերքելու հետ միասին պահանջել հատուցելու դրանց տարածմամբ պատճառված վնասները:

Վերը նշված մեխանիզմները կատարյալ չեն և առանց մեծ ջանքերի կարող են շրջանցվել: Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ հերքման ձևակերպված տեքստն իր բովանդակությամբ ըստ էության կրկնում է այն տեքստը, որը պետք է հերքվեր:

Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ այս ոլորտում բացակայում են միասնական դեղատոմսերը: Որպես կանոն, հարցի լուծումը գտնվում է լրատվական միջոցների լավ վարվեցողության կանոններում, որոնք լրատվության միջոցները հոժարակամ ընդունում են:

### **1.7. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք**

Սույն օրենսգրքում խոսքի ազատությանը վերաբերող հոդվածներից կարելի է առանձնացնել երկուսը՝ 189 և 189.7 հոդվածները:

189 հոդվածը վերնագրված է «Առանց թողարկման տվյալների զանգվածային լրատվության միջոցի տարածումը կամ պարտադիր օրինակներ չուղարկելը կամ զանգվածային լրատվության միջոցի՝ ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությանը և ազդեցությունների բացահայտմանն ուղղված հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետում չհրապարակելը», իսկ 189.7 հոդվածը՝ «Տեղեկատվություն տալու պարտականությունը չկատարելը»:

189 հոդվածը նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով տուգանք է սահմանում զանգվածային լրատվության միջոցի այնպիսի տարածման համար, որի թողարկումը չի պարունակում օրենքով սահմանված թողարկման տվյալները, կամ նյութական կրիչի վրա թողարկված զանգվածային լրատվության միջոցի տարածման համար՝ առանց օրենքով սահմանված պարտադիր օրինակներն ըստ պատկանելույն ուղարկելու, կամ զանգվածային լրատվության միջոցի՝ ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությանն ուղղված հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետում չհրապարակելու համար:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

189.7 հոդվածում ամրագրված է տեղեկատվության ազատության պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկը: Այն օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելու համար սահմանում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Պրակտիկայում դատարանների կողմից սույն հոդվածի դրույթների կիրառումը հազվադեպ երևույթ չէ:

### **1.8. Լրագրողների հավատարմագրմանը վերաբերող իրավական ակտեր**

«Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածը սահմանում է լրագրողի հավատարմագրման ինստիտուտը. «1. Լրատվական գործունեություն իրականացնողն իր լրագրողին հավատարմագրելու համար իրավունք ունի դիմել պետական մարմիններ:

Պետական մարմինը պարտավոր է, սույն օրենքին և տվյալ մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին համապատասխան, հնգօրյա ժամկետում հավատարմագրել լրագրողին...»:

Հավատարմագրման ինստիտուտը կարելի է դիտարկել թե՛ որպես խոսքի ազատության երաշխիք և թե՛ խոսքի ազատության սահմանափակում: Հավատարմագրման ցանկացած համակարգ, այնուամենայնիվ, սահմանափակում է անձանց մուտքն այն մարմիններ և կազմակերպություններ, որտեղ հավատարմագրման կարգեր են նախատեսված: Ճիշտ է, հնարավոր է հետևել այդ մարմինների աշխատանքներին պաշտոնական հրապարակումների միջոցով, սակայն դա, այնուամենայնիվ, չի նվազեցնում անձնական մուտք ունենալու կարևորությունը՝ տեղեկությունների ստացման և տարածման համար: Մյուս կողմից, պետական մարմիններն իրենց աշխատանքներն արդյունավետ անցկացնելու և տեղեկատվությունը կազմակերպված իրականացնելու նպատակով կարիք ունեն սահմանելու որոշակի կարգեր, որոնք կհամակարգեն լրագրողների աշխատանքները մարմնի կամ կազմակերպության ներսում: Այդ պատճառով հավատարմագրումը տեղեկատվության տարածման արդյունավետ կազմակերպման պայմաններում կարող է հանդիսանալ խոսքի ազատության պաշտպանության երաշխիք, սակայն միայն այն դեպքում, եթե այդ կարգերը սահմանված են հստակ, ժողովրդավարական սկզբունքներով և չեն կարող կամայականությունների կամ խտրականության տեղիք տալ:

2004 թվականի մարտի 4-ին ՀՀ կառավարությունը, N 333-Ն որոշմամբ հիմք ընդունելով «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը, հաստատել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգը:

Կարգը սահմանում է լրագրողի կամ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի՝ պետական կառավարման մարմնում հավատարմագրման կանոնները և հավատարմագրված լրագրողի՝ պետական մարմնում գործունեության կազմակերպման հիմնադրույթները՝ նպատակ ունենալով ապահովել պետական մարմնի գործունեության թափանցիկությունը և այդ գործունեության մասին անմիջական տեղեկատվություն ստանալու նպատակով լրագրողների համար ստեղծել բարենպաստ պայմաններ:

Այս կարգն ապահովում է միասնականություն, ինչն իր հերթին հեշտացնում է լրագրողների հավատարմագրման ընթացակարգը:

Վերը նշված կարգում առկա են որոշ դրույթներ, որոնք գործնականում խոչընդոտներ կարող են առաջացնել ինչպես հավատարմագրման փուլում, այնպես էլ հավատարմագրված լրագրողի գործունեության ընթացքում:

Նախ պետք է նշել, որ կարգը սահմանում է այնպիսի դրույթներ, կարգավորում է այնպիսի հարաբերություններ, որոնք բնավ չեն առնչվում լրագրողների հավատարմագրմանը: Կարգն, ըստ էության, պետք է սահմանի բացառապես ընթացակարգային նորմեր, սակայն կարգի արդեն իսկ 3-րդ կետում խոսվում է, այսպես ասած, պետական մարմնի պարտականությունների մասին, համաձայն որի.

«Պետական մարմինը՝



ա) որևէ ձևով կամ որևէ եղանակով չի իրականացնում հավատարմագրված լրագրողի մասնագիտական գործունեության գրաքննություն.

բ) հավատարմագրված բոլոր լրագրողների համար ապահովում է ոչ խտրական պայմաններ»:

Այն, որ գրաքննությունն արգելված է, բխում է Սահմանադրությունից, ամրագրված է օրենքներում: Անհիմն ու անընդունելի է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի դրույթները կրկնել մի ակտում, որը կոչված չէ ընդհանրապես այդ հարաբերությունները կարգավորելու: Իսկ «բ» ենթակետում ամրագրված դրույթն ավելի անհասկանալի է: Մեծ ցանկության պարագայում անգամ դժվար է կապ գտնել հավատարմագրման կարգի և պետական մարմնի պարտականության միջև՝ ապահովել ոչ խտրական պայմաններ: Խտրականության արգելքի սկզբունքը կրկին բխում է Սահմանադրությունից և ամրագրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով: Ուստի, ենթաօրենսդրական ակտում այն կրկնելու անհրաժեշտություն չկա:

Հստակ, որոշակի, եթե չասենք՝ հիմնավոր, չեն պետական մարմնի կողմից հավատարմագրումը դադարեցնելու հիմքերը: Դրանք սահմանված են կարգի 13-րդ կետում. «Պետական մարմինը լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցնել, եթե...», անհասկանալի է այստեղ «կարող է» եզրույթի գործածումը, որն, ըստ էության, հայեցողություն է վերապահում պետական մարմնին՝ սահմանված հիմքերի առկայության պարագայում հավատարմագրումը դադարեցնելու կամ չդադարեցնելու: Սակայն անընդունելի է նման հայեցողությունը սահմանված հետևյալ հիմքերի պարագայում. ա) լրագրողն անգործունակ է ճանաչվել, դ) հավատարմագրումը դադարեցնելու մասին դիմել է նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը, ե) դադարել է գործել լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը, և դադարեցվել է լրագրողի ներկայացրած լրատվության բոլոր միջոցների տարածումը: Իսկ ահա «գ» կետում նշված է՝ նա տարածել է պետական մարմնի գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանել իրականությանը, ինչը հաստատվել է դատարանի վճռով: Այս հոդվածի տառացի մեկնաբանության պարագայում լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել, մասնավորապես նաև այն դեպքում, երբ լրագրողն իր ռեպորտաժում սխալ նշած կլինի որևէ մարմնի նիստի սկսման ժամը, և սխալը կկազմի, ասենք, մեկ-երկու րոպե, իսկ, ասենք, լրագրողի անգործունակ ճանաչվելու պարագայում պետական մարմինը կարող է նաև չդադարեցնել հավատարմագրումը, որովհետև դա նրա հայեցողությունն է:

15-րդ կետը, որը վերաբերում է հավատարմագրված լրագրողի իրավունքներին, որևէ առնչություն չունի Կարգի կարգավորման առարկայի հետ, իսկ ամրագրված իրավունքների մեծ մասն արդեն իսկ սահմանված են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերում, իսկ եթե սահմանված չեն, ապա պետք է սահմանվեն:

Կարգի 19-րդ կետի համաձայն. «Պետական մարմնի պատասխանատուի՝ պետական մարմնի տարածքում հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպմանն ուղղված ցուցումները պարտադիր են հավատարմագրված լրագրողի համար»: Ըստ էության, սա պարտականություն է լրագրողի համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն բացառապես օրենքով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները: Իսկ նույն հոդվածի 4.1 մասի համաձայն. «Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքների կամ պարտականությունների իրականացումը կանոնակարգող կանոններ, կարգեր կամ տեխնիկական նորմեր (քաղաքաշինական, սանիտարական, հակահրդեհային, հաշվապահական հաշվառման, ստանդարտացման և

այլն) օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում և սահմաններում կարող են նախատեսվել իրավական այլ ակտերով, որոնք չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ»:

2009 թվականի օգոստոսի 21-ին /ՆՈ-003-4/ Ազգային ժողովի նախագահը, հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «ի» ենթակետը և «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը, հաստատել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգը:

Թեպետ այս կարգի հենց 1-ին կետում սահմանվում է. «Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կանոնները, այնուամենայնիվ, բուն կարգում զետեղված դրույթները կարգավորում են նաև ըստ էության հավատարմագրման հետ կապ չունեցող մի շարք այլ հարաբերություններ»:

Այս ոլորտում ՀՀ օրենսդրության տրամաբանությունը, կառուցվածքը հետևյալն է. օրենքն արդեն իսկ սահմանում է, թե ովքեր են լրագրողները, իսկ համապատասխան մարմինները պետք է սահմանեն նրանց հավատարմագրման կարգը: Որևէ իրավական ակտ իրավունք չի վերապահել Ազգային ժողովի նախագահին՝ որոշելու, թե որ լրատվական միջոցի լրագրողը կարող է հավատարմագրվել, որը՝ ոչ: Այնինչ, վերը նշված կարգի 10 հոդվածը անհիմն կերպով տարբերակում է լրագրողներին՝ դրա համար չունենալով իրավական հիմք, հավատարմագրման իրավունքը վերապահելով միայն նրանց մի մասին:

«Հավատարմագրվել կարող են ՀՀ արդարադատության նախարարությունում հաշվառված 1500 և ավելի տպաքանակ ունեցող թերթերի, 1000 և ավելի տպաքանակ ունեցող ամսագրերի, օրական 800 և ավելի այցելու ունեցող և շաբաթը մեկ թարմացվող ցանցային լրատվության միջոցների, լրատվական գործակալությունների, ռադիոընկերությունների, հեռուստաընկերությունների և Երևանում թղթակցական կետեր ունեցող օտարերկրյա հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների լրագրողները: Սույն կանոնը չի գործում ազգային փոքրամասնությունների տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտները լուսաբանող լրատվամիջոցների համար»:

Վերը նշված հիմնավորմամբ լրագրողի հավատարմագրման վաղաժամկետ դադարեցման հիմքերը պետք է սահմանվեն օրենքով:

Լրագրողի պարտականությունների մասով վերը շարադրված առարկությունները վերաբերում են նաև սույն կարգին:

«Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը լրագրողին հավատարմագրումից զրկելու միայն մի դեպք է նախատեսում: Հոդվածի 5-րդ կետն ասում է. «Լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումով»: Հավատարմագրումից զրկելու որևէ այլ դեպք օրենքը չի նախատեսում: ԱԺ նախագահի հաստատած կարգում հատկապես մտահոգիչ է «գ» կետը, ըստ որի՝ լրագրողը հավատարմագրումից զրկվում է, եթե նա տարածել է Ազգային ժողովի և աշխատակազմի գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը, ինչը հաստատվել է դատարանի վճռով: Խիստ անհանգստացնող են Կարգի 23 կետում հավատարմագրված լրագրողի համար սահմանված դրույթներից երկուսը.

«23. Հավատարմագրված լրագրողը պարտավոր է՝

ա) մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում հարգել Ազգային ժողովի պատգամավորների և Աշխատակազմի աշխատակիցների օրինական շահերը, պատիվն ու արժանապատվությունը.

բ) իր մասնագիտական գործունեությամբ կամ այլ գործողություններով չխոչընդոտել Ազգային ժողովի պատգամավորների, Ազգային ժողովի նիստերին ներկա գտնվող (մասնակցող)

անձանց և Աշխատակազմի աշխատակիցների ծառայողական պարտականությունների կատարմանը»:

Ընդհանրապես, այլոց (և ոչ միայն պատգամավորների) իրավունքներն ու օրինական շահերը, պատիվն ու արժանապատվությունը բոլորի (և ոչ միայն լրագրողների) կողմից հարգելը կարգավորված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ օրենքներով, և Կարգում նման բան սահմանելը անիմաստ է: Եվ քանի որ Կարգի 18-րդ կետով էլ ԱԺ-ն իրեն իրավունք է վերապահել հավատարմագրումից զրկել այն լրագրողին, ով «խախտել է օրենքների պահանջները կամ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վարչական շենքի և տարածքի պահպանության հրահանգի» կամ Ազգային ժողովում սահմանված աշխատակարգի կանոնների կամ սույն կարգի պահանջները» (ընդգծումը մերն է), ապա ակնհայտ են դառնում հնարավոր հետևանքները ոչ ցանկալի լրագրողի համար:

### **1.9. Խոսքի ազատության ոլորտում շրջանառության մեջ եղած օրինագծերը**

2009 թվականին Ազգային ժողովի 3 պատգամավորներ շրջանառության մեջ դրեցին «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որը վերաբերում է խոսքի ազատությանը, մասնավորապես՝ գրպարտության և վիրավորանքի ապաքրեականացմանը, ինչպես նաև՝ նախատեսված վնասների չափերին ու դրանց փոխհատուցման կարգին: Շրջանառության մեջ գտնվող օրինագծերով, գրպարտության ապաքրեականացմանը զուգահեռ, նախատեսվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով, իսկ եթե գրպարտչական նյութը կամ վիրավորանքը տարածել է որևէ ՉԼՄ՝ 2 միլիոն դրամ տուգանքի չափով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ օրենսդրական նախաձեռնությունը կատարվել է այն բանից հետո, երբ արդեն ԵԽ Վեներտիկի հանձնաժողովը երկու բացասական եզրակացություն է ներկայացրել այդ օրինագծերի վերաբերյալ: Լրագրողների մտահոգությունն այն է, որ ՀՀ իշխանությունները, որոնք այսօր ամբողջությամբ վերահսկում են հեռուստաընկերությունները, փորձ են անելու լռեցնել տպագիր մամուլը, որը հարաբերականորեն ազատ է: ԱԺ-ում շրջանառության մեջ դրված օրինագծերը պարունակում են որոշ խնդրահարույց դրույթներ: Օրինակ՝ հողված 5-ում ասվում է, որ Ազգային ժողովում կարելի է անարգել գրպարտել. «Սույն հողվածի 3-րդ մասում նշված փաստացի տվյալները չեն մեկնաբանվում որպես գրպարտություն, եթե դրանք տեղ են գտել՝

- ա) օրենսդիր մարմնում լսումների և նիստերի ընթացքում արված ելույթում,
- բ) օրենսդիր մարմնի մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովում (հանձնախմբում) լսումների ընթացքում արված հայտարարությունում, եթե այն առնչվում է այդ մարմնում քննվող խնդրին,
- գ) դատական քննության մասնակցի կողմից դատական քննության ընթացքում արված հայտարարությունում, որը վերաբերել է քննվող գործի հանգամանքներին,
- դ) գիտական կամ հանրային խնդրի քննարկմանը մասնակցելու նպատակով արված հայտարարությունում, երբ ապացուցվի, որ դրանք տարածած անձը ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ պարզելու դրանց ճշմարտությունը և (կամ) հիմնավորելու դրանց մեջ առկա մեղադրանքները, ինչպես նաև հավասարակշռված և բարեխիղճ է ներկայացրել այդ տվյալները»: Հետաքրքիր է, թե ո՞րն է, ըստ հեղինակների, հավասարակշռված ու բարեխիղճ գրպարտությունը: Ավելին՝ օրինագիծը պարունակում է մի շարք անհասկանալի դրույթներ: Օրինակ՝ վիրավորանքը սահմանելուց հետո ասվում է. «Սույն հողվածի իմաստով արտահայտությունը չի համարվում անձին արատավորելու

մտադրությամբ տարածված, եթե այն տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային կամ իրավաչափ մասնավոր շահով»: Ստացվում է՝ գերակշռող հանրային շահի կամ իրավաչափ մասնավոր շահի դեպքում կարելի է մարդուն վիրավորել կամ հայհոյել: Սույն օրինագիծը պարունակում է նաև գրաքննության համար հիմքեր ապահովող կետեր. «Եթե վիրավորանքը կամ գրապարտությունը տարածած անձի դիտավորության կամ կուպիտ անգգուշության հետևանքով տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, ապա այդ անձը որպես բարոյական վնասի հատուցում պետք է վճարի միանվագ գումար համապատասխանաբար գրապարտության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի, իսկ վիրավորանքի դեպքում՝ մինչև 500-ապատիկի չափով»: Հոդված 10-ը պատասխանատվություն է սահմանում լրատվամիջոցների համար. «Եթե վիրավորանքը կամ գրապարտությունը տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով՝ բացառությամբ, եթե նման տեղեկությունը տարածվել է հեռուստատեսությամբ և, իսկ (կամ) ռադիոյով ուղիղ հեռարձակմամբ, ապա վնաս կրած անձն իրավունք ունի զանգվածային լրատվական գործողություն իրականացնողից պահանջել՝ ...վճարել համապատասխանաբար գրապարտության դեպքում նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի, իսկ վիրավորանքի դեպքում մինչև 1000-ապատիկի չափով միանվագ գումար»: Այսպիսով, լրատվամիջոցների ներկայացուցիչների մտահոգությունը հարուցող դրույթները մնացել են, և շրջանառության մեջ դրված օրինագիծը չի փարատում դրանք:

Շրջանառության մեջ դրված խնդրո առարկային վերաբերող օրինագծերի հաջորդ փաթեթը Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթն է: Փաթեթի հիմնավորումների մեջ թեպետ նշվում է. «Սույն օրինագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է լրագրողների իրավունքների, պարտականությունների և պաշտպանվածության հիմնահարցերը կանոնակարգելու անհրաժեշտությամբ», այնուամենայնիվ, այն առաջացրել է լրագրողական հանրության մտահոգությունը և որակվել որպես գործիք, մահակ՝ լրագրողների դեմ: Հնչում են կարծիքներ, որ նման օրինագծի անհրաժեշտություն չկա:

Իրավամբ, օրինագծերում ներառված մի շարք դրույթներ կրկնություն են ավելի բարձր իրավական ակտում՝ Սահմանադրությունում, ամրագրված դրույթների, մի խումբ իրավունքներ էլ, որոնք սահմանված են լրագրողների համար, ընդհանրապես վերաբերում են բոլորին:

Հատկանշական է, որ նախորդ տարվա հուլիսի 30-ին Կառավարությունը դեմ է արտահայտվել ներկայացված տեսքով օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Շրջանառության մեջ գտնվող ոլորտին վերաբերող հաջորդ օրինագիծը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին է: Նախաձեռնությամբ հանդես է եկել Ազգային ժողովի «Օրինաց երկիր» խմբակցության անդամ Հովհաննես Մարգարյանը: Օրինագիծն ընդգրկված է 22.02.2004 Ազգային ժողովի քառօրյա նիստերի օրակարգում: Այս օրինագծով առաջարկվում է 86 հոդվածի 2-րդ մասը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «6) լրատվական գործունեություն իրականացնողը և լրագրողը՝ պարզելու համար տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ՝ դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան

տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները»:

Ըստ էության, սույն օրինագծի՝ ներկայացված բովանդակությամբ ընդունվելու պարագայում կվերանան Քրեական դատավարության օրենսգրքի 86 և «Չանգվածային լրատվության մասին» օրենքի 5-րդ հոդվածներում ամրագրված դրույթների հակասությունները:

## **2. Խոսքի ազատության միջազգային չափանիշները**

Խոսքի ազատության իրավունքը վաղուց է դադարել լինել միայն ներպետական օրենսդրության կարգավորման առարկա: Արտահայտվելու ազատության կարևորությունից ելնելով՝ այն ամրագրված է մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող միջազգային գրեթե բոլոր փաստաթղթերում՝ ՄԱԿ-ի 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, ՄԱԿ-ի 1966թ. «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, 1950թ. «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայում, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին» ԱՊՀ 1995թ. կոնվենցիայում:

Եվրոպայի խորհրդի տարբեր մարմինների կողմից ընդունվել են մի շարք որոշումներ՝ ուղղված Եվրոպական կոնվենցիայի դրույթների մանրամասնեցմանը: Կարելի է հիշատակել Նախարարների կոմիտեի և Խորհրդարանական վեհաժողովի մի շարք հանձնարարականներ ու բանաձևեր: Առանձնակի նշանակություն է ներկայացնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Դատարանը տարիներ շարունակ բազմաթիվ որոշումներ է կայացրել՝ կապված 10-րդ հոդվածի հետ՝ ձևավորելով հարուստ նախադեպային իրավունք, ընդգծելով ժողովրդավարական հասարակությունում արտահայտվելու ազատության առանձնահատուկ դերն ու նշանակությունը:

Արտահայտվելու ազատության վերաբերյալ մի շարք դրույթներ են պարունակում ՀՀ կողմից վավերացված տարբեր միջազգային ակտեր՝ ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջև ստորագրված «Աջակցություն տեղեկատվական հասարակությանը և ժողովրդավարական կառավարմանը» ծրագիրը, «Պարբերական մամուլի, գրահրատարակչության, գրատարածման և պոլիգրաֆիայի բնագավառում համագործակցության միջպետական խորհրդի ստեղծման մասին» համաձայնագիրը, «Պարբերական մամուլի բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը, «Իրազեկման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների տեղեկատվական պաշարների և համակարգերի ձևավորման, միջպետական ծրագրերի իրականացման գործում համագործակցության մասին» համաձայնագիրը և այլն: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանց ազատ արտահայտման իրավունք: Այդ իրավունքը ներառում է սեփական համոզմունքներին անարգել մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու անկախ պետական սահմաններից տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:*

«Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի համաձայն՝

1. *Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին:*
2. *Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է անկախ պետական սահմաններից բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով*

*սեփական ընտրությամբ ամեն տեսակի տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:*

- 3. Մույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ և հատուկ պատասխանատվություն: Հետևաբար, այն կապված է որոշ սահմանափակումների հետ, որոնք, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ՝*

*ա/ այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար.*

*բ/ պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար:*

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝

- 1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:*
- 2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու համար:*

## **2.1. Խոսքի ազատության բովանդակությունը**

Խոսքի ազատությունը պատկանում է յուրաքանչյուրին՝ լինի նա ֆիզիկական, թե իրավաբանական անձ: Ընդ որում, այդ ազատությունը չի սահմանափակվում միայն տվյալ պետության սահմաններով: Այն երաշխավորվում է՝ անկախ պետական սահմաններից:

Համաձայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի՝ անձի արտահայտվելու ազատությունը ներառում է հետևյալ 3 տարրերը.

- սեփական կարծիք ունենալու ազատությունը,
- տեղեկություններ և գաղափարներ ստանալու ազատությունը,
- տեղեկություններ և գաղափարներ տարածելու ազատությունը:

ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածն ընդգծում է նաև տեղեկություն և գաղափարներ որոնելու ազատությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակորեն ճանաչում է հասարակության իրազեկված, տեղեկացված լինելու իրավունքը: Մի շարք գործերում Դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը երաշխավորում է ոչ միայն հանրությանն իրազեկելու մամուլի ազատությունը, այլև պատշաճ կերպով իրազեկված լինելու հանրության իրավունքը (օր.

Sunday Times v. the United Kingdom, Judgement of 26 April 1979): Անձի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը, ինչպես նաև տեղեկատվության ընդհանուր աղբյուրների մատչելիությունը չի կարող սահմանափակվել իշխանությունների կողմից:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 1979թ. փետրվարի մեկի իր հանձնարարականում ցանկալի է համարում, որ որոշակի սակավաթիվ բացառություններով հասարակությանը մատչելի լինեն կառավարական տվյալները: Խորհրդարանական վեհաժողովն առաջարկում է ապահովել կառավարական տվյալների մատչելիությունը, ներառյալ՝ տեղեկատվություն փնտրելու և ստանալու իրավունքը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» R (2002)2 հանձնարարականի համաձայն անդամ պետությունները պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի իրավունքը՝ հայտ ներկայացնելու պայմանով հասու լինել պետական իշխանությունների մոտ պահվող պաշտոնական փաստաթղթերին: Այս սկզբունքը պետք է կիրառվի առանց որևէ հիմքով խտրականության:

Նույն հանձնարարականը նշում է նաև, որ պաշտոնական փաստաթղթերի հասու լինելու իրավունքը կարող է սահմանափակվել: Սահմանափակումները պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության պայմաններում և նպատակաուղղված լինեն պաշտպանելու՝

- ազգային անվտանգությունը, պաշտպանությունը և միջազգային հարաբերությունները,
- հասարակության անվտանգությունը,
- քրեական գործողությունների կանխումը, հետաքննությունը և դատական կարգով հետապնդումը,
- անձի անձեռնմխելիությունը և անձի մյուս օրինական շահերը,
- առևտրային և տնտեսական այլ շահերը՝ մասնավոր, թե հանրային,
- կողմերի հավասարությունը՝ կապված դատական վարույթների հետ,
- բնությունը,
- պետական իշխանությունների կողմից իրականացվող տեսչական ստուգումները, հսկողությունը և վերահսկողությունը,
- տվյալ պետության տնտեսական, դրամավարկային և արժույթային քաղաքականությունը,
- որևէ հարցի ծառայողական նախապատրաստման ընթացքում պետական իշխանությունների ներսում կամ դրանց միջև վարվող խորհրդակցությունների գաղտնապահությունը:

Տվյալ փաստաթղթին հասու լինելը կարող է մերժվել, եթե պաշտոնական փաստաթղթում պարունակվող տեղեկությունների բացահայտումը կարող է վնասել նշված շահերից որևէ մեկին, բացառությամբ այն դեպքերի, երբ բացահայտման հարցում գերակայում է հասարակության շահը: Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հայտն ամբողջությամբ կամ մասամբ մերժող պետական իշխանությունը պետք է ներկայացնի նման մերժման հիմքերը: Հայցողը նման մերժման պարագայում, ինչպես նաև իր հայտը չքննարկվելու դեպքում պետք է հնարավորություն ունենա օգտվել վերանայման կարգից՝ դատարանում կամ օրենքով սահմանված մեկ այլ անկախ և անկողմնակալ ատյանում:

Արտահայտվելու ազատությունը, գրեթե առանց բացառությունների, տարածվում է ցանկացած բնույթի և բովանդակության տեղեկատվության վրա:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը կիրառելի է ոչ միայն այն տեղեկատվության կամ գաղափարների նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ և չեզոք, այլ նաև նրանց, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստություն են պատճառում պետությանը կամ

հասարակության ցանկացած մասին (De Haes and Gijssels v. Belgium, Judgement of 24 February 1997):

Պաշտպանության ենթակա է ցանկացած տեսակի տեղեկատվություն, լինի դա կարծիք, գաղափար, փիլիսոփայական դատողություն, թե քաղաքական ելույթ: Սակայն հասարակության համար կարևորություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկություններն օգտվում են առավել լայն պաշտպանությունից:

Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված առավելագույն պաշտպանություն տրամադրվում է ոչ միայն զուտ քաղաքական բանավեճերին, այլ նաև հասարակական հետաքրքրություն ներկայացնող ցանկացած հարցի շուրջ ընթացող հասարակական քննարկումներին:

**Եվրոպական դատարանը նաև ընդունելի է համարում քաղաքական գործիչների և կառավարության առավել լայն քննադատության հնարավորություն:** Դատարանը նշում է, որ քաղաքական գործիչների նկատմամբ քննադատության թույլատրելի շրջանակները շատ ավելի լայն են, քան մասնավոր անձանց քննադատության շրջանակները: Քաղաքական գործիչներն էլ պետք է առավել հանդուրժող լինեն մամուլում հնչեցվող քննադատությանը (Lingens v. Austria, Judgement of 8 July 1986):

**Իսկ կառավարության առնչությամբ թույլատրելի քննադատության սահմաններն ավելի լայն են նույնիսկ քաղաքական գործիչ համեմատությամբ:** Դա պայմանավորված է նրանով, որ ժողովրդավարական համակարգում կառավարության գործողությունները և բացթողումները պետք է դառնան մամուլի և հասարակության լուրջ ուշադրության առարկան (Castels v. Spain, Judgement of 23 April 1992):

Ընդունելի է համարվում նաև դատական և իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվության ազատ տարածումը: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Լրատվամիջոցներով քրեական դատավարությունների մասին տեղեկատվություն հաղորդելու վերաբերյալ» R (2003)13 հանձնարարականի համաձայն հանրությունը պետք է հնարավորություն ունենա լրատվամիջոցներով տեղեկատվություն ստանալ դատական և իրավապահ մարմինների գործունեության մասին: Ըստ այդմ, լրագրողները պետք է հնարավորություն ունենան ազատորեն լուսաբանելու քրեական դատավարության գործընթացը՝ ենթարկվելով սույն հանձնարարականով նախատեսված սկզբունքներին:

Հայտնի «Սանդի Թայմսն» ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճռում նշվեց, որ զանգվածային լրատվության միջոցների վրա դրված է դատարանների գործունեության հարցերին վերաբերող տեղեկատվության և գաղափարների տարածման պարտականություն՝ ճիշտ այնպես, ինչպես դա տեղի է ունենում հասարակական հետաքրքրություն ներկայացնող գործունեության մյուս ոլորտներում (Sunday Times v. the United Kingdom, Judgement of 26 April 1979):

Համաձայն Դատարանի պրակտիկայի՝ 10-րդ հոդվածը կիրառելի է ոչ միայն քաղաքական բնույթի տեղեկատվության, այլև առևտրային բնույթի տեղեկությունների, անգամ գովազդների կապակցությամբ (Casado Coca v. Spain, Judgement of 24 February 1994):

Եվրոպական դատարանը նաև հստակ տարանջատում է կատարում փաստերի և գնահատողական դատողությունների միջև: Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողությունները չեն կարող հաստատվել ապացույցներով, քանի որ դրանք վերաբերում են համոզումների, նախապատվությունների ոլորտին: Դա նշանակում է, որ գնահատող դատողություններն ընկնում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի առավել լայն պաշտպանության տակ:

Արտահայտվելու ազատության հետ կապված առանձնահատուկ նշանակություն ունի զանգվածային լրատվության միջոցների ազատությունը: Կապված մամուլի հետ՝ Դատարանն անգամ ընդունում է որոշակի աստիճանի չափազանցումների հնարավորություն: Իր



վճիռներից մեկում Ռատարանը նշել է, որ լրագրողական ազատությունը լրագրողին թույլ է տալիս դիմել որոշակի չափազանցության և նույնիսկ սադրանքների (Informationsverein Lentia and others v. Austria, Judgement of 24 november 1993):

Ընդհանրապես կարելի է նշել, որ զանգվածային լրատվամիջոցների ազատությունն արտահայտվելու ազատության լիարժեք ապահովման գլխավոր նախապայմանն է հանդիսանում:

1994թ.-ին Պրահայում անցկացված Նախարարների խորհրդի կոնֆերանսի արդյունքում ընդունված համար 2 բանաձևում սահմանվեց, որ լրագրությունն էլեկտրոնային և տպագիր մամուլում հիմնված է հատկապես արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքի վրա, որը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով և մեկնաբանվում է Կոնվենցիայի մարմինների պրակտիկայով (սկզբունք 2):

Բանաձևում ամրագրված առաջին սկզբունքի համաձայն իրական ժողովրդավարությունը պահպանելու և զարգացնելու համար պահանջվում է ստեղծել և ամրապնդել անկախ, բազմակարծիք և պատասխանատու լրագրություն: Այս պահանջը բավարարելու համար լրագրությունը պետք է՝

- անձանց տեղեկացնի իշխանության, ինչպես նաև մասնավոր սեկտորի գործունեության մասին՝ այդպիսով նրանց տալով սեփական կարծիք կազմելու հնարավորություն,
- և՛ անձանց, և՛ մարդկանց խմբերին թույլ տա արտահայտել իրենց կարծիքները՝ այդպիսով նպաստելով, որպեսզի հանրությունը և մասնավոր սեկտորը, ինչպես նաև հասարակությունն ամբողջությամբ տեղյակ լինեն այդ կարծիքներին,
- իշխանության տարբեր ճյուղերի գործունեությունը ներկայացնի շարունակական քննադատությամբ:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 428 (1970) բանաձևում ամրագրված են մի շարք անհրաժեշտ սկզբունքներ, որպեսզի զանգվածային լրատվության միջոցները կարողանան կատարել իրենց գործառնություններն՝ ի շահ հասարակության: Մասնավորապես՝

- զանգվածային լրատվության միջոցների անկախությունը պետական վերահսկողությունից պետք է ամրագրված լինի օրենքով: Անկախության ցանկացած նեղացում թույլատրելի է միայն դատարանի որոշման, բայց ոչ՝ գործադիր իշխանության մարմինների որոշումների հիման վրա,
- չպետք է լինի մամուլի կամ հեռուստահաղորդումների բովանդակության ո՛չ ուղղակի և ո՛չ անուղղակի գրաքննություն: Սահմանափակումներ կարող են դրվել միայն Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակներում,
- զանգվածային լրատվության միջոցների անկախությունը պետք է պաշտպանված լինի մոնոպոլիաների սպառնալիքից: Ո՛չ մասնավոր ընկերությունները, ո՛չ ֆինանսական խմբերը, զանգվածային լրատվության միջոցների ոլորտում մենաշնորհի իրավունք չպետք է ունենան, և չպետք է թույլատրել կառավարությանը ենթակա մոնոպոլիաների ձևավորում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Կոնֆլիկտային և լարված իրավիճակներում լրագրողների պաշտպանության վերաբերյալ» թիվ R (96)4 հանձնարարականի համաձայն անդամ պետությունները չպետք է սահմանափակեն լրագրողների կողմից հաղորդակցության միջոցների օգտագործումը՝ նորությունների, կարծիքների, գաղափարների և մեկնաբանությունների՝ միջազգային կամ ազգային ցանցով հեռարձակելու համար: Նրանք չպետք է միջամտեն և խանգարեն նման հեռարձակումներին: Համաձայն նույն հանձնարարականի՝ անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ

իշխանությունները ոչ մի խտրականություն չեն ցուցաբերի լրագրողների հանդեպ, անկախ նրանից՝ նրանք օտարերկրացի են, թե՛ տեղաբնակ:

Լրագրողների ազատության կարևոր մասն է կազմում նաև տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու լրագրողի իրավունքը: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու լրագրողների իրավունքի վերաբերյալ» թիվ R (2000)7 հանձնարարականի հավելվածի համաձայն անդամ երկրների ներքին օրենսդրությունը պետք է ապահովի լրագրողների՝ աղբյուրը չբացահայտելու իրավունքի բացահայտ և պարզորոշ պաշտպանություն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիայի 10-րդ հոդվածի և սույն հանձնարարականով սահմանված սկզբունքներին համաձայն, որոնք պետք է համարվեն այս իրավունքը հարգելու նվազագույն չափանիշներ: Լրագրողների՝ աղբյուրը չբացահայտելու իրավունքը չպետք է սահմանափակվի այլ կերպ, քան Կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ կետի համաձայն: Արտահայտվելու ազատությունը վերաբերում է ոչ միայն տեղեկատվության բովանդակությանը, այլ նաև այն տարածելու ձևերին ու միջոցներին:

Համաձայն ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի՝ անձը կարող է ազատորեն արտահայտել իր կարծիքը՝ բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով, կամ գեղարվեստական ձևով արտահայտված, կամ՝ մի այլ ձևով:

Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ Կոնվենցիայի 10րդ հոդվածը կիրառելի է ոչ միայն գրավոր և բանավոր խոսքի միջոցով արտահայտված տեղեկությունների և գաղափարների, այլև նկարների, ֆիլմերի և արվեստի այլ ստեղծագործությունների նկատմամբ, ինչպես նաև հեռարձակման բոլոր միջոցների և էլեկտրոնային համակարգերի նկատմամբ: Օրինակ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն թիվ R (92) 19 հանձնարարականում՝ «Ռասիստական բովանդակությամբ տեսախաղերի վերաբերյալ», անդամ պետությունների կառավարություններին հանձնարարում է տեսախաղերը դիտարկել որպես զանգվածային լրատվության միջոցներ:

Գործերից մեկի արդյունքում կայացրած վճռում Դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը վերաբերում է ոչ միայն տեղեկատվության բովանդակությանը, այլ նաև տեղեկատվությունը տարածելու և ստանալու միջոցներին՝ ելնելով նրանից, որ այդ միջոցների նկատմամբ ցանկացած սահմանափակում խախտում է տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքը (Autronic AG v. Switzerland, Judgement of 22 May 1990):

Արտահայտվելու ազատության հետ կապված հարցերից կարևորվում է նաև այս ոլորտը կարգավորող մարմինների կարգավիճակը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածն ամրագրում է, որ այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

Գործերից մեկով կայացրած վճռում Դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վերջին նախադասության առարկան և նպատակը, հավասարապես նաև՝ դրա կիրառման ոլորտը, պետք է դիտարկվեն ամբողջությամբ վերցրած հոդվածի համատեքստում և մասնավորապես՝ 2-րդ կետի պահանջների հետ փոխկապակցված: Հոդվածի երկրորդ կետում սահմանվում են արտահայտվելու ազատության հնարավոր սահմանափակումների իրավաչափության պայմանները: Այսինքն՝ պետք է որոշել, թե լիցենզավորման պայմանակարգը համապատասխանում է արդյոք այդ պահանջներից յուրաքանչյուրին (Informationsverein Lentia and others v. Austria, Judgement of 24 november 1993):

Այսինքն՝ պետությունների կողմից լիցենզավորման կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումները չպետք է հակասեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակներին և խնդիրներին:

Ընդ որում, ըստ Դատարանի՝ լիցենզիայի մերժումը կարող է պայմանավորվել ոչ միայն 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված իրավաչափ նպատակներով: Այս դեպքում հետապնդվող հնարավոր նպատակների շրջանակն ավելի լայն է (Informationsverein Lentia and others v. Austria, Judgement of 24 november 1993):

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովն իր 1986 թ.-ի հոկտեմբերի որոշման մեջ նշել է, որ պետությունները չունեն լիցենզավորման համակարգի առնչությամբ գնահատման անսահմանափակ ազատություն: Պետության կողմից լիցենզիա տալու մերժումը չպետք է լինի անհիմն և խտրական, այլապես կհակասի Կոնվենցիայի սկզբունքներին և դրանում ամրագրված իրավունքներին: Լիցենզավորման համակարգը պետք է համապատասխանի ժողովրդավարական հասարակության առանցքը կազմող բազմակարծության, հանդուրժողականության և ազատամտության պահանջներին:

Համաձայն Նախարարների կոմիտեի թիվ (2000) 23 հանձնարարականի՝ հեռարձակման արտոնագիր տրամադրելու ընթացակարգի դրույթները պետք է լինեն որոշակի, հստակ և կիրառվեն բացահայտ, թափանցիկ և անկողմնակալ ձևով:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր թիվ (2000) 23 հանձնարարականում՝ «Հեռարձակման բնագավառը կարգավորող մարմինների անկախության և գործառույթների վերաբերյալ», մի շարք չափորոշիչներ է սահմանել հեռարձակման ոլորտի կարգավորման մարմինների վերաբերյալ: Այս հանձնարարականը նշում է, որ նման մարմինների գործունեությունը պետք է հիմնված լինի անկախության և թափանցիկության սկզբունքի վրա: Մարմնի անդամները պետք է նշանակվեն ժողովրդավարական և թափանցիկ ձևով, չեն կարող հանձնարարություններ կամ հրամաններ ստանալ որևիցե մարմնից կամ անձից: Հարկավոր է սահմանել անհամատեղելիության հետ կապված կանոններ, որպեսզի հնարավոր լինի խուսափել նման իրավիճակներից՝

- կարգավորող մարմինները գտնվում են քաղաքական իշխանությունների ազդեցության տակ,
- կարգավորող մարմինների անդամներն իրականացնում են գործառույթներ կամ շահեր ունեն լրատվական բնագավառի հիմնարկներում, կամ այլ կազմակերպություններում, կամ հարակից բնագավառներում, որը կարող է շահերի բախում առաջացնել կարգավորող մարմինների անդամության հետ:

Կարգավորող մարմնի անդամի ազատումը պետք է հնարավոր լինի միայն այն դեպքում, երբ չեն հարգվում անհամատեղելիության կանոնները, որոնք նրանք պետք է պահպանեն, կամ՝ երբ անդամն անկարող է պատշաճ կերպով իրականացնել իր գործառույթները: Պետք է սահմանված լինեն ճշգրիտ կանոններ, որպեսզի ազատումը չօգտագործվի որպես քաղաքական ճնշման միջոց:

Կարգավորող մարմինների ֆինանսավորման հարցերը, որոնք նույնպես նրանց անկախության հիմնական տարրն են, պետք է սահմանված լինեն օրենքում՝ համաձայն որոշակիորեն սահմանված ծրագրի՝ վկայակոչելով կարգավորող մարմինների մոտավոր ծախսերը, որպեսզի նրանք լրիվ և անկախ կերպով իրականացնեն իրենց գործառույթները: Պետական մարմինները չպետք է օգտագործեն ֆինանսական որոշումներ կայացնելու իրենց իշխանությունը՝ կարգավորող մարմինների անկախությանը միջամտելու համար:

Կարգավորող մարմինների հիմնական գործառույթներից մեկը պետք է լինի օրենքում և հեռարձակողներին տրամադրված արտոնագրերում սահմանված պայմանների կատարման հսկողությունը: Կարգավորող մարմինները չպետք է նախնական հսկողություն իրականացնեն

ծրագրերի վրա, և հետևաբար՝ ծրագրերի հսկողությունը միշտ պետք է տեղի ունենա ծրագրերի հեռարձակումից հետո:

Կարգավորող մարմինները պետք է հասարակությանը հաշվետու լինեն իրենց գործունեության համար և, օրինակ, հրապարակեն պարբերական կամ առիթից բխող հաշվետվություններ, որոնք վերաբերում են իրենց աշխատանքին կամ իրենց առաքելությունների իրականացմանը:

Կարևորվում է նաև հանրային հեռուստա և ռադիոհեռարձակողների անկախությունը: 1994 թ.-ին Պրահայում անցկացված Եվրոպայի խորհրդի Նախարարների խորհրդի կոնֆերանսի արդյունքում ընդունված համար 1 բանաձևի համաձայն անդամ-պետությունները պարտավորվում են երաշխավորել հանրային հեռարձակողների անկախությունը՝ ցանկացած քաղաքական և տնտեսական միջամտությունից: Խոսքը վերաբերում է ինչպես ամենօրյա կառավարմանը, այնպես էլ ծրագրային ցանցի մշակմանն ու ծրագրերի բովանդակության որոշմանը: Այդ անկախությունը պետք է ապահովվի համապատասխան կառուցվածքային օղակների միջոցով, ինչպիսիք են ներքին պլյուրալիստական խորհուրդները կամ այլ անկախ մարմինները: Հանրային հեռարձակողները պետք է ուղղակի պատասխանատվություն կրեն հանրության առջև: Հանրային հեռարձակողներն այդ նպատակով պետք է պարբերաբար տեղեկատվություն հրապարակեն իրենց գործունեության վերաբերյալ և սահմանեն ընթացակարգ, որը հեռուստադիտողներին և ռադիոլսողներին հնարավորություն կտա արտահայտել իրենց կարծիքը՝ նրանց առջև դրված խնդիրների իրագործման կապակցությամբ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Հեռարձակման հանրային ծառայության անկախության վերաբերյալ» թիվ R (96) 10 հանձնարարականի հավելվածի համաձայն հեռարձակման հանրային ծառայության ղեկավար մարմինների կարգավիճակը, հատկապես՝ դրանց անդամ դառնալու կանոնները, պետք է սահմանվեն այնպես, որ բացառեն քաղաքական կամ այլ ազդեցությունները: Այդ կանոնները պետք է մասնավորապես սահմանեն, որ ղեկավար մարմինների անդամները կամ անհատական կարգով այդ գործառույթները ստանձնած անձինք, ովքեր իրենց գործառույթները կատարում են բացառապես ի շահ հեռարձակման հանրային ծառայության, որը ներկայացնում և ղեկավարում են, չեն կարող՝

- լրատվության ոլորտի կազմակերպություններում ուղղակի կամ անուղղակի ձևով կատարել գործառույթներ, վճարվել կամ ունենալ շահ, որի հետևանքով կարող է հակասություն առաջանալ հեռարձակման հանրային ծառայությունում նրանց կողմից իրականացվող ղեկավար աշխատանքի հետ,
- ընդունել որևէ լիազորագիր կամ հրահանգ որևէ անձից կամ կազմակերպությունից, բացառությամբ հեռարձակման հանրային ծառայության վերահսկողությունն իրականացնող անձերի կամ մարմինների համար օրենքով սահմանված հատուկ դեպքերի:

Նույն հանձնարարականի հավելվածը սահմանում է նաև, որ իշխանությունների կողմից հեռարձակման հանրային ծառայության ֆինանսավորման հարցում որոշում ընդունելու լիազորությունը չպետք է օգտագործվի կազմակերպության խմբագրային անկախության կամ ինքնուրույնության վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդելու նպատակով:

**Խոսքի ազատության սահմանափակումը:** Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ազատորեն արտահայտվելու իրավունքի իրականացումը կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ և կարող է պայմանավորվել ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով:

Ազատորեն արտահայտվելու իրավունքի իրականացման հետ կապված ցանկացած ձևականություն, պայման, սահմանափակում կամ պատժամիջոց համատեղելի կլինի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ, եթե համապատասխանի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմաններին:

Այսպիսով, արտահայտվելու ազատության իրավունքը կարող է սահմանափակվել, և այդ սահմանափակումը համատեղելի կլինի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ, եթե՝

1. սահմանափակումը նախատեսված է օրենքով,
2. սահմանափակումը հետապնդում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ իրավաչափ նպատակ,
3. սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը նույնպես նախատեսում է արտահայտվելու ազատության սահմանափակման հնարավորություն: Համաձայն այդ հոդվածի՝ սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ՝ այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու կամ պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար: Կոնվենցիայով նախատեսված իրավաչափ նպատակների շրջանակը որոշակիորեն ավելի լայն է:

Դատարանի համար արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումներն ընդունելի են, եթե միաժամանակ ապահովված են Կոնվենցիայով նշված երեք պայմանները:

Օրենքով նախատեսված լինելու պահանջը նշանակում է, որ միջամտությունը՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքին, պետք է ոչ միայն ուղղակի սահմանված լինի օրենքով, այլ նաև այն պետք է բավարարի որոշակի պահանջների: Օրենքը պետք է պատշաճ կերպով մատչելի լինի քաղաքացու համար, համապատասխան հանգամանքներում հնարավորություն ընձեռի քաղաքացուն՝ կողմնորոշվելու, թե անհրաժեշտության դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվելու, և օրենքի ցանկացած սահմանափակող նորմ պետք է ձևակերպված լինի բավարար ճշգրտությամբ, որպեսզի քաղաքացին հնարավորություն ունենա կանխատեսել այն հնարավոր հետևանքները, որոնք կարող են առաջանալ որոշակի հանգամանքներում (*Sunday Times v. United Kingdom, Judgment of 26 April 1979*):

Արտահայտվելու ազատության ցանկացած սահմանափակում պետք է ուղղված լինի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ մասում սպառիչ կերպով նշված արժեքների պաշտպանությանը: Այդ արժեքներն են՝ պետական անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը կամ հասարակության անվտանգությունը, անկարգությունների կամ հանցագործությունների կանխումը, առողջությունը կամ բարոյականությունը, այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտման կանխումը, արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը:

Երրորդ պայմանը ժողովրդավարական հասարակությունում սահմանափակման անհրաժեշտությունն է: Արտահայտվելու ազատության ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի անհրաժեշտության չափանիշին: Արտահայտվելու ազատության ցանկացած սահմանափակում պետք է պայմանավորված լինի հասարակական սուր և անհետաձգելի պահանջմունքով, պետք է լինի արդարացված և համաչափ հետապնդող նպատակին: Սակայն իրավաչափ նպատակից կախված միջամտության անհրաժեշտության չափանիշները նույնը չեն: Տարբեր իրավաչափ նպատակների առանձնահատկություններով պայմանավորված՝ պետության կողմից միջամտության անհրաժեշտությունը գնահատվում է տարբեր կերպ:

Արտահայտվելու ազատության սահմանափակման հիմնավորվածությունը պարզելիս պետք է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են վիճարկվող սահմանափակման բնույթը, միջամտության աստիճանը, գործին վերաբերող կարծիքների և տեղեկատվության բնույթը, քաղաքական և սոցիալական գործոնները, գործի մեջ ներգրավված մարդիկ, միջավայրը և հանրությունը:

Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից ընդունվել են մի շարք որոշումներ, որոնք ուղղված են արտահայտվելու ազատության հնարավոր չարաշահումների կանխմանը, օրինակ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Բռնության, ագրեսիայի և պոռնոգրաֆիկ համատեքստ պարունակող տեսագրությունների տարածման վերաբերյալ» R (89)7 հանձնարարականը, «Ռասիստական բովանդակությամբ տեսախաղերի վերաբերյալ» R (92)19 հանձնարարականը, «Էլեկտրոնային լրատվամիջոցներում բռնություն ցուցադրելու վերաբերյալ» R (97) 19 հանձնարարականը և այլն: Ակտերի անվանումից արդեն իսկ երևում է, որ դրանք ուղղված են բռնության, ագրեսիայի, ռասիզմի և այլ արատավոր երևույթների քարոզչության դեմ:

Մի շարք փաստաթղթերում մատնանշվում է լրագրողների անհիմն ձերբակալումների և նրանց արտահայտվելու ազատության այլ անհիմն սահմանափակումների դեմ պայքարի անհրաժեշտությունը: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ Եվրոպայում լրատվամիջոցների ազատ արտահայտվելու վերաբերյալ թիվ 1589 (2003) հանձնարարականում նշվում է, որ պետք է ազատ արձակել բոլոր լրագրողներին, ովքեր ձերբակալվել են իրենց օրինական մասնագիտական աշխատանքի պատճառով և վերացնել օրենսդրությունը, որը լրագրողների արտահայտվելու ազատությունը դարձնում է քրեական հետապնդման առարկա:

### **3. Հայաստանի Հանրապետությունում լրագրողների իրավունքների խախտումների ընդհանուր վերլուծություն**

Խոսքի ազատությունը որքան էլ օրենսդրական առումով հստակ ձևակերպված լինի, այնուամենայնիվ, այն առանց լրագրողների անհնար է կյանքի կոչել, ովքեր որոնում, գտնում, հավաքագրում, մշակում և հասարակությանն է ներկայացնում անհրաժեշտ տեղեկատվությունը: Հենց լրագրողների գործունեության արդյունավետությունից է շատ հաճախ կախված լինում հասարակության անդամների իրազեկվածության աստիճանը, հետևապես նաև նրանց՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը և դրա իրականացման մակարդակը: Հետևաբար, կարելի է վստահ պնդել, որ լրագրողների իրավունքների նկատմամբ ցանկացած ոտնձգություն ուղղված է ոչ միայն տվյալ կոնկրետ լրագրողի կամ լրատվության միջոցի, այլև հասարակության դեմ՝ նպատակ հետապնդելով սահմանափակելու անձանց խոսքի ազատության իրավունքը: Այդ իսկ պատճառով լրագրողների նկատմամբ ոտնձգությունների, նրանց կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքների սահմանափակումների, ինչպես նաև նրանց իրավունքների այլ խախտումների դեպքերի վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում կարող է լայն պատկերացում տալ երկրում խոսքի ազատության ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ:

Սույն զեկույցում տեղ գտած փաստերը և տեղի ունեցած դեպքերը հանդիսանում են Երևանի մամուլի ակումբի և Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կատարած հետազոտությունների արդյունքը:

#### **3.1. Լրագրողների նկատմամբ բռնությունները**

Նախ անդրադառնանք վերջին տարիներին ՀՀ-ում լրագրողների իրավունքների խախտման ամենավտանգավոր դեպքերին՝ *լրագրողների նկատմամբ բռնություններին*, որոնց

արդյունքում խախտվում է ոչ միայն խոսքի ազատությունը, այլև ոտնձգություն է իրականացվում անձի կյանքի և առողջության նկատմամբ:

Եվ այսպես, **2002 թ.-ի օգոստոսի 24-ին** «Աբովյան» մասնավոր հեռուստաընկերության խմբագրությունում անձանոթ անձանց կողմից ծեծի ենթարկվեց հեռուստաընկերության հիմնադիր ու գործադիր տնօրենը: Դրա համար առիթ էին հանդիսացել քաղաքի առևտրային կետերից մեկում «չթույլատրված» նկարահանումները: Անձանոթ անձինք վերցրել էին նաև համապատասխան տեսահոլովակները: Օգոստոսի 30-ին մամուլի ասուլիսում հեռուստաընկերության տնօրենը կատարվածի համար մեղավոր համարեց Աբովյանի քաղաքապետին, ում գործունեությունը հեռուստաընկերությամբ անընդհատ քննադատվում էր:

Տուժածները պարբերաբար հայտարարում էին, որ իրենք դժգոհ են գործի նախնական քննության ընթացքից:

Սեպտեմբերի 18-ին գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած «Աբովյան» հեռուստաընկերությունը նորից եթեր դուրս եկավ: Սեպտեմբերի 19-ին՝ լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ հանդիպումից հետո, Աբովյանի քաղաքապետը հանդես եկավ ուղիղ եթերով և, փաստորեն, ներողություն խնդրեց կատարվածի համար: Փորձագետները քաղաքապետի այս քայլը կապեցին ընտրական քարոզարշավի հետ:

**2002 թ.-ի դեկտեմբերի 28-ի երեկոյան** սպանվեց հայտնի լրագրող, Հայաստանի հանրային հեռուստաընկերության խորհրդի նախագահ Տիգրան Նաղդալյանը: Սպանության առիթով ՀՀ գլխավոր դատախազությունը հարուցեց քրեական գործ: Սպանության կազմակերպիչները և կատարողները հայտնաբերվեցին և դատապարտվեցին: Ըստ դատախազության բացահայտումների՝ սպանության շարժառիթը կապված է եղել Տիգրան Նաղդալյանի մասնագիտական գործունեության հետ:

**2003 թ.-ի սեպտեմբերի 27-ի գիշերը** Երևանում հարձակում տեղի ունեցավ «Օր» օրաթերթի գլխավոր խմբագրի՝ Գ.Մ.-ի և նրա ամուսնու՝ «Օր» թերթի տնօրեն Ռ.-Հ.-ի վրա: Տուն վերադառնալիս նրանց կանգնեցրել են «Նիվա» մակնիշի ավտոմեքենայով, որից դուրս եկած չորս տղամարդիկ հարվածել են Ռ.-Հ.-ի գլխին: Երբ Գ.Մ.-ն փորձել է զանգահարել ոստիկանություն, նրան դուրս են հանել մեքենայից և ուժեղ հարվածներ հասցրել դեմքին՝ կոտրելով նրա քիթը:

«Օր» թերթի աշխատակազմը հանդես եկավ հայտարարությամբ, որ կատարվածը կապված է տուժածների մասնագիտական գործունեության հետ և մասնավորապես՝ վերջին շրջանում իշխանության հասցեին տպագրված մի քանի քննադատական հոդվածների հետ:

Մեղավորներն այդպես էլ չգտնվեցին, իսկ թերթը, որ դադարել էր լույս տեսնել դեկավարների հետ կատարվածի պատճառով, այդպես էլ չտպագրվեց:

**2004 թ.-ի մարտի 30-ի առավոտյան** ծեծի ենթարկվեց Հայաստանի հեղինակյան ասոցացիայի նախագահ, ռուսական «Պրիմա» տեղեկատվական գործակալության թղթակից Միքայել Դանիելյանը: Չորս անհայտ անձինք հարձակվել էին լրագրող-իրավապաշտպանի վրա և դաժան ծեծի ենթարկել նրան, որի արդյունքում տուժածը ստացել էր ուղեղի ցնցում: Դեպքի կապակցությամբ հարուցվեց քրեական գործ, սակայն հանցագործությունը չբացահայտվեց:

**2004 թ.-ի ապրիլի 5-ին**՝ ընդդիմության հանրահավաքի ժամանակ, մի խումբ ամրակազմ անձինք սկսում են ելույթ ունեցողի ուղղությամբ ձվեր նետել, ճայթրուկներ պայթեցնել: Հանրահավաքին ներկա գտնվող լրագրողները և օպերատորները, երբ փորձում են նկարահանել նրանց, հարձակման են ենթարկվում այդ անձանց կողմից: Հարձակման արդյունքում ֆիզիկապես տուժում են մի շարք լրագրողներ և օպերատորներ, ինչպես նաև վնասվում ու ջարդվում է որոշ հեռուստաընկերություններին պատկանող թանկարժեք տեխնիկան:

Ապրիլի 8-ին դեպքի կապակցությամբ ՀՀ ոստիկանությունը քրեական գործ հարուցեց՝ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով: Մեկ ամիս անց ձերբակալվեցին երկու անձինք, ովքեր ընդունեցին իրենց մեղքը՝ լրագրողների վրա հարձակմանը մասնակցելու գործում, որոնց մեղադրանք ներկայացվեց ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի հատկանիշներով («Գույքը դիտավորությամբ փչացնելը կամ ոչնչացնելը»): Հունիսին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը վերը նշված անձանց մեղավոր ճանաչեց և տուգանեց 100 հազար դրամի չափով:

**2004 թ.-ի ապրիլի 12-ին՝ կեզդիշերին մոտ**, երբ իրավապահ մարմինները հարկադիր դադարեցնում էին ընդդիմության կազմակերպած հանրահավաքը, բռնություն է գործադրվել չորս լրագրողների նկատմամբ: Նրանց բոլորի նկատմամբ էլ ուժ է գործադրվել իրավապահ մարմինների կողմից իրենց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու նպատակով՝ վնասելով նաև նրանց մի մասի սարքավորումները:

Հետագայում իրավապահ մարմինների ներկայացուցիչները հերքեցին իրենց կողմից լրագրողների նկատմամբ բռնություն գործադրելու վարկածը: Լրագրողներին առնչվող մի քանի դրվագներով հարուցվեցին քրեական գործեր, սակայն այդպես էլ ոչ ոք լրագրողներին ծեծի ենթարկելու համար պատասխանատվության չենթարկվեց:

**2004 թ.-ի հոկտեմբերի 13-ի առավոտյան** Կապան քաղաքում բռնություն գործադրվեց «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանի նկատմամբ: Վերջինիս խոսքերով, խմբագրություն էին եկել երեք տղամարդիկ: Նրանք Ալեքսանյանին դուրս էին հրավիրել խմբագրությունից և մի քանի հարցերից հետո հարվածել խմբագրի դեմքին ու սկսել մահակով ծեծել նրան: Նրանք, ջարդուփշուր անելով խմբագրության գույքը, պահանջել էին, որ մեկ ժամից սենյակները ազատվեն:

Դեպքի առնչությամբ հարուցվեց քրեական գործ՝ խուլիգանության հատկանիշներով:

2005 թ.-ի հունիսի 24-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը դադարեցրեց 2004 թ.-ի հոկտեմբերի 13-ին «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունում Սամվել Ալեքսանյանի վրա հարձակման գործի քննությունը:

**2006 թ.-ի սեպտեմբերի 6-ի առավոտյան** բռնություն գործադրվեց «Իրավունք» թերթի խմբագիր Հովհաննես Գալաջյանի նկատմամբ: Երբ լրագրողը դուրս էր եկել տանից, երկու հոգի հարձակվել էին նրա վրա և սկսել հարվածել՝ չարտաբերելով ոչ մի բառ: Դեպքի կապակցությամբ քրեական գործ հարուցվեց՝ Քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով («Ծեծ»): Դեպքին նախորդող և հաջորդող օրերին, ըստ Գալաջյանի, նրան մի քանի անգամ սպառնացել էին: Գալաջյանը, նշելով, որ ինքն անձնական թշնամիներ չունի, կատարվածը կապեց իր մասնագիտական գործունեության հետ:

Լրագրողին ծեծի ենթարկողները չհայտնաբերվեցին և չպատժվեցին:

**2008 թ.-ի օգոստոսի 11-ին** տանից դուրս գալիս ծեծի է ենթարկվել «Հայկական ժամանակ» թերթի թղթակից Լուսինե Բարսեղյանը: Դեպքի կապակցությամբ քրեական գործ է հարուցվել, սակայն հանցագործները չեն հայտնաբերվել:

**2008 թ.-ի օգոստոսի 18-ին** Երևանի կենտրոնում հարձակման և ծեծի է ենթարկվել «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության երևանյան գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Հրաչ Մելքումյանը: Մեղավորները չեն բացահայտվել:

**2008 թ.-ի նոյեմբերի 17-ին՝** մոտավորապես ժամը 20.00-ին, Երևանի կենտրոնում հարձակում է կատարվել «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության նախագահ, «Հետք» ինտերնետային հրատարակության գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանի վրա: Երեք անհայտ տղամարդիկ հարձակվել և դաժան ծեծի են ենթարկել լրագրողին: Փաստի հիման վրա Երևանի Կենտրոնի ոստիկանության քննչական բաժինը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով («Խուլիգանություն») քրեական գործ է հարուցել: Մեղադրանք էր առաջադրվել Կարեն Հարությունյանին, ով էլ 2009 թ.-ի հունիսի 4-ին Երևանի



Կենտրոնն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում ժխտեց միջադեպին իր առնչության վարկածը: Հունիսի 23-ին Կարեն Հարությունյանը դատապարտվեց 5 տարվա ազատազրկման, իսկ հարձակման մասնակից մյուս երկու անձինք այդպես էլ չբացահայտվեցին:

**2009 թ.-ի մարտի 13-ին** Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում ծեծի ենթարկվեց Գագիկ Շամշյանը, ով եկել էր Համալսարան՝ լուսանկարելու բուհի ուսանողների բողոքի ակցիան: Երբ Շամշյանին հաջողվեց բուհի անվտանգության աշխատակիցների կամքին հակառակ անցնել ներս և լուսանկարել, բախում սկսվեց նրա և բուհի անվտանգության աշխատակիցների միջև: Այս միջադեպի առնչությամբ Կենտրոնն համայնքի ոստիկանությունը քրեական գործ է հարուցել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 164 («Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը») և 118 («Ծեծը») հոդվածներով: Հուլիսի 14-ին քրեական հետապնդումը դադարեցվեց՝ ՀՀ ԱԺ կողմից 2009 թվականի հունիսի 19-ին ընդունված համաներման ակտի կիրառմամբ:

**2009 թ.-ի ապրիլի 30-ի լուսաբացին՝ ժամը 5-ին մոտ**, Երևանում իր տան շքամուտքում դաժան ծեծի է ենթարկվել «Armenia Today» լրատվական գործակալության համակարգող Արգիշտի Կիվիրյանը: Անհայտ անձինք փայտե մահակներով հարձակվել են նրա վրա, երբ լրագրողը նույն շենքում տեղակայված իր գրասենյակից տուն էր վերադառնում: Արգիշտի Կիվիրյանը ծանր վիճակում, գլխի և մարմնի բազմաթիվ վնասվածքներով տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Դեպքի առնչությամբ ոստիկանությունը քրեական գործ է հարուցել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117՝ «Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը», հոդվածով, ինչն արժանացավ իրավաբանների և իրավապաշտպան կազմակերպությունների խիստ քննադատություններին: Հետագայում գործը հանձնվեց ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության վարույթ, որտեղ այն վերադրակավորվեց ՀՀ քր.օր-ի 34-104 հոդվածով՝ սպանության փորձ: Հուլիսի 11-ին Կենտրոնն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող երկու անձանց նկատմամբ խափանման միջոց ընտրեց կալանքը: Նրանց մեղադրանք ներկայացվեց Արգիշտի Կիվիրյանի դեմ սպանության փորձի համար: Գործի քննությունը շարունակվում է, սակայն ձերբակալվածներ չկան:

**2009 թ.-ի մայիսի 6-ի երեկոյան** բռնություն իրականացվեց «Շանթ» հեռուստաընկերության մեկնաբան Նվեր Մնացականյանի նկատմամբ: Երկու անհայտ անձինք դարանակալել էին լրագրողին՝ իր տան մոտ, հարձակվել վրան, հարվածներ հասցրել, տապալել գետնին և դիմել փախուստի: Երևանի Մաշտոցի ոստիկանության բաժանմունքում Նվեր Մնացականյանի վրա հարձակման փաստով հարուցվեց քրեական գործ՝ ՀՀ քր.օր-ի 113 հոդվածի 2-րդ մասի 3 կետով («Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը»), սակայն մեղավորները դեռ չեն հայտնաբերվել:

**2009 թ.-ին** լրագրողների նկատմամբ բռնությունների առավելագույն քանակ արձանագրվել է **մայիսի 31-ին**՝ Երևանի ավագանու ընտրությունների օրը: Այդ օրը բռնություն գործադրվեց «Չորրորդ իշխանություն» թերթի թղթակից Գոհար Վեզիրյանի, «Հայկական ժամանակ» օրաթերթի արտահաստիքային թղթակից Արթուր Հովակիմյանի, «168 ժամ» թերթի լրագրող Արմինե Ավետյանի, «Tert.am» կայքի լրագրող Լիլիթ Թադևոսյանի, «Առավոտ» օրաթերթի թղթակից Նելլի Գրիգորյանի նկատմամբ:

Ընտրությունների հաջորդ օրը՝ հունիսի 1-ին, ՀՀ գլխավոր դատախազությունը տարածեց մամլո հաղորդագրություն, որով տեղեկացրեց, թե քրեական գործ է հարուցվել լրագրողների և դիտորդների նկատմամբ բռնությունների և Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընտրատեղամասերում լցոնումների փաստերի առթիվ: Այսուհանդերձ, լրագրողների

նկատմամբ իրավախախտումներ իրականացրած անձանցից ոչ մեկը պատասխանատվության չենթարկվեց:

Ներկայացված դեպքերը սպառիչ չեն: Լրագրողների նկատմամբ բռնության դեպքերի իրական թիվը շատ ավելի մեծ է: Սակայն վերլուծելով միայն ներկայացված դեպքերը՝ գալիս ենք եզրակացության, որ Հայաստանում խոսքի ազատությունը դեռ լիարժեք չի կայացել, լրագրողներն անվտանգ չեն կարող իրականացնել իրենց մասնագիտական պարտականությունները: Բռնությունները լրագրողների նկատմամբ խարխլում են խոսքի ազատության և ժողովրդավարության հիմքը:

Բացի լրագրողների նկատմամբ բռնության դեպքերից, Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ են նաև լրագրողների իրավունքների այլ խախտումները, որոնք նույնպես խոչընդոտում են երկրում խոսքի ազատության կայացմանը:

### **3.2. Սպառնալիքները լրագրողների նկատմամբ**

Լրագրողների իրավունքների խախտում են հանդիսանում տարբեր *սպառնալիքները լրագրողների նկատմամբ*, որոնք ևս, ինչպես և լրագրողների նկատմամբ բռնությունները, շատ մեծ վտանգ են պարունակում իրենց մեջ: Վերջին տարիներին լրագրողների նկատմամբ գործադրված սպառնալիքներից արժանահիշատակ են հետևյալները:

**2004 թ.-ի նոյեմբերի 22-ին՝ ժամը 20:40-ի սահմաններում**, բռնկվեց և որոշ ժամանակ անց ամբողջությամբ այրվեց «Հայկական ժամանակ» թերթին պատկանող «Վազ 2121 Նիվա» մակնիշի ավտոմեքենան, որը կայանված էր խմբագրության մուտքի մոտ: Դեպքի առնչությամբ դեկտեմբերի 2-ին հարուցվեց քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի հատկանիշներով («Գույքը դիտավորությամբ փչացնելը և ոչնչացնելը»): Փետրվարի 8-ին քրեական գործը կասեցվեց՝ հանցագործությունը կատարած անձի անհայտ լինելու պատճառաբանությամբ:

**2005 թ.-ի մարտի 31-ի լույս ապրիլի 1-ի գիշերը** Գորիսում հրդեհվեց «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին պատկանող և նրա տան բակում կայանված «Նիվա» մակնիշի ավտոմեքենան:

Հունիսի 1-ին Սյունիքի մարզի դատախազությունը դադարեցրեց Սամվել Ալեքսանյանի մեքենայի հրդեհման գործով քննությունը:

**2006 թ.-ի մայիսի 15-ի գիշերը** անհայտ անձինք քարերով հարվածել էին «Լոռի» հեռուստաընկերության տնօրեն Նարինե Ավետիսյանի «Ֆոլքսվագեն» մակնիշի մեքենային և կոտրել ապակիները:

Դեպքի կապակցությամբ քրեական գործ հարուցվեց, որն էլ երկու ամիս անց կասեցվեց՝ մեղավորներին չհայտնաբերելու պատճառաբանությամբ:

**2007 թ.-ի փետրվարի 8-ին՝ ժամը 20:15-ի սահմաններում**, Երևանում հրդեհվեց «Իմ իրավունքը» խմբագրական թերթի և «Panorama.am» լրատվական կայքի նախագահ, Հայկական PR-ասոցիացիայի ղեկավար Արա Սաղաթելյանի «Նիսան Իքս-Տերրա» մակնիշի ավտոմեքենան: Մեքենայի վրա հայտնաբերվել էր բենզինով լցված շիշ, ևս երկու դատարկ շիշ գտնվում էին մեքենայի հարևանությամբ: Դեպքի կապակցությամբ հարուցվեց քրեական գործ, սակայն մեղավորները չհայտնաբերվեցին:

**2007 թ.-ի դեկտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը՝ ժամը 4:30-ի սահմաններում**, «Չորրորդ իշխանություն» թերթի խմբագրության մուտքի մոտ տեղի ունեցավ պայթյուն: Պայթյունի արդյունքում վնասվել էր դուռը: Դեպքի առնչությամբ հարուցվեց քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի հատկանիշներով («Գույքը դիտավորյալ ոչնչացնելը կամ վնասելը»), սակայն մեղավորները չհայտնաբերվեցին:

**2008 թ.-ի հունվարի 18-ի լույս 19-ի գիշերը՝ մոտավորապես ժամը 5:00-ին**, Գյումրիի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը հրկիզելու փորձ է արվել: Բենզինով թրջված փալասը

հանցագործները դրել են պատուհանագոգին և հրդեհել: Այրվել է պատուհանի մի մասը, ճաքել են ապակիները: Միջադեպի մասին ակումբը չի տեղեկացրել ոստիկանությանը՝ վստահ լինելով, որ, միևնույն է, ոստիկանությունն անկարող է բացահայտել մեղավորներին և պատասխանատվության ենթարկել:

**2008 թ.-ի մարտի 20-ի լույս 21-ի գիշերը՝ ժամը 1:05-ին**, Գյումրիում հրկիզվեց լրագրողների «Ասպարեզ» ակումբի նախագահ Նադեժդա Հակոբյանի «Օպել-Վեկտրա» մակնիշի ավտոմեքենան: Սեպտեմբերի 5-ին Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբը հայտարարություն տարածեց, որում ասվում էր, որ ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչության Շիրակի մարզային քննչական բաժինն ի վիճակի չէ բացահայտել լրագրողական կազմակերպության դեմ իրագործված հանցագործությունը:

Սպառնալիքները ևս բացասաբար են ազդում լրագրողների մասնագիտական պարտականությունների կատարման արդյունավետության վրա, խարխալում են երկրում խոսքի ազատության կայացումը:

### **3.3. Լրագրողների իրավունքների այլ խախտումներ**

**Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել լրագրողների իրավունքների այլ խախտումներ**, որոնց արդյունքում շատերը զրկվել են տեղեկատվություն ստանալու իրավունքից: Անդրադառնալով նաև դրանց մի մասին:

**2003 թ.-ի փետրվարի 19-ին՝** Հանրապետության Նախագահի ընտրությունների օրը, գրանցվեցին լրագրողների իրավունքների մի շարք խախտումներ: Երևանի 122-րդ տեղամասում անձանոթ անձինք խոչընդոտել էին «Շանթ» հեռուստաընկերության աշխատակիցների մասնագիտական պարտականությունների կատարմանը, երբ նրանք փորձել էին նկարել, թե ինչպես է ինչ-որ անձ մի քանի քվեաթերթիկ նետում արկղը: Այդ անձինք խլել էին հեռուստաընկերության աշխատակիցների տեսաերիզը: Նույն տեղամասում հարձակում էր տեղի ունեցել «Այժմ» թերթի թղթակից Գոհար Վեզիրյանի նկատմամբ, ով հայտնաբերել էր լրացված քվեաթերթիկներ և հայտնել ընդդիմադիր թեկնածուի վստահված անձին: Բազմաթիվ այլ ընտրատեղամասերում խախտվել էին նաև այլ լրագրողների իրավունքները, հատկապես շատ էին տուժել «Ա1+»-ի աշխատակիցները, որոնց դուրս էին հրավիրում բազմաթիվ ընտրատեղամասերից և խոչընդոտում նրանց կողմից տեղեկատվության հավաքման գործընթացը:

**2004 թ.-ի մայիսի 4-ին** Կոտայքի մարզի պետավտոտեսչության աշխատակիցները խոչընդոտել են «Առավոտ Թի Վի» հեռուստաընկերության աշխատակիցների պարտականությունների կատարմանը, երբ նրանք մայրաքաղաքում կայանալիք հանրահավաքի նախորդ օրը մեկնել էին Երևան-Սևան մայրուղի՝ ստուգելու համար, թե իրականությանը համապատասխանում են լրագրողների այն բողոքները, որ իրավապահ մարմինները սահմանափակում են բնակչության ազատ տեղաշարժի իրավունքը: Ըստ «Առավոտ» թերթի՝ նկարահանման պահին լրագրողների մեքենան կանգնեցրել էին պետավտոտեսչության աշխատակիցները և որոշ ժամանակ անց իրենց ղեկավարի հետ պարտադրել էին լրագրողներին իրենց տրամադրել տեսաերիզը, սպա՝ նաև մաքրել նրանում տեղ գտած կադրերը:

**2004 թ.-ի ապրիլի 5-ին** ձերբակալվեց «Հայկական ժամանակ» թերթի թղթակից Հայկ Գևորգյանը, ով Աշտարակում նկարահանում էր մայրուղում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ճանապարհի փակման գործընթացը (դա կապված էր Երևանում տեղի ունեցող ընդդիմության հանրահավաքի հետ): Լրագրողի խոսքերով՝ ոստիկանության բաժնում մոտ մեկ ժամ իր հետ դաստիարակչական աշխատանքներ էին իրականացնում:

**2008 թ.-ի փետրվարի 19-ին՝ կեսօրին մոտ**, Երևանի ընտրական տեղամասերից ոչ հեռու, մի քանի երիտասարդների և «Ա1+» հեռուստաընկերության օպերատոր Հովսեփ

Հովսեփյանի միջև հայիոյախառն լեզվակռիվ է սկսվել: Այդ երիտասարդները փորձել են խլել վերջինիս տեսախցիկը: Արդյունքում նրանց հաջողվել է խլել տեսաերիզը և փչացնել:

**2008 թ.-ի մարտի 1-ին և 2-ին** մի շարք խախտումներ են գրանցվել լրագրողների նկատմամբ, երբ նրանց խոչընդոտել են նկարահանել տեղի ունեցող իրադարձությունները: Շատ դեպքերում լրագրողներից վերցրել են տեսախցիկը կամ տեսաերիզը, խոչընդոտել են նրանց մասնագիտական պարտականությունների կատարմանը:

**2008 թ.-ի մայիսի 16-ին՝ ժամը մոտ 16:00-ին**, Գյումրի քաղաքի հարկային տեսչության պետի ծառայողական ավտոմեքենայի վարորդը խոչընդոտել է Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության թղթակից Արմինե Վարդանյանին և օպերատոր Արտյոմ Ադամյանին՝ իրենց մասնագիտական պարտքը կատարելիս: Վարորդը երկու անգամ հարվածել է հարկային տեսչության շենքի առջև նկարահանում կատարող օպերատորի տեսախցիկին, իսկ հետո ճեմասրահից դուրս է արել հեռուստաընկերության թղթակցին: «ԳԱԼԱ»-ի աշխատակիցները տեսանյութ էին պատրաստում Գյումրիի հարկային տեսչության պետի պաշտոնանկության մասին: Միջադեպի առիթով լրագրողները դիմեցին Գյումրիի ոստիկանության բաժնի, որտեղ սկսեցին հետաքննություն անցկացնել, սակայն այս դեպքում էլ ոչ ոք չպատժվեց:

**2008 թ.-ի օգոստոսի 1-ին** Աշտարակ քաղաքում «Հայկական ժամանակ» օրաթերթի աշխատակից Գագիկ Հովակիմյանը բերման է ենթարկվել ոստիկանության բաժանմունք, որտեղ նրան պահել են մոտ մեկուկես ժամ: Երևանում՝ ընդդիմության հանրահավաքի անցկացման օրը, Գագիկ Հովակիմյանը խմբագրության մեքենայով Աշտարակ էր տարել թերթի թղթակից Աննա Զախարյանին՝ քաղաքի իրավիճակը (մասնավորապես տրանսպորտի աշխատանքի ընդհատումները) լուսաբանելու նպատակով: Չնայած խմբագրության պահանջներին՝ ՉԼՄ-ի աշխատակցի նկատմամբ ապօրինաբար բռնություն գործադրած ոստիկանները պատասխանատվության չեն ենթարկվել:

**2008 թ.-ի դեկտեմբերի 21-ին** Հայաստանի հանրային հեռուստաընկերության առաջին ալիքի «Հայլուր» լրատվական ծրագրի նկարահանող խմբին հնարավորություն չեն տվել լուսաբանելու Հայ ազգային կոնգրեսի համագումարը: Ինչպես հաղորդեց «Հայլուրի» թղթակից Աննա Վարդանյանը, Կոնգրեսի արտաքին կապերի պատասխանատուն Հանրային հեռուստաընկերության լրագրողներին խնդրել է լքել այն շենքը, որտեղ անց էր կացվում համագումարը: Լրագրողի խոսքով՝ լուսաբանման այդ արգելքը պատճառաբանվել էր գործող իշխանությունների հանդեպ Հայ ազգային կոնգրեսի վերաբերմունքով: Կոնգրեսի համակարգող Լևոն Զուրաբյանը կատարվածը բնութագրեց որպես պատասխան այն բանի, որ իշխանությունները Հայ ազգային կոնգրեսին համագումարն անցկացնելու համար դահլիճ չեն տրամադրել:

**2009 թ.-ի օգոստոսի 6-ին** ոստիկանությունը խոչընդոտել է Գյումրիի «Լաչինի միջանցք» կոչվող շուկայի առևտրականների բողոքի ակցիան լուսաբանող «Շանթ» տեղական հեռուստաստուդիայի օպերատորի և լրագրողի աշխատանքը: Այս միջադեպի մասին սյուժեն ցուցադրվեց հեռուստաընկերության երևանյան ստուդիայի «Հորիզոն» լրատվական ծրագրում, որտեղ երևում էր, թե ինչպես ոստիկանության Գյումրիի բաժնի պետը ավտո վակում է հեռուստախցիկի օբյեկտիվը, այնուհետև խցիկը խլում օպերատորի ձեռքից:

Հուլիսի 29-ին «Առավոտ» օրաթերթում տեղեկատվություն հրապարակվեց, որ ոստիկանության Գյումրիի բաժնի պետն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

### **3.4. Եզրակացություններ լրագրողների իրավունքների խախտումների բնույթի, շարժառիթների և պատճառների վերաբերյալ**

Ներկայացված դեպքերի ընդհանուր վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի շարք եզրակացություններ լրագրողների իրավունքների խախտումների բնույթի, շարժառիթների և պատճառների վերաբերյալ:

1) Լրագրողների խոսքի ազատության սահմանափակումները շատ դեպքերում ունեն քաղաքական ենթատեքստ: Դրա մասին է խոսում այն փաստը, որ խախտումների մեծամասնությունն արձանագրվում է նախընտրական քարոզչության կամ հենց ընտրությունների փուլում այս կամ այն թեկնածուի կամ նրա ներկայացուցիչների կողմից: Սա խոսում է այն մասին, որ երկրում դեռևս չի զարգացել ողջամիտ քաղաքական պայքար վարելու մշակույթ, և շատ հաճախ թեկնածուներն ընտրողների ձայները շահելու կամ դրանք չկորցնելու համար դիմում են ծայրահեղ քայլերի:

2) Որպես խոսքի ազատության սահմանափակման առանձին շարժառիթ կարելի է արձանագրել թշնամանքը, լրագրողի հետ հաշվեհարդար տեսնելու ցանկությունը, ինչը շատ հաճախ կարող է կապված չլինել քաղաքական գործընթացների հետ: Ինչպես բերված օրինակներից շատերում տեսանք, մի շարք դեպքերում առկա էր լրագրող-պաշտոնատար անձ հակամարտություն:

3) Լրագրողների իրավունքների սահմանափակումներից շատերն օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով այդպես էլ չբացահայտվեցին կամ մեղավորները պատասխանատվության չենթարկվեցին: Կարծում ենք՝ անպատասխանատվության մթնոլորտի հետևողական վերացումը ՀՀ-ում կբարելավի ոչ միայն խոսքի ազատության վիճակը, լրագրողների իրավունքների պաշտպանվածության մակարդակը, այլև խթան կհանդիսանա կոռուպցիայի կրճատման, մարդու իրավունքների պաշտպանվածության, պետական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

4) Լրագրողների իրավունքների խախտումների պատճառ է հանդիսանում նաև երկրում հանդուրժողականության ցածր մակարդակը: Ընդ որում, հանդուրժողականության պակասն առկա է և՛ լրագրողների, և՛ պաշտոնատար անձանց, և՛ իրավապահ մարմինների, և՛ հասարակության այլ ներկայացուցիչների մոտ: Բանն այն է, որ լրագրողները շատ հաճախ անցնում են ողջամտության սահմանը, ներխուժում անձանց մասնավոր կյանքը, տարածում նրանց վերաբերյալ ակնհայտ սուտ տեղեկություններ, բայց դրա հետ մեկտեղ լրագրողների օբյեկտիվ և ճիշտ տեղեկատվության համար շատերն անհարկի ոտնձգություն են կատարում լրագրողների սահմանադրական իրավունքների նկատմամբ: Հանդուրժողականության սերմանումը հասարակության անդամների միջև, մեր կարծիքով, հենց այն գեներ է, որից կարելի է սկսել խոսքի ազատության վիճակի բարելավման գործընթացը: Հանդուրժողականության դրսևորման պայմաններում սույն գեկույցում բերված օրինակներում նկարագրված ցավալի դեպքերը կունենային դրական ընթացք:

5) Լրագրողների իրավունքների սահմանափակումները ՀՀ-ում ունեն բազմաթիվ այլ պատճառներ, որոնցից են, օրինակ, լրագրողների իրավական և ֆինանսական երաշխիքների հարաբերականորեն ցածր մակարդակը, իրավապահ մարմինների արդյունավետ գործունեության հետ կապված խնդիրները, լրագրողական ինստիտուտի և դրա առաքելության վերաբերյալ շատերի ունեցած սխալ պատկերացումները, հասարակության որոշ անդամների կողմից լրագրողներին օգնելու, աջակցելու պատրաստակամության բացակայությունը և այլն: Նշված խնդիրները պահանջում են համակարգային մոտեցում:

6) Երկրում ժամանակ առ ժամանակ գրանցվում են «հանդարտ» ժամանակաշրջաններ, երբ զգալիորեն նվազում են լրագրողների իրավունքների սահմանափակման դեպքերը (օրինակ, այդպես կարելի է բնութագրել 2009 թ.-ի երկրորդ կեսը): Չնայած ակնհայտ է, որ տվյալ «հանդարտ» ժամանակաշրջանը կապված է երկրի քաղաքական հանդարտության

հետ, այնուամենայնիվ, դա հույս է ներշնչում, որ ժամանակի ընթացքում երկրի քաղաքական իրավիճակի կայունացման հետ կապված զգալիորեն կքչանան նաև լրագրողների իրավունքների խախտումները:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել, որ լրագրողների իրավունքների խախտումների պատճառները բազմաթիվ են և բազմաբնույթ, ու դրանք վերացնելու համար անհրաժեշտ է քաղաքական կամք, հետևողական պայքար խախտումների ու դրանց պատճառների դեմ, լրագրողների իրավունքների պաշտպանության օրենսդրական երաշխիքներ և երկկողմանի հանդուրժողականության դրսևորում:

#### **4. Մամուլում խոսքի ազատության սահմանափակման դեպքերի վերլուծությունը**

Մամուլը, լինելով տեղեկատվության փոխանցման ամենահին միջոցներից մեկը, այնուամենայնիվ պահպանում է արդիականությունը, ինչը պայմանավորված է լրատվության միջոցների շարքում մամուլի ունեցած յուրահատուկ դերով ու նշանակությամբ:

Երկար տարիներ մամուլը Հայաստանում ենթարկվել է գրաքննության, և ընթերցողները չեն ստացել իրականությանը համապատասխանող տեղեկատվություն: Իսկ այժմ մամուլն ազատ է, գրաքննության դեպքերը բացառվում են, սակայն անուղղակիորեն մամուլի նկատմամբ ճնշումները դեռևս առկա են:

Մամուլում խոսքի ազատության սահմանափակումները կարող են դրսևորվել տարբեր կերպ՝ հաշվի առնելով մամուլն ընթերցողներին հասու դարձնելու գործընթացի բարդությունը: Մասնավորապես, վերլուծելով վերջին տասը-տասնհինգ տարիներին մամուլի ոլորտում խոսքի ազատության սահմանափակման դեպքերը՝ կարող ենք ընդհանուր առմամբ նշագրել մամուլում խոսքի ազատության սահմանափակման երևույթների ընդհանուր ուղղությունները.

1. Առաջին հերթին դա ուղղակի բռնությունն է կամ բռնություն գործադրելու սպառնալիքները՝ համապատասխան թերթի աշխատակցի նկատմամբ, ինչպես նաև՝ նրանց իրավունքների այլ սահմանափակումները, որոնք ուղղակի ազդեցություն են ունենում նրանց մասնագիտական գործունեության վրա: Տվյալ խնդրին արդեն անդրադարձ կատարվել է սույն գեկույցի համապատասխան բաժնում:

2. Մամուլի գործունեության սահմանափակման հաջորդ ուղղությունը թերթերին ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից թերթերի համար արհեստական խոչընդոտների ստեղծումն է: Այս երևույթը հատկապես մեծ տարածում էր ստացել 90-ականների վերջերին, երբ մենաշնորհի դիրք զբաղեցնող տպագրական ընկերությունները հրաժարվում էին տպագրել այս կամ այն թերթը՝ հաճախ հիմնվելով այդ թերթը հիմնադրած կազմակերպության ունեցած պարտքերի վրա:

Մենաշնորհը կարող է բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն տնտեսության զարգացման, սպառողների շահերի պաշտպանության վիճակի վրա, այլև մեծ վտանգ է հասցնում մամուլի ոլորտում խոսքի ազատության իրականացմանը: Դրական պետք է արձանագրել այն փաստը, որ միջոցներ ձեռնարկվեցին թերթերի տպագրությամբ զբաղվող ընկերությունների մենաշնորհը վերացնելու ուղղությամբ, ինչը մեծապես բարելավեց թերթերի և խոսքի ազատության վիճակը, սակայն սահմանափակման դեպքերն ամբողջությամբ չվերացան: Նշենք նաև, որ ներկայումս մեծ թափով զարգացում են ապրում ինտերնետային թերթերը, իսկ տպագրվող թերթերի մեծամասնությունը հրապարակում են նաև թերթի տվյալ համարի էլեկտրոնային տարբերակը, ինչը մեծապես բարելավում է թերթերի գործունեության արդյունավետությունը և կրճատում է թերթերի կախվածությունը տնտեսական գործունեությամբ զբաղվող տարբեր սուբյեկտներից:

3. Մամուլի գործունեության սահմանափակման հաջորդ ուղղությունը դրսևորվում է հետևյալ կերպ: Թերթի ամբողջ խմբաքանակը կրպակներից գնվում է նույն անձի կողմից, և ընթերցողները հնարավորություն չեն ունենում ծանոթանալ թերթի տվյալ օրվա համարին ու

նրանում տեղ գտած տեղեկատվությանը: Դա հիմնականում կատարվում է այն անձի կողմից, ում վերաբերյալ թերթի տվյալ համարում վարկաբեկող կամ այլ տեղեկատվություն է եղել: Նման դեպքեր բազմիցս գրանցվել են Հայաստանում:

Մասնավորապես՝ **2002 թ.-ի հոկտեմբերի 31-ին** ընթերցողներին չհասավ «Առավոտ» թերթի հերթական համարը: Համարի ամբողջ տպաքանակը փոխանցվել էր «Հայմամուլ»-ին, սակայն թերթերի կրպակներ չէր հասել:

**2003 թ.-ի մարտի 18-ին** ընթերցողները հնարավորություն չունեցան ծանոթանալու Հայաստանի կոմունիստական կուսակցության տպագիր թերթի՝ «Հայաստանի Կոմունիստ»-ի հերթական համարին: Թերթի ամբողջ խմբաքանակը վերցվել էր տպագրությունից՝ անծանոթների կողմից:

«Առավոտ» թերթը նշում է, որ **2005 թ.-ի հոկտեմբերի 17-ին** Գյումրիում խոչընդոտել են թերթի հերթական համարի տարածմանը՝ առգրավելով «Առավոտ»-ը կրպակներից, այցելելով պատճենահանման կետեր՝ դրանց տերերին արգելելով թերթի համարը ձեռք բերած անձանցից պատճենահանման պատվերներ ընդունել:

**2007 թ.-ի սեպտեմբերի 11-ին** գնվեց նաև «Ժամանակ Երևան» օրաթերթի ամբողջ խմբաքանակը: Այդ մասին տեղեկացրեց նույն թերթը՝ իր հաջորդ համարում:

**2007 թ.-ի սեպտեմբերի 26-ին և 28-ին** «Չորրորդ իշխանություն» թերթի հերթական համարները չեն հասել Արտաշատի և մոտակա գյուղերի բնակիչներին:

**2008 թ.-ի մարտի 27-ին** «Ժամանակ Երևան» թերթը հաղորդեց, որ իր տեղեկություններով նախօրեին Կոտայքի մարզում անհայտ անձինք կրպակներից հավաքել էին «Ժամանակ Երևան» և «Չորրորդ իշխանություն» թերթերի մարտի 26-ի համարները:

**2009 թ.-ի օգոստոսի 21-ին** «Հայկական ժամանակ» թերթը տեղեկացրել է, որ 2009 թվականի օգոստոսի 20-ին ինչ-որ մարդիկ Կենտրոն և Էրեբունի համայնքների բազմաթիվ կրպակներից գնել են «Հայկական ժամանակ»-ի խմբաքանակը: Համարը չեն ստացել նաև որոշ բաժանորդներ:

Նշված երևույթը չնայած թերթերի ֆինանսական գործունեության վրա որպես կանոն ազդեցություն չի ունենում, այնուամենայնիվ, անչափ մեծ վնաս է հասցնում խոսքի ազատությանը: Յուրաքանչյուր պաշտոնատար անձ պետք է գիտակցի, որ զբաղեցնելով բարձր պաշտոն, ակամա հետաքրքրություն է առաջացնում իր անձի շուրջ: Բնականաբար, նրա գործունեությունը դառնում է հանրային քննարկման առարկա, որտեղ կարող են հնչել ինչպես գովաբանական, այնպես էլ քննադատական կարծիքներ: Սակայն ՀՀ պաշտոնատար անձանց մեծ մասը դեռևս պատրաստ չէ հանդուրժել իր վերաբերյալ հնչած քննադատական կարծիքները:

4. Չնայած ՀՀ-ում գրաքննությունն արգելված է, սակայն շատ լրատվամիջոցների կարծիքով, 2008 թ.-ի մարտի 1-20-ը երկրում գործող լրատվամիջոցներն ուղղակի ենթարկվեցին գրաքննության:

**2008 թ.-ի մարտի 1-ից** քսանօրյա ժամկետով Երևանում մտցվեց արտակարգ դրություն: «Արտակարգ դրության մասին» Հանրապետության Նախագահի հրամանագիրը մասնավորապես նախատեսում էր, որ զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում: Մարտի 13-ին Հրամանագրում փոփոխություններ մտցվեցին: Մասնավորապես, վերը բերված ՋԼՄ-ների գործունեությանը վերաբերող ենթակետը ձևակերպվեց նոր խմբագրությամբ. «Արգելվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ ակնհայտ սուտ կամ իրավիճակը ապակայունացնող տեղեկատվություն կամ առանց իրագեկման (ապօրինի) միջոցառումների մասնակցության կոչեր, ինչպես նաև նման տեղեկատվություն կամ կոչեր

որևէ այլ եղանակով և ձևով հրապարակելը կամ տարածելը»: Այս փոփոխությունն ուժի մեջ մտավ 2008 թ.-ի մարտի 14-ին:

Գործնականում այդ սահմանափակումները վերածվեցին գրաքննության, ինչը ոչ միայն արգելված է ՀՀ օրենսդրությամբ, այլև նախատեսված չէր Հանրապետության Նախագահի մարտի 1-ի հրամանագրով: Արտակարգ դրության պայմաններում դադարեցին լույս տեսնել «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երևան», «Հրապարակ», «Տարեգիր», «Փակագիծ», «Չորրորդ իշխանություն», «Հայք» և «168 ժամ» թերթերը: Լրագրողների վկայությամբ տպագրության վրա արգելքն իրականացնում էին ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչները:

Խոսքի ազատության իրավունքն անսահմանափակ չէ և անհրաժեշտության դեպքում կարող է պետությանը կամ հասարակությանը սպառնացող վտանգների դեպքում սահմանափակվել, ինչը լիովին արդարացված է և բխում է բոլորի շահերից: Սակայն խոսքի ազատության սահմանափակումը, ցանկացած դեպքում, Սահմանադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան պետք է լինի՝ հստակ հիմնավորված, արդարացված, ինչպես նաև՝ համապարտադիր:

5. Հայաստանի Հանրապետությունում մամուլի վիճակը հետազոտելիս պետք է անդրադարձ կատարել նաև մեկ այլ երևույթի վրա, որը նույնպես կարևոր նշանակություն ունի երկրում խոսքի ազատության վիճակի, դրա կատարելագործման համար: Վերջերս շատացել են մամուլում տեղ գտած հոդվածների համար այդ հոդվածների հեղինակների դեմ ՀՀ դատական ատյաններում հայցեր ներկայացնելու դեպքերը, ինչը խոսում է այն մասին, որ խոսքի ազատությունն անսահմանափակ չէ և չի կարող բացասական ազդեցություն ունենալ այլ անձի պատվի, արժանապատվության, գործարար համբավի վրա: Ուստի, լրագրողները միշտ պետք է ձգտեն հավաստի տեղեկատվություն հասցնել ընթերցողներին և երբեք չփորձեն ինքնահաստատվել՝ այլ անձի (հատկապես պաշտոնատար անձի) պատիվն ու արժանապատվությունը վնասելով:

6. Առաջադիմական պետք է գնահատել նաև այն երևույթը, որ թերթերը դատի են տալիս պետական այն մարմիններին, որոնք ապօրինաբար չեն ներկայացնում թերթի կողմից պահանջված տեղեկատվությունը: Նման դատական գործերը բազմաթիվ են, և դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ, որպես կանոն, դատարանները համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին պարտավորեցնում են տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարելի է արձանագրել, որ չնայած խախտումների բազմազանությանը, լրատվության միջոցների շարքում թերթերը շարունակում են մնալ ամենաազատ լրատվական միջոցներից մեկը, որոնց գործունեության կանխարգելման համար առաջադրվող խոչընդոտները հաղթահարվում են հեշտությամբ՝ ի համեմատություն հեռուստառադիոընկերությունների: Բացի այդ, թերթերում տեղ է գտնում ցանկացած տեսակի և բովանդակության տեղեկատվություն, ինչը շատ հաճախ կարող է անցնել նույնիսկ թույլատրելի սահմանները: Հետևապես կարող ենք եզրակացնել, որ չնայած մամուլում խոսքի ազատության սահմանափակումների բազմազանությանը, այդուամենայնիվ, մամուլը՝ որպես լրատվության միջոց, շարունակում է հարաբերականորեն ազատ լինել:

## **5. Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում խոսքի ազատության ընդհանուր վիճակը**

Հեռուստատեսությունը և ռադիոն զանգվածային լրատվության այն միջոցներն են, որոնք, ունենալով ընդգրկման լայն շրջանակ, մեծ ազդեցություն են ունենում հասարակության բարոյական և հոգեբանական վիճակի վրա և էական նշանակություն ունեն կարծիքի ձևավորման հարցում: Հեռուստատեսությունը և ռադիոյում բազմակողմանի ու օբյեկտիվ



լրատվության բացակայությունը կարող է մեծ վնաս հասցնել ինչպես խոսքի ազատությանը, այնպես էլ քաղաքական համակարգի կայացմանը, տնտեսության զարգացմանը և ընդհանրապես խոչընդոտել երկրում ընթացող ցանկացած դրական տեղաշարժերին: Հատկապես կարևորվում է ազատ և անկախ հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների առկայությունը, որոնք, գերծ լինելով ցանկացած բնույթի ճնշումներից, կարողանում են անկողմնակալ ու օբյեկտիվ տեղեկատվություն մատուցել հասարակության անդամներին՝ գերծ պահելով նրանց ապատեղեկատվությունից, տեղեկատվական վակուումից: Հեռուստատեսության և ռադիոյի կայացման գործում մեծ է պետական իշխանությունների դերը: Օրենսդրական ճիշտ կարգավորումները և ճիշտ քաղաքականությունը կարող են էապես նպաստել խոսքի ազատության պաշտպանության վիճակի բարձրացմանը:

ՀՀ-ում հեռարձակվող լրատվամիջոցների վերլուծությունը վկայում է, որ ոլորտում առկա են ժողովրդավարական իրավական պետության սկզբունքի հետ անհամատեղելի մի շարք երևույթներ, այդ թվում՝ հեռուստաընկերությանը եթերից զրկելու դեպք:

Նման եզրակացությունը բխում է նախընթաց տարիների հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի, մասնավորապես՝ արձանագրված տարբեր խախտումների ուսումնասիրություններից: Ներկայացվելիք դեպքերի մեծ մասը հանդիսանում է Երևանի մամուլի ակումբի և Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կատարած հետազոտությունների արդյունքը:

### **5.1. Հեռուստատեսության և ռադիոյի ներկա վիճակը**

Ըստ ՀՌ-ԱՀ-ի հրապարակած տվյալների՝ ներկայումս ՀՀ-ում ՀՌ-ԱՀ-ի կողմից հատկացված լիցենզիաների հիման վրա գործում են 75 հեռուստաընկերություններ, որոնցից 4-ը գործում են Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում, 23-ը՝ Երևան քաղաքի տարածքում:

ՀՀ-ում գործում է 20 ռադիոընկերություն, որից 3-ը՝ Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում, 14-ը՝ Երևան քաղաքի տարածքում:

ՀՀ-ում գործում են նաև Հանրային հեռուստաընկերությունը, Շիրակի հանրային հեռուստառադիոընկերությունը, միջպետական պայմանագրով հեռարձակվում են «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղի, «Կուլտուրա», «Ռ-ՏՌ-Պլանետա» և «Ռ-ուսական Առաջին» հեռուստաընկերությունների ծրագրերը:

Հեռուստատեսության բնագավառում ՀՌ-ԱՀ-ը վերջին անգամ ազատ կապուղու համար մրցույթ է հայտարարել 2003 թվականի նոյեմբերի 19-ին, իսկ ռադիոյի ոլորտում՝ 2005 թվականի դեկտեմբերի 27-ին:

Դա պայմանավորված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածում ամրագրված դրույթով, համաձայն որի՝ մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթներ չեն հայտարարվում: Այն հեռուստառադիոընկերությունները, որոնց լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև 2011 թվականի հունվարի 21-ը, կարող են լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ ներկայացնել ՀՌ-ԱՀ: Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է հայցվող ժամկետով, բայց ոչ ավելի, քան մինչև 2011 թվականի հունվարի 21-ը: Նման դրույթի նախատեսումը պայմանավորված է ՀՀ-ում հեռուստահեռարձակման թվայնացման գործընթացի ներդրմամբ:

Այս հոդվածը հիմք ընդունելով՝ ՀՌ-ԱՀ-ն արդեն երկարաձգել է 21 հեռուստառադիոընկերությունների հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիաների գործողության ժամկետները՝ մինչև 2011 թվականի հունվարի 21-ը:

## **5.2. Խոսքի ազատության սահմանափակման դեպքերը՝ կապված «Ա1+» հեռուստաընկերության հետ**

5.2.1. 1994 թ.-ին «Ա1+»-ը ստացել է պետական հեռուստատեսության արտոնագիր ունեցող հաճախականություն, որով այն հեռարձակվել է սահմանված ժամանակահատվածում: Ըստ հեռուստաընկերության ներկայացուցիչների՝ 1995 թ.-ին «Ա1+»-ն ունեցել է բարդություններ պետության հետ հարաբերություններում՝ կապված իր հեռարձակման հետ: «Ա1+»-ի պետական հեռարձակման գործունեությունը կասեցվեց 1995 թ.-ի մայիսին:

1995 թվականին հիմնադրվում է «Մելտեքս» ՍՊԸ-ն: «Մելտեքս» ՍՊԸ-ն հիմնադրվեց որպես անկախ հեռարձակող ընկերություն: 1997 թ.-ի հունվարի 22-ին «Մելտեքս» ՍՊԸ-ին ՀՀ կապի նախարարության կողմից տրվեց արտոնագիր, որով թույլատրվեց Երևանում տեղադրել հեռուստահաղորդիչ և իր «Ա1+» հեռուստաալիքի միջոցով հեռարձակվել դեցիմետրային ալիքի կապուղիով: Արտոնագիրը տրվեց հինգ տարի ժամկետով:

1999 թ.-ի սեպտեմբերին «Մելտեքս» ՍՊԸ-ն հիմնեց շուրջօրյա հեռարձակմամբ ինը մասնավոր արտոնագրված մարզային ընկերությունների «Համասփյուռ» ցանցը: Հեռուստատեսության այս ցանցը լայնորեն ճանաչված էր որպես Հայաստանում գործող մի քանի անկախ հեռուստատեսային հեռարձակողներից մեկը: Առաջնային ուշադրություն էր դարձվում անկախ, լավ մշակված լրատվական տեղեկատվություն տարածելուն և վերլուծությանը: Հեռարձակումների բովանդակությունը ներառում էր միջազգային և ներպետական լուրերի վերլուծություններ (30%), գովազդ (32%) և զանազան ժամանցային ծրագրեր: Այդ տարիներին «Ա1+»-ը միակ հեռուստաընկերությունն էր, որ ուներ շուրջօրյա եթեր:

2000-2001 թթ.-ին փոփոխություններ կատարվեցին հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող օրենսդրությունում: 2000 թ.-ի հոկտեմբերին ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով ստեղծվեց մի նոր մարմին՝ ՀՌԱՀ-ը, որին վերապահվեց մասնավոր հեռուստառադիոընկերությունների գործունեության արտոնագրման և վերահսկողության իրականացման լիազորություն: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը սահմանում էր նաև արտոնագրման նոր կարգ, որի համաձայն հեռարձակման արտոնագիր տրվում էր ՀՌԱՀ-ի կողմից անցկացվող մրցույթի միջոցով, ազատ կապուղիների ցուցակին համապատասխան:

2001 թ.-ի ընթացքում գոյություն ունեցող բոլոր արտոնագրերը ժամանակավորապես գրանցվեցին ՀՌԱՀ-ի կողմից՝ մինչև համապատասխան մրցույթների հայտարարումը:

2001 թ.-ի սեպտեմբերի 3-ին ՀՌԱՀ-ը «Մելտեքս» ՍՊԸ-ի արտոնագիրը փոխարինեց նոր արտոնագրով: Նոր արտոնագիր տրվեց 37-րդ կապուղու հեռարձակման համար, որի ժամկետը լրանում էր 2002 թ.-ի հունվարի 22-ին:

Դեկտեմբերի 28-ին ընդունվեց «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը (այսուհետ՝ «ՀՌԱՀ-ի կանոնակարգ»): 2002 թ.-ի հունվարի 24-ին ՀՌԱՀ-ն ընդունեց N4 որոշումը, որով հաստատվեց «Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգը» (այսուհետ՝ «Մրցույթի կարգ»):

2002 թ.-ի փետրվարի 19-ին ՀՌԱՀ-ը հայտարարեց մրցույթ՝ տարբեր հեռարձակող հաճախականությունների, այդ թվում՝ 37-րդ կապուղու համար: «Մելտեքս» ՍՊԸ-ն և երկու այլ ընկերություններ՝ «Շարմ» ՍՊԸ-ն և «Գոֆին Թի ՎԻ» ՍՊԸ-ն, հայտ են ներկայացնում 37-րդ կապուղու համար:

Չնայած այն հանգամանքին, որ «Շարմ» ՍՊԸ-ն նախկինում երբեք չէր գործել հեռուստատեսային հեռարձակման ոլորտում և նրա աշխատանքը հիմնականում երիտասարդների և ուսանողների համար ժամանցային ծրագրեր կազմակերպելն էր, իսկ

հեռարձակման համար հայտի ներկայացման պահին նրա աշխատակիցներից որևէ մեկը չուներ լրագրողի մասնագիտական փորձ, շենք, սարքավորումներ, ֆինանսական կամ տեխնիկական ենթակառուցվածք՝ հեռարձակումը սկսելու համար, 2002 թ.-ի ապրիլի 2-ին ՀՌԱՀ-ն ամփոփեց մրցույթի արդյունքները և վարկանիշային քվեարկության արդյունքներով «Շարմ» ՍՊԸ-ին ճանաչեց 37-րդ կապուղու համար հայտարարված մրցույթի հաղթող: 2002 թ.-ի ապրիլի 3-ին «Ա1+» հեռուստաալիքը դադարեց հեռարձակվել:

«Շարմ» ՍՊԸ-ն հեռարձակման փորձի և բավարար միջոցների բացակայության պատճառով այդպես էլ չսկսեց հեռարձակումը և ինն ամիս անց վաճառեց ընկերության բաժնեմասերի վերահսկիչ փաթեթը այլ իրավաբանական անձի:

2002-2003 թթ.-ի ընթացքում «Մելտեքս» ՍՊԸ-ն մասնակցում է ՀՌԱՀ-ի հայտարարած մի շարք այլ կապուղիների համար մրցույթներին և նրանցից ոչ մեկում հաղթող չի ճանաչվում: ՀՌԱՀ-ի բոլոր որոշումները բառացիորեն սահմանում էին միայն, որ մրցույթում հաղթող են ճանաչվել համապատասխան հեռուստաընկերությունները, և նրանց է տրվում հեռուստահաղորդումների հեռարձակման արտոնագիր:

«Մելտեքս» ՍՊԸ ընկերությունը բազմիցս դիմել է ՀՌԱՀ-ի նախագահին՝ վերջինիս խնդրելով պատճառաբանել մերժումները, սակայն տեղեկացվում է, որ ՀՌԱՀ-ը որոշում է կայացնում միայն կազմակերպությանը հաղթող ճանաչելու և հեռուստահաղորդումների լիցենզիա տալու կամ լիցենզիա տալը մերժելու մասին:

Մրցույթի հստակ չափորոշիչների բացակայության պարագայում, անցկացվող մրցույթները ձևական բնույթ էին կրում: Հաճախ մրցույթից շատ ժամանակ առաջ, արդեն իսկ հանրության լայն շրջանակները վստահ էին հաղթողի՝ որ կազմակերպության լինելու հարցում:

ՀՌԱՀ-ի մրցույթների վերաբերյալ որոշումները, գործողությունը «Մելտեքս» ՍՊԸ-ն բազմիցս բողոքարկել է դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ՀՌԱՀ-ին համապատասխան որոշումները կայացնելուց հետո տասնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել կապուղիների համար մրցույթների հայտերով արտոնագրի տրամադրման մերժման պատճառների մասին:

2004 թ.-ի հունվարի 21-ին և մարտի 23-ին ՀՀ տնտեսական դատարանը «Մելտեքս» ՍՊԸ-ի հայցերը մերժում է՝ անհիմն լինելու հիմքով: «Մելտեքս» ՍՊԸ-ն նյութական իրավունքի խախտման հիմքով բերում է վճռաբեկ բողոքներ, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը մերժում է այդ բողոքները՝ տառացիորեն կրկնելով ՀՀ տնտեսական դատարանի համապատասխան եզրահանգումները:

«Մելտեքս» ՍՊԸ-ն 2004 թ.-ի օգոստոսի 27-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն գանգատ է ներկայացնում Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2008 թվականի հունիսի 18-ին «Մելտեքս ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» գործով վճիռ է կայացնում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռում է, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Եվրոպական դատարանը ճանաչում է, որ «Մելտեքս» ՍՊԸ-ի դիմումները (հայտերը) բոլոր յոթ կապուղիներով (25-րդ դեցիմետրային, 31-րդ, 39-րդ և 51-րդ դեցիմետրային, 3-րդ մետրային և 63-րդ դեցիմետրային և 56-րդ դեցիմետրային) հեռարձակման իրավունք՝ արտոնագիր ստանալու մասին, փաստացի մերժվել են ՀՌԱՀ-ի կողմից, և այդ մերժումները հանդիսացել են միջամտություն՝ «Մելտեքս» ՍՊԸ-ի տեղեկատվության և գաղափարներ տարածելու ազատությանը: Որպես խախտման հիմք

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչել է ՀՌԱՀ-ի որոշումների պատշաճ պատճառաբանված չլինելը:

Եվրոպական դատարանը նշում է նաև, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից հեռարձակման բնագավառում ընդունված ուղենիշները պահանջում են արտոնագրման ընթացակարգը կարգավորող նորմերի բաց և թափանցիկ կիրառում և հատկապես առաջարկում են, որ կարգավորող մարմինների կողմից կայացված բոլոր որոշումները լինեն պատշաճ հիմնավորված: Դատարանը հաշվի է առել 2004 թ.-ի հունվարի 27-ի բանաձևում Հայաստանի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կատարած համապատասխան եզրահանգումները, որտեղ վերջինս նշել էր, որ գործող օրենքի անհատակության<sup>1</sup> հետևանքով ՀՌԱՀ-ին բացահայտ ինքնահայեցողական լիազորություններ են տրված: Եվրոպական դատարանը գտավ, որ արտոնագրման այն ընթացակարգը, որով արտոնագրող մարմինը չի պատճառաբանում իր որոշումները, պետական մարմնի կողմից խոսքի ազատության հիմնարար իրավունքին կամայական միջամտություններից բավարար պաշտպանություն չի ապահովում:

Արդյունքում Եվրոպական դատարանը վճռեց, որ Հայաստանի Հանրապետությունը «Մեկտեքս» ՍՊԸ-ին պետք է վճարի 20,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում և 10,000 եվրո՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում:

Եվրոպական դատարանի վճիռն ուժի մեջ մտավ 2008 թ.-ի սեպտեմբերի 17-ին:

«Մեկտեքս» ՍՊԸ-ն 2008 թ.-ի դեկտեմբերի 17-ին դիմումներ է ներկայացնում ՀՀ վճռաբեկ դատարան՝ նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 2004 թ.-ի փետրվարի 27-ի և 2004 թ.-ի ապրիլի 23-ի քաղաքացիական գործով կայացրած որոշումները վերանայելու պահանջով: «Մեկտեքս» ՍՊԸ-ն պահանջում էր ճանաչել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված տեղեկատվության և գաղափարներ տարածելու ազատության իրավունքի խախտման փաստը, վերացնել բոլոր 7 կապուղիների վերաբերյալ ՀՌԱՀ-ի կայացրած որոշումները և վերականգնել նախկին դրությունը՝ պարտավորեցնելով ՀՌԱՀ-ին հայտարարել համապատասխան մրցույթներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2009 թ.-ի փետրվարի 19-ին կայացրած երկու որոշումներով օրինական ուժի մեջ է թողել վիճարկվող դատական ակտերը, իսկ «Մեկտեքս» ՍՊԸ-ի բողոքները՝ մերժել: Այդ որոշումներով պատճառաբանվել է, որ սույն գործի վերաբերյալ կայացված Եվրոպական դատարանի վճռով, բացի փոխհատուցման գումարի վճարման պարտավորությունից, արձանագրվել է միայն ՀՌԱՀ-ի չպատճառաբանված որոշումների անթույլատրելիությունը: Հետևաբար, բողոք բերած անձի ներկայացրած պահանջները, այն է՝ այլ ընկերությանը հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշման անվավեր ճանաչումը, ինչպես նաև անցկացված մրցույթում «Մեկտեքս» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելը և արտոնագիր տալը չեն բխում Եվրոպական դատարանի որոշման տրամաբանությունից:

Վճռաբեկ դատարանը «Մեկտեքս» ՍՊԸ-ի նկատմամբ, ի թիվս այլոց, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>28</sup>-րդ հոդվածը՝ համաձայն որի.

«Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու արդյունքում դատարանն իրավասու է՝

- 1) նախորդ դատական ակտը թողնել ուժի մեջ, բողոքը՝ առանց բավարարման.
- 2) փոփոխել դատական ակտն ամբողջությամբ կամ մի մասով.
- 3) գործը կարճել ամբողջությամբ կամ մի մասով»:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ «Մեկտեքս» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառված դրույթները, մի շարք հոդվածների հետ միասին, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր էին ճանաչված եղել 09.09.2008թ ՍԴՌ-758

<sup>1</sup> Տե՛ս, սույն զեկույցի նախորդ գլուխը:

որոշմամբ, այսինքն՝ Վճռաբեկ դատարանը կիրառել է ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված և հետևաբար՝ իրավաբանական ուժ չունեցող նորմ:

2009 թ.-ի օգոստոսի 29-ին «Մելտեքս» ՍՊԸ-ն դիմում է ներկայացնում ՀՀ սահմանադրական դատարան՝ պահանջելով հակասահմանադրական ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>28</sup>-րդ հոդվածը, որով խախտվում է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

2010 թ.-ի փետրվարի 23-ին ՀՀ սահմանադրական դատարանը որոշում կայացրեց տվյալ գործով վարույթը կարճել, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՌ-758 որոշմամբ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>28</sup>-րդ հոդվածն արդեն ճանաչվել է հակասահմանադրական, սակայն դեռևս ՀՀ ազգային ժողովի կողմից չի համապատասխանեցվել Սահմանադրությանը: ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրեց, որ սպառված չպետք է համարվի սույն գործի առարկայի շրջանակներում իրավասու դատարան դիմելու շահագրգիռ անձանց իրավունքը:

Ընդհանրացնելով «Ա1+»-ին եթերից գրկելու և դատական ատյաններում այդ հարցը վիճարկելու հետ կապված վեճերը՝ պետք է նշել, որ փաստվեց ՀՌ-ԱՀ-ի գործունեության մեջ կամայականության, իսկ դատարանների՝ կողմնակալ, աչառ գործելու հանգամանքը: «Ա1+»-ի բացակայության պայմաններում որոշակիորեն տուժեց եթերային բազմակարծությունը:

**5.2.2.** Անդրադառնանք նաև «Ա1+»-ի հետ կապված մի շարք այլ հատկանշական իրադարձությունների, որոնք ևս կարևոր տեղեկատվություն են պարունակում «Ա1+»-ին հետևողականորեն եթեր չտրամադրելու մասին:

2005 թ.-ի փետրվարի 14-ին ՀՌ-ԱՀ-ն ամփոփեց հեռուստառադիոհեռարձակման արտոնագրման՝ 2004 թվականի սեպտեմբերի 16-ին և 17-ին հայտարարված մրցույթների արդյունքները: Առավել հետաքրքիր էին Երևանի երկու՝ 100,6 ՄԳՀ և 101,1 ՄԳՀ, հաճախականությունների մրցույթները: Դրանց հավակնորդների թվում էր նաև «Էմ-Էս Էքսպլորեր» ՍՊԸ-ն, որի հիմնադիրներն էին «Ա1+»-ը և «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնը: ՀՌ-ԱՀ-ի քվեարկությամբ «Էմ-Էս Էքսպլորեր»-ը չհաղթեց մրցույթը:

2006 թ.-ի մայիսի 25-ին ՀՌ-ԱՀ-ն ամփոփեց նաև հեռուստառադիոհեռարձակման արտոնագրման՝ 2005 թվականի դեկտեմբերի 27-ին հայտարարված մրցույթների արդյունքները՝ 90,3 ՄԳՀ և 90,7 ՄԳՀ հաճախականությունների վերաբերյալ: Դրանց հավակնորդների թվում էր նաև «Մելտեքս» ՍՊԸ-ն: ՀՌ-ԱՀ-ի քվեարկությամբ «Մելտեքս»-ը չհաղթեց մրցույթը: Այսպիսով, ՀՌ-ԱՀ-ն արդեն տասներկուերորդ անգամ «Ա1+»-ին հաղթող չճանաչեց:

### **5.3. «Ազատություն» ռադիոկայանի գործունեության խոչընդոտների վերլուծությունը**

«Ազատություն» ռադիոընկերությունն այսօր հեռարձակվող լրատվամիջոցների շարքում դիտարկվում է որպես ամենաօբյեկտիվ և բազմազան տեղեկատվություն մատուցող ընկերություն:

Ռադիոընկերությունը, բացի ռադիոհաղորդումներից, նաև հեռուստատեսային հաղորդումներ էր պատրաստում, որոնք ցուցադրվում էին տարբեր հեռուստաընկերությունների եթերներով:

2004 թ.-ից սկսած տարբեր հեռուստաընկերություններ տարբեր պատրվակներով սկսեցին խզել «Ազատություն» ռադիոընկերության կողմից պատրաստված հեռուստահաղորդումներն իրենց եթերում տեղադրելու վերաբերյալ պայմանագրերը:

2004 թ.-ի հոկտեմբերի 15-ին «Ազատություն» ռադիոընկերությունը տարածեց մամուլ հաղորդագրություն՝ կապված «Կենտրոն» հեռուստաալիքից «Ազատություն» հաղորդման դուրսբերման հետ, որը պատրաստվում էր «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության կողմից:

Հոկտեմբերի 21-ին «Կենտրոն» հեռուստաընկերության ղեկավարությունը հայտարարեց, որ «Ազատությանը» եթերից հանելու որոշումը կայացվել է զուտ կոմերցիոն նպատակներից ելնելով:

2007 թ.-ի հունիսի 27-ին ՀՀ ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում քննարկման ներկայացվեցին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերը: Այդ օրինագծերից առաջինով արգելվում էր այլ հեռուստաընկերությունների գործունեությունը հանրային հեռուստա և ռադիոընկերություններում, իսկ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը սահմանում էր, որ Հայաստանի հեռուստառադիոընկերությունները ազգային կամ արտասահմանյան ՉԼՄ-ների խմբագրությամբ յուրաքանչյուր հաղորդաշարի համար պետք է վճարեն պետական տուրք՝ 70 հազար դրամի չափով:

ՉԼՄ-ների և փորձագետների կողմից կարծիք հայտնվեց, որ օրինագծերի նպատակը «Ազատ Եվրոպա» ռադիոյի հայկական ծառայության/ «Ազատություն» ռադիոյի վերահեռարձակումն արգելելն է Հանրային ռադիոյով, որն իրականացվում է պայմանագրային հիմունքներով:

Հուլիսի 3-ին ՀՀ ԱԺ-ն քվեարկեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծերը, սակայն դրանք չընդունվեցին:

Հուլիսի 6-ին Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը որոշեց օգոստոսի 9-ից դադարեցնել Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով հայրենական և արտասահմանյան ծրագրերի հեռարձակումը:

Սեպտեմբերի 1-ից դադարեցվեց «Ազատության» հեռարձակումը Հայաստանի հանրային ռադիոյով: Հաղորդումներն արդեն օգոստոսի 15-ից սկսել էին հեռարձակվել «Ար-Ռադիո-Ինտերկոնտինենտալ»-ի կողմից՝ համաձայն նրա հետ կնքած պայմանագրի: «Ազատություն» ռադիոյի հայկական ծառայության տնօրենը մտավախություն հայտնեց, որ հեռարձակող ռադիոընկերության փոփոխությունն էականորեն կկրճատի «Ազատության» լսարանը, քանի որ «Ար-Ռադիո-Ինտերկոնտինենտալ»-ն ունի 23 ռադիոհաղորդակ, իսկ Հայաստանի հանրային ռադիոն՝ 80:

Փաստորեն, «Ազատություն» ռադիոկայան հայկական ծառայությունը, լինելով բազմակարծություն և տեղեկատվության բազմազանություն ներկայացնող լրատվական միջոց, որոշակի բարդություններ ունեցավ իր խոսքի ազատության իրականացման գործընթացում:

#### **5.4. Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում խոսքի ազատության հետ կապված արժանահիշատակ մի շարք այլ դեպքերի վերլուծությունը**

2003 թ.-ի փետրվարի 23-ին «Շանթ» հեռուստաընկերությունը եթերից հանեց «Գիտակ» հաղորդաշարը, որը պատրաստվում էր «Ինտերնյուս» կազմակերպության կողմից: «Գիտակ»-ը ցուցադրվում էր 2001 թ.-ից, սակայն առաջին անգամ եթեր չհեռարձակվեց: Այդ օրվա հաղորդումը նվիրված էր փետրվարի 19-ի ՀՀ նախագահական ընտրություններին, մասնավորապես՝ քվեարկության և ձայների հաշվարկի ժամանակ տեղի ունեցած խախտումներին: Դրա մասին տեսանյութերը պատրաստվել էին «Ա1+»-ի հեռուստալրագրողների կողմից:

2004 թ.-ի ապրիլի 9-ից Հայաստանում դադարեցվեց ռուսական «HTB» հեռուստաընկերության հեռարձակումը: Ըստ «Պարադիզ» ընկերության հայտարարության՝ հեռուստաընկերության հեռարձակման դադարեցումը տեղի էր ունեցել տեխնիկական պատճառներով՝ կապված հեռուստահաղորդիչի անսարքության հետ: Հայաստանում կարծիքներ էին հայտնվում, որ տեխնիկական խոչընդոտները պատահական չէին առաջացել, այլ կապված էին այն փաստի հետ, որ «HTB»-ն պարբերաբար լուսաբանում էր Երևանում տեղի ունեցող հանրահավաքները:

Հունիսի 14-ին ՀՌԱՀ-ը որոշեց Երևանի 23-րդ հաճախականությունը, որով հեռարձակվում էր «HTB» հեռուստաալիքը, տրամադրել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝ ռուսական «Կուլտուրա» հեռուստաալիքը վերահեռարձակելու նպատակով: 2005 թ.-ի նոյեմբերի 11-ին Ռադիո «Հայ»-ի գործադիր տնօրենը հայտարարեց Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոնի (ՀՀԿ) դեմ իրենց բողոքի մասին: Վերջինս անհիմն կերպով մի շարք ծառայությունների դիմաց վճար էր պահանջում: ՀՀԿ-ի հետ վեճը սկսվել էր այն բանից հետո, երբ 2005 թ.-ի փետրվարին Ռադիո «Հայ»-ը հաղթող էր ճանաչվել ՀՌԱՀ-ի հայտարարած երկրի տարբեր քաղաքներում 20 FM հաճախությունների փաթեթի հեռարձակման լիցենզավորման մրցույթում, և այդ ռադիոկայանների շահագործման իրավունք ստանալու համար ՀՀԿ-ն ռադիոընկերությունից պահանջել էր վճարել 26 մլն դրամ: Սակայն ըստ Ռադիո «Հայ»-ի՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 48-րդ և 53-րդ հոդվածների համաձայն ՀՀԿ-ն ընդհանրապես չպետք է որևէ վճար գանձի:

2006 թ.-ի նոյեմբերի 22-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանում հեռուստառադիոհեռարձակման թվային համակարգ ներդնելու վերաբերյալ նախագծի քննարկում: Միջոցառումը կազմակերպվել էր ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի, ԵԱՀԿ-ի գրասենյակի ՁԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցչի, Բաց հասարակության ինստիտուտի ջանքերով, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության մասնակցությամբ: Փաստաթուղթը մշակվել էր Կառավարության հանձնարարությամբ: Փորձագետների կարծիքով թվային համակարգի գործարկումն ընդհանուր առաջադիմական քայլ կլինի Հայաստանի համար: Հնչեցին նաև կարծիքներ՝ թվային համակարգի էական թերությունների և բացթողումների վերաբերյալ:

Մասնավորապես, նախագծով նախատեսվում էր հեռարձակման արտոնագրերի տրամադրման դադարեցում՝ 2007 թ.-ի հունվարից: Ոչ լիարժեք իրավական կարգավորման արդյունքում ստեղծվում էր մի իրավիճակ, որ գործող հեռուստառադիոալիքները պետք է դադարեցնեն իրենց գործունեությունը, իսկ թվայինը դեռ չէր ստեղծվում: Բացի այդ, գործի է դրվում «սոցիալական փաթեթ» հասկացությունը, այսինքն՝ հասարակության կարիքավոր խավերին դրտացիաների տրամադրումը, հանրային և մասնավոր հեռուստաալիքների նվազագույն քանակը ստանալու համար: Իսկ տվյալ փաթեթում ընդգրկվող մասնավոր հեռուստաընկերությունները որոշելու է ՀՀ կառավարությունը: Շատերի կարծիքով սա անկախ հեռարձակման սկզբունքի խախտում է, քանի որ նման որոշումներ կայացնելու իրավունք պետք է ունենա կարգավորող մարմինը, այլ ոչ թե՝ Կառավարությունը: 2007 թ.-ի հունվարի 19-ին ՀՀ Նախագահը կարգադրություն ստորագրեց Հանրային հեռուստաընկերության խորհրդի (ՀՀԽ) թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ, քանի որ լրացել էր ՀՀԽ նախագահ Ալեքսան Հարությունյանի լիազորության ժամկետը: Մրցույթի հայտարարությունում նշվում էր, որ ՀՀԽ անդամի պաշտոնին չեն կարող հավակնել հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների ղեկավարները, ինչպես նաև այն անձինք, ովքեր պայմանագրային հարաբերությունների մեջ են հեռուստառադիոընկերությունների հետ: Այդ կապակցությամբ բազմաթիվ կարծիքներ հնչեցին, որ դրանով հեռուստառադիոհեռարձակման բազմաթիվ արհեստավարժ մասնագետների

հնարավորություն չի տրվում մասնակցելու մրցույթին, ինչը կարելի է համարել խտրական վերաբերմունք:

Մրցույթի արդյունքներն ամփոփվեցին մրցույթային հանձնաժողովի կողմից՝ 2007 թ.-ի հունվարի 31-ին: Մրցույթին մասնակցելու համար տրվել էր միայն մեկ հայտ, այն էլ՝ Ալեքսան Հարությունյանի կողմից: Մրցույթում հաղթող ճանաչվեց Ալեքսան Հարությունյանը և Հանրապետության Նախագահի հրամանագրով 6 տարի ժամկետով նշանակվեց ՀՀԽ անդամ, որից հետո էլ վերընտրվեց Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ:

2008 թ.-ի սեպտեմբերին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարվեց, որը նախատեսում է մինչև 2010 թ.-ի հուլիսի 20-ը հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթ չհայտարարել: Համապատասխան օրինագիծը մշակել էր ՀՀ կառավարությունը: Նախագիծը ներառվեց ՀՀ ԱԺ սեպտեմբերի 8-ի նիստի օրակարգում (ընդ որում, միայն այդ օրը փաստաթուղթը մատչելի դարձավ հասարակությանը) և արդեն սեպտեմբերի 10-ին արագացված ընթացակարգով ընդունվեց խորհրդարանի կողմից: Իշխանությունները գործող օրենքում այդ լրացման անհրաժեշտությունը հիմնավորում էին Հայաստանում հեռարձակման ոլորտի թվայնացման անցնելու նախապատրաստությամբ: Լրագրողական կազմակերպություններն այդ կապակցությամբ կարծիք հայտնեցին, որ Կառավարությունը միայն հեռարձակման դաշտում գոյություն ունեցող հեշտությամբ կառավարվող վիճակը պահպանելու նպատակ ունի:

2010 թ.-ի փետրվարի 15-ին ՀՌԱՀ-ը որոշում ընդունեց հաստատել էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների չափորոշիչները:

Այս առնչությամբ ՀՌԱՀ նախագահը փետրվարի 9-ին լրագրողներին տեղեկացրել էր, որ իրենք ոչ թե պատրաստվում են արգելել կամ թույլատրել այս կամ այն հաղորդումը եթեր հեռարձակել, այլ սահմանելու են չափորոշիչներ, թե որ հաղորդումները պետք է եթեր հեռարձակվեն ցերեկն ու երեկոյան, որ հաղորդումները՝ կեսգիշերից հետո:

Հաստատված չափորոշիչներով տրվում են էրոտիկ բնույթի հեռուստահաղորդումների, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների նկարագրությունները: Փաստաթուղթը սահմանում է, որ ժամը 6.00-24.00-ն ընկած ժամանակահատվածում ցուցադրվող հաղորդումները չեն կարող պարունակել էրոտիկ դրվագներ և սեռական գործողության տեսարաններ: Փաստաթղթի ընդունումից հետո շատ հեռուստաընկերություններ ստիպված եղան փոփոխություններ մտցնել իրենց կողմից հեռարձակվող ծրագրերում՝ ՀՌԱՀ-ի կողմից վարչական պատասխանատվության չենթարկվելու համար:

### **5.5. Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում իրավիճակի ամփոփում**

Այսպիսով, վերլուծելով հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում վերջին 15 տարիներին ՀՀ-ում տեղի ունեցած իրադարձությունները՝ կարելի է անել հետևյալ հետևությունները.

1. Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատության ոլորտում առկա են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, բազմակողմանի լրատվություն քարոզող հեռուստա և ռադիոընկերությունները իրենց գործունեությունն իրականացնելիս հանդիպում են մի շարք խոչընդոտների, ինչն էլ բացասաբար է ազդում խոսքի ազատության զարգացման վրա: Այս մասին են նաև վկայում ՀՀ-ում մոնիտորինգ իրականացրած միջազգային



կազմակերպությունների ամենամյա զեկույցները, որոնք բացասաբար են անդրադառնում ՀՀ-ում խոսքի ազատության վիճակին՝ հատկապես հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում:

2. Նկարագրված դեպքերը ցույց են տալիս, որ առկա է նաև այլ խնդիր, որն անմիջականորեն անդրադառնում է երկրում խոսքի ազատության վիճակի վրա: Ներկա պայմաններում ՀՌԱՀ-ի անկախությունը միանշանակ չի ընկալվում: Այս կապակցությամբ պետք է նշել, որ իրավիճակը էականորեն հստակեցրեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ «Սելտեքս» ՍՊԸ-ի հայցով հրապարակած վճռում, որն ընդունեց ՀՀ պետական մարմինների կողմից չհիմնավորված որոշումների կայացման փաստը և խոսքի ազատության սահմանափակումների առկայությունը:

3. ՀՌԱՀ-ը դրսևորում է պասիվություն՝ հեռուստատեսության և ռադիոյի ասպարեզում որակյալ հաղորդումների պակասը եթերում լրացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու գործում: Դա հատկապես ակնառու էր դարձել վերջին տարիներին, երբ եթերը ողողված էր անհասկանալի ու անընդունելի բովանդակությամբ հաղորդումներով, ֆիլմերով, սերիալներով և այլն: Առաջադիմական պետք է համարել ՀՌԱՀ-ի կողմից վերջերս ընդունված չափորոշիչները, ինչը մեծապես կրճատեց նման հաղորդումների թիվը եթերում: Սակայն անելիքներն այս ոլորտում բազմաթիվ են:

4. Բազմաթիվ են հեռուստաընկերությունների կողմից օրենսդրության խախտման փաստերը (հատկապես «Գովազդի մասին» ՀՀ օրենքի), որպիսի հանգամանքն ապացուցվում է մի շարք կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտություններով, սակայն այս ոլորտում վերջին տարիներին հեռուստաընկերությունները գրեթե պատասխանատվության չեն ենթարկվում:

Թվարկենք հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում խոսքի ազատության վիճակի բարելավմանը նպաստող մի շարք ուղղություններ, որոնց հետևողական իրականացումը կնպաստի խոսքի ազատությանը: Դրանք են՝

- ՉԼՄ-ների դերի բարձրացումը երկրի հասարակական կյանքում.
- Տարբեր ՉԼՄ-ների համագործակցությունը.
- Տեխնիկական զարգացումը.
- Գովազդային քաղաքականության կատարելագործումը:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով ներկայացված նյութը՝ կարելի է արձանագրել, որ խոսքի ազատության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում առկա են բազմաթիվ խնդիրներ, և բարեփոխումների ընթացքը պետք է արագացնել: Մասնավորապես, լրագրողները ենթարկվում են բռնության՝ իրենց մասնագիտական պարտականությունների կատարման համար, և մեղավորները, որպես կանոն, դրա համար պատասխանատվության չեն ենթարկվում, բազմաթիվ այլ ձևերով սահմանափակվում են անձանց՝ տեղեկություններ ստանալու իրավունքը և այլն: Ներկա պայմաններում խոսքի ազատության ոլորտում տիրող իրավիճակը շատ մտահոգիչ է ու պահանջում է անհապաղ միջոցների ձեռնարկում՝ առկա բացասական ազդեցությունը որոշակիորեն մեղմելու համար:

Խոսքի ազատության բարելավմանն ուղղված ձեռնարկվելիք միջոցառումները կարելի է բաժանել երկու խմբի՝ կարճաժամկետ և երկարաժամկետ: Կարճաժամկետ միջոցառումները, թեև լիովին չեն լուծելու խնդիրը, սակայն տվյալ փուլում հնարավորինս կբարելավեն խոսքի ազատության մակարդակը: Սակայն գլխավորը երկարաժամկետ միջոցառումների ձեռնարկումն է, որոնք թեև դանդաղ, սակայն արմատականորեն կփոխեն ստեղծված իրավիճակը, հիմք կհանդիսանան հետագայում կայացած խոսքի ազատության համակարգ ունենալու համար:

1. Կարճաժամկետ միջոցառումների համատեքստում անհրաժեշտ է մշակել խոսքի ազատության և հատկապես լրատվության ոլորտում օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը որոշ չափով կնվազեցնի խոսքի ազատության կայացմանը խոչընդոտող օրենսդրական դրույթների առկայությունը և հակառակը՝ լրացուցիչ դրույթներ կնախատեսի՝ երաշխավորելու ոլորտի զարգացումը: Սակայն հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում նման օրենսդրական փոփոխությունների փորձը՝ անհրաժեշտ է փոփոխությունների մշակման գործընթացի հետ կապված մի շարք պարտադիր պահանջների ամրագրումը: Մասնավորապես, նախկինում օրենսդրական փոփոխություններով ոչ միայն չէր բարելավվում խոսքի ազատության ոլորտում տիրող իրավիճակը, այլև իրավական ակտերում տեղ էին գտնում ավելի կասկածելի ու վտանգավոր բովանդակությամբ նորմեր, որոնք իրենց բացասական ազդեցությունն էին ունենում խոսքի ազատության զարգացման վրա: Ուստի տվյալ խնդրի հետ կապված՝ կարևորվում է ցանկացած օրենսդրական փոփոխության նախագծերի քննարկմանը հասարակության լայն շրջանակներին մասնակից դարձնելը, ինչպես նաև՝ փոփոխությունների մշակման բուն գործընթացում լրատվության միջոցներից, հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ ունենալը: Դրանով կապահովվի ցանկացած նախագծի վերաբերյալ բազմակարծությունը, ինչն էլ կնվազեցնի անցանկալի նորմերի ընդունումը և հետագա կիրառումը: Օրենսդրական փոփոխությունների առումով կարևորվում է նաև այդ փոփոխություններով հետապնդվող կոնկրետ նպատակների գիտակցումը: Հաճախ ականատես ենք եղել, որ այս կամ այն փոփոխությունը հետապնդել է նեղանձնական նպատակներ կամ ծայրահեղ դեպքում եղել է ինքնանպատակ, սակայն ցանկացած փոփոխություն պետք է միտված լինի առաջին հերթին հասարակության շահերին, նրանց ընդհանուր բարեկեցությանը:

Օրենսդրական փոփոխությունները պետք է ուղղված լինեն առկա խնդիրները լուծելուն, որոնք հիմնականում պետք է ընթանան հետևյալ ուղղություններով.

- Խոսքի ազատության անհարկի սահմանափակման իրավական երաշխիքների հստակ սահմանումը և հստակեցումը: Ներկայումս այսպիսի երաշխիքներ սահմանված են, սակայն ոչ այն ակտերում, որոնցում դա պետք է արվի: Բացի այդ, խոսքի ազատության սահմանափակման հիմքերն այդքան էլ հստակ չեն, ինչն էլ արդեն գործնականում ապացուցվել է, և խոսքի ազատությունը բազմիցս անհարկի սահմանափակվել է: Կարևորվում

է նաև խոսքի ազատության ոլորտում տեղի ունեցող խախտումները բացահայտելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու իրավական հստակ մեխանիզմների սահմանման հարցը:

- Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության ազգային խորհրդի կազմավորման և գործունեության կարգի փոփոխում: Այս մարմիններում պետք է ընդգրկվեն ոլորտից տեղյակ անկախ անձինք, ովքեր հնարավորություն ունեն անկողմնակալ և արդյունավետ կատարել իրենց գործը, բացի այդ, այս մարմինները պետք է օժտվեն անհրաժեշտ իրավասությամբ՝ ոլորտի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու առումով:

- Խոսքի ազատության ոլորտի ենթաօրենսդրական բազայի կատարելագործում: Այժմ մեծ անհրաժեշտություն է զգացվում բազմաթիվ ենթաօրենսդրական ակտերի ընդունման համար, որոնք, նախատեսելով ընթացակարգային նորմեր, մեծապես կհեշտացնեն լրատվության միջոցների, քաղաքացիների, այլ կազմակերպությունների կողմից անհրաժեշտ տեղեկություններ ստանալու գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում ցանկացած օրենսդրական նախաձեռնություն չպետք է տեղի ունենա առանձնացված, մյուս պետությունների համապատասխան իրավական ակտերից կտրված: Զանգի որ կան պետություններ, որոնք խոսքի ազատության ոլորտում հասել են որոշակի նվաճումների, ապա ցանկալի է, որ Հայաստանի Հանրապետությունում առանձնակի ուշադրության արժանանա խոսքի ազատության ոլորտում միջազգային դրական փորձը: Ընդ որում, առավել կարևորվում է խոսքի ազատության կրողներ հանդիսացող պետությունների կողմից խոսքի ազատության ոլորտում որդեգրած սկզբունքների ճիշտ գնահատումը և Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառումը՝ համադրելով առկա առանձնահատկությունների հետ:

Բացի այս ուղղությունները, կան նաև բազմաթիվ այլ խնդիրներ, որոնց սույն գեկույցում անդրադարձ է կատարվել:

2. Օրենսդրական փոփոխություններն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են խոսքի ազատության ոլորտում առկա բացասական երևույթների դեմ պայքարելու համար: Դեռ ավելին, ներկա իրավիճակում որքան էլ կատարյալ լինի օրենսդրությունը, շատ դեպքերում խոսքի ազատության սահմանափակումները կշարունակեն տեղի ունենալ: Դա պայմանավորված է երկրում տիրող քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական և այլ իրավիճակներով, ուստի, մյուս երևույթների դեմ անհրաժեշտ է համակարգային պայքար մղել: Մասնավորապես, խոսքի ազատության բարելավմանը կնպաստի հասարակության իրավագիտակցության բարձրացումը, հանդուրժողականության սերմանումը, արատավոր երևույթների դեմ միահամուռ պայքարելու մղումը: Դրանք, ըստ էության, նաև խոսքի ազատության բարելավման երկարաժամկետ միջոցառումներ են, և դրանց իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերական և նպատակաուղղված ջանքերի գործադրում թե՛ պետության, թե՛ շահագրգիռ կազմակերպությունների կողմից:

Այսպիսով, խոսքի ազատության ոլորտի բարելավումը պետք է ընթանա հասարակական-քաղաքական այլ խնդիրների լուծմանը զուգահեռ, քանի որ, ինչպես գեկույցում բազմիցս նշվել է, խոսքի ազատությունը սերտորեն կապված է բազմաթիվ այլ երևույթների հետ, և նրա զարգացումն՝ ընդհանուր համակարգից անջատ, անիրականանալի է: